ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿԱՐՈ ՀԱՄԼԵՏԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը. 00. 02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր Վ.Բ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ 1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 8

§1.1 Ազգային անվտանգության էությունը, նպատակը և խնդիրները..... 8

§1.2 Տնտեսական անվտանգությունն ազգային անվտանգության համակարգում..... 17

§1.3 Տնտեսական անվտանգության ռիսկերը և սպառնալիքները..... 33

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 44

§2.1 ՀՀ տնտեսական զարգացման մարտահրավերները..... 44

§2.2 Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները և դրա մակարդակի գնահատումը..... 69

§2.3 Տնտեսական անվտանգության օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ ապահովվածությունը..... 85

ԳԼՈՒԽ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 93

§3.1 Ազգային անվտանգության ապահովման ռազմավարական հիմնադրույթները..... 93

§3.2 Տնտեսական անվտանգության ապահովման համակարգի ձևավորման մոտեցումները..... 103

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 113

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 123

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական անվտանգությունը, հանդիսանալով երկրի ազգային անվտանգության հիմքը, պետության կայունության և հզորացման անհրաժեշտ պայմանն է և նրա ինքնիշխանության գրավականը: Ժամանակակից աշխարհում, գլոբալիզացիայի և միջազգային տնտեսական կապերի ընդլայնման ու խորացման պայմաններում՝ բարձր տեխնոլոգիաներով հագեցած տնտեսությունների և նոր զարգացող երկրների տնտեսական-քաղաքական համագործակցության արդյունքում նկատելի ձեռքբերումների հետ մեկտեղ մեծ հավանականությամբ կարող են ծագել նաև ներքին և արտաքին այնպիսի սպառնալիքներ և ցնցումներ, որոնք վտանգավոր են թույլ տնտեսություն ունեցող երկրների, ուստի և ազգային անվտանգության համար: Հետևաբար, վերջինիս մակարդակի բարձրացմանն ուղղված պետության ռազմավարությունը պետք է կոչված լինի մշտապես դիմագրավելու բոլոր այն մարտահրավերներին, որոնք կարող են առաջանալ «անհատ-հասարակություն-պետություն» ինքնազարգացող դինամիկ համակարգում՝ ներքին և արտաքին վտանգների դեմ պայքարի, դրանց հետևանքների հաղթահարման ու չեզոքացման փոխկապակցված գործընթացներում: Տնտեսական անվտանգությունը հանդիսանում է ազգային անվտանգության կարևոր բաղկացուցիչներից մեկը և կարևոր դեր ու նշանակություն ունի դրա ապահովման գործում: Ըստ էության, տնտեսական անվտանգության ցանկալի մակարդակի ձեռք բերումը յուրաքանչյուր պետության ռազմավարական խնդիրներից է, քանի որ երկրի տնտեսության զարգացման մակարդակից է կախված սոցիալական, ռազմական, քաղաքական, պարենային և ազգային անվտանգության մյուս բաղադրիչների վիճակը: Միևնույն ժամանակ, տնտեսական անվտանգության պայմաններում է միայն հնարավոր կայուն տնտեսական աճի, բնակչության բարեկեցության ապահովումը և պետության բարգավաճումը:

Քաղաքական և տնտեսական զարգացման ժամանակակից փուլում յուրաքանչյուր երկրի համար տնտեսական անվտանգության ապահովումը դարձել է կենսական նշանակության խնդիր, որի լուծումն ունի առանցքային նշանակություն

պետության և հասարակության կենսագործունեության ապահովման հարցում: Միևնույն ժամանակ, դրա մեկնաբանության վերաբերյալ միասնական մոտեցումների բացակայությունը զգալի դժվարություններ է ստեղծում տնտեսական անվտանգության ապահովման արդյունավետ համակարգի ձևավորմանն ուղղված կառուցակարգերի և գործիքների ընտրության և կիրառման տեսանկյունից: Ակնհայտ է, որ ազգային տնտեսությունն առանցքային դեր ունի ցանկացած երկրի ներքին և արտաքին անվտանգության ապահովման գործում: Այս առումով, տնտեսական անվտանգությունը պետք է դիտարկել որպես ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս, որը կարող է ձեռք բերվել միայն պետության ազգային անվտանգության արդյունավետ համակարգի առկայության դեպքում:

Նախկին վարչահրամայական համակարգի փլուզման արդյունքում հանրապետությունը հայտնվեց խորը քաղաքական և տնտեսական ճգնաժամի մեջ, ինչի հետևանքները դեռևս վառ արտահայտված են հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական և գաղափարական կյանքում: Տնտեսության վատթար իրավիճակի պայմաններում ոչ լիարժեք են լուծվում հասարակության սոցիալական բնույթի կենսական խնդիրները, ինչն էականորեն նպաստում է բնակչության սոցիալական խնդիրների խորացմանը և սոցիալական լարվածության աճին: Նշված գործոնները, ակնհայտորեն, լուրջ սպառնալիքներ են հանդիսանում երկրի անվտանգության համար: Տնտեսությունը բախվում է բազմաթիվ արտաքին ու ներքին վտանգների հետ, որոնք առնչվում են տարածաշրջանում հանրապետության դիրքին ու շահերին: Այն պաշտպանված չէ նաև ներքին տնտեսական անկայունություն առաջացնող գործոնների ազդեցությունից: Նման պայմաններում ազգի, հասարակության ու պետության պաշտպանվածության ապահովման բոլոր հարցերն ընդգրկող ազգային անվտանգության շրջանակներում կարևորվում է հատկապես տնտեսական անվտանգության խնդիրը: Դրանով հանդերձ, դեռևս չեն ձեռնարկվել հանրապետության տնտեսական անվտանգության համապատասխան հայեցակարգի, ծրագրերի, արդյունավետ քաղաքականության, իրավական ու ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի մշակման շատ թե քիչ նշանակալից քայլեր, չնայած խնդիրը, մեր կարծիքով, չափազանց կարևոր է ու անհետաձգելի: Հարկ է անհապաղ անդրադառնալ

տարբեր բնույթի վտանգներից ու վնասներից ազգային տնտեսության պաշտպանության պայմանների, չափանիշների ու ցուցանիշների, կազմակերպական եղանակների ու կառուցակարգերի համակարգի մշակմանը, ազգային պետական շահերի հետ տնտեսական անվտանգության կապի իմաստավորմանը: Տնտեսական անվտանգության մակարդակը պետք է գնահատել ցուցանիշների այնպիսի համակարգով, որոնք կարտացոլեն տնտեսության գործառույթի սահմանային արժեքները: Հաշվի առնելով նաև ՀՀ տնտեսության ոչ արդիական կառուցվածքը, ստվերային տնտեսության չափերը, կոռուպցիոն ռիսկերի, արտաքին պարտքի մակարդակը, ինչպես նաև քաղաքական բնույթի դեռևս չլուծված որոշ հիմնախնդիրների առկայությունը, տնտեսական անվտանգության մասին ՀՀ-ում անհրաժեշտ իրավական հիմքերի ձևավորումը և անվտանգության սպառնալիքների գնահատման ու դրանց դեմ պայքարի միասնական պետական համակարգի ստեղծումը դառնում են հրամայական պահանջ: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են թեմայի **հրատապությունն ու արդիականությունը:**

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները</u>: Աշխատանքի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության բարձրացմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տնտեսական անվտանգության էությունը և գնահատել դրա դերը ազգային անվտանգության համակարգում,
- դիտարկել պետության ազգային շահերը և վերլուծել անվտանգության ապահովման հիմնական սկզբունքները,
- ուսումնասիրել ազգային անվտանգության բաղկացուցիչները և գնահատել տնտեսական անվտանգության դերն այդ համակարգում,
- բացահայտել տնտեսական անվտանգության արտաքին և ներքին սպառնալիքները, գնահատել դրանց ազդեցության ձևերը և սահմանները ՀՀ տնտեսության վրա,

- վերլուծել ՀՀ տնտեսական զարգացման մարտահրավերները, գնահատել տնտեսական անվտանգության ինստիտուցիոնալ և օրենսդրական ապահովվածության մակարդակը,
- մշակել հանրապետության տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացման ռազմավարական ուղղությունները և հայեցակարգային սկզբունքները:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է, իսկ ուսումնասիրության առարկան ՀՀ տնտեսական անվտանգության հիմնախնդիրները:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:

Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտեր: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական վերլուծության մեթոդները:

Ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- Տնտեսական անվտանգությունը բնորոշող հասկացութային ապարատի միջոցով՝ բացահայտվել է տնտեսական անվտանգության էությունը և գնահատվել է դրա ազդեցությունը տնտեսական զարգացման վրա,
- դասակարգվել են տնտեսական անվտանգության սպառնալիքները, դրանց ազդեցության սահմանները և ձևերը, մշակվել են այդ սպառնալիքների չեզոքացմանն ուղղված միջոցառումներ,

- մշակվել են հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրների լուծման հիմնական մոտեցումները,
- մշակվել են հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման հիմնական սկզբունքները և ռազմավարական ուղղությունները, ներկայացվել են դրա հիմնական առանցքային տարրերը և տնտեսաիրավական կարգավորման հիմնական կառուցակարգերը:

Ատենախոսությունում քննարկված հիմնախնդիրներից շատերը Հայաստանի Հանրապետությունում ամբողջական ու համակարգված ուսումնասիրման չեն ենթարկվել և չեն կրկնում այլոց կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունները, որով էլ պայմանավորված է ստացված արդյունքների գիտական նորույթը:

ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը դիտարկվել են ընդհանուր տնտեսական քաղաքականության համալիրում, որի արդյունքում մշակված մոտեցումների գործնական կիրառումը կընձեռի լայն հնարավորություններ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման համար: Առաջարկված մոտեցումները հիմնված են հանրապետության տնտեսության մեջ վերջին տարիներին ձևավորված իրավիճակի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտված միտումների գնահատման վրա: Դրանց գործնական կիրառումը, մեր կարծիքով, թույլ կտա հանրապետությունում ձևավորել այնպիսի միջավայր, որն առավելագույնս կնպաստի տնտեսական անվտանգության խնդիրների լուծմանը:

<u>Աշխատանքի գործնական նշանակությունը</u>: ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման, այդ ուղղությամբ պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից հանրապետությունում տնտեսության զարգացման, գործարար միջավայրի բարելավման և ընդհանուր տնտեսական ու սոցիալական քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

ԳԼՈՒԽ 1
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 Ազգային անվտանգության էությունը, նպատակը և խնդիրները

Ազգային անվտանգությունը տվյալ երկրի Սահմանադրությամբ, օրենքներով և իրավական այլ ակտերով երաշխավորված պետական շահերի պաշտպանությունն է, որի նպատակն է անհատին, հասարակությանը և պետությանը զերծ պահել արտաքին և ներքին վտանգներից: Այդ առումով, պետության կենսական ու առաջնային շահերն են՝ տարածքային ամբողջականության և բնակչության բնականոն վերարտադրության ապահովումը, նրանց բարեկեցության բարձրացումը և առողջության պահպանումը, ինչպես նաև մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, զարգացման համար կայուն երաշխիքների ստեղծումը և այլն: Այլ խոսքով, անվտանգությունը՝ դա անհատի, հասարակության և պետության արտաքին և ներքին վտանգներից ու սպառնալիքներից պաշտպանվածության վիճակն է, որը հիմնվում է դրանց բացահայտման, կանխարգելման և չեզոքացման համար իրականացվող նպատակաուղղված համալիր գործողությունների վրա: Այս տեսանկյունից, անվտանգության ռազմավարության հիմնական խնդիրը պետք է կայանա այնպիսի պայմանների ձևավորման մեջ, որոնք երկարաժամկետ հատվածում կապահովեն հասարակության կայուն առաջընթացը և տնտեսության արդյունավետ զարգացումը:

Ազգային անվտանգության առաջնակարգ խնդիրն ազգային-պետական շահերի որոշումն է և դրանց համալիր ու օբյեկտիվ գնահատումը: Ազգային գերակա շահերի պաշտպանությունը պահանջում է ազգային-պետական քաղաքականության իրականացում՝ ձևավորված իրավիճակին համարժեք ռազմավարությամբ, որը պետք է կենսագործվի ըստ երկրի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների կարևորության աստիճանի:

Պետք է նշել, որ անվտանգության ապահովումը ցանկացած պետության առավել կարևոր գործառույթներից մեկն է, որը հանդիսանում է հասարակական

կենսագործունեության հիմնական նախադրյալ և երաշխիք: Անվտանգության վերաբերյալ առաջին գաղափարախոսական հոսանքները ձևավորվել են դեռևս Հին Հունաստանում, Հռոմում, Չինաստանում՝ Ֆուկիդիդի, Զենոնի, Պլատոնի, Հերոդոտոսի, Արիստոտելի, Ցիցերոնի և Կոնֆուցիոսի կողմից, ովքեր մեծ ներդրում են ունեցել անվտանգության տեսության մեջ: Առաջին անգամ նրանց կողմից մեկնաբանվեց անվտանգության դերը պետության և հասարակության կենսագործունեության հարցում: Այսպես, Արիստոտելը պնդում էր, որ «բոլոր տեսակի հասարակական կարգերը քանդվել են կա՛մ ներքին, կա՛մ արտաքին պատճառներից:[1] Իսկ Կոնֆուցիոսը գտնում էր, որ մարդասիրության, արդարության, հավատարմության, իմաստության և պարկեշտ վարքագծի վրա է հիմնված պետության բարեկեցությունը:[2] Մաքիավելիի կարծիքով քաղաքականության հիմքում ընկած է ոչ թե քրիստոնեական բարոյականությունը, այլ շահերը և իշխանության ուժը: Նա նշում էր, որ կայսրին կարող են սպառնալ երկու վտանգներ. առաջինը ներսից, որը գալիս է հպատակներից, երկրորդը՝ դրսից, կապված հարևան տերությունների հետ: Արտաքին վտանգները կարելի է կանխել լավ բանակի և բարի դաշնակիցների օգնությամբ, իսկ ով ունի լավ բանակ, նա միշտ էլ կունենա լավ դաշնակիցներ:[3]

<<Ազգային անվտանգություն>> հասկացությունը շրջանառության մեջ է դրվել 1904 թվականին ԱՄՆ Նախագահի կողմից Կոնգրեսին հղած ուղերձում: Ի դեպ, «տնտեսական անվտանգություն» հասկացությունը ևս առաջին անգամ օգտագործվել է Միացյալ Նահանգներում 1932 թվականին՝ «Ելք Մեծ դեպրեսիայից» նախագահական նախագծում: 1934 թվականին Միացյալ Նահանգների նախագահին առընթեր հիմնադրվել է տնտեսական անվտանգության Կոմիտեն: 1985 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 40-րդ նստաշրջանում ընդունվեց «Միջազգային տնտեսական անվտանգության» բանաձև և այդ ժամանակվանից «տնտեսական անվտանգություն» հասկացությունը ձեռք է բերել միջազգային կարգավիճակ:

Անվտանգության բովանդակային ասպեկտն ամրագրված է XIX դարի վերջում հրատարակված Ի.Ֆ. Բրոկգաուզի և Ի.Ա. Էֆրոնի <<Հանրագիտարանական

[1] Аристотель. Политика. С. А. Жебелева. Азбука-Аттикус. СПб.: 2015г. стр. 220.
[2] Конфуций. Суждения и беседы. Азбука-Аттикус. СПб.: 2015г. стр. 102
[3] Макиавелли Н. Государь. Азбука-Аттикус. СПб.: 2015г. стр. 71.

բառարանում>>, որտեղ նշվում է, որ անձնական և գույքային անվտանգության անհրաժեշտությունը կյանքի է կոչում պետությունը, որը նաև ցույց է տալիս վերջինիս հիմնական նպատակն ու նշանակությունը»:[4] Անվտանգության ապահովման ոլորտում հետազոտություններ կատարվել են նաև խորհրդային ժամանակաշրջանում, բայց հիմնականում ազգային անվտանգության տեսանկյունից: 1982 թվականից <<ազգային անվտանգություն>> հասկացությանը զուգահեռ շրջանառության մեջ է դրվում նաև <<հասարակության անվտանգություն>> հասկացությունը, որը հիմնականում սևեռվում է անհատի և հասարակության շահերի պաշտպանության վրա:

Ընդհանուր առմամբ, մասնագիտական շրջանակներում ազգային անվտանգության վերաբերյալ գոյություն ունի երկու հիմնական մոտեցում՝ կապված անվտանգության ապահովման և ինքնահաստատման հետ: Առաջինը ենթադրում է վտանգների դեմ պայքար: Երկրորդը հիմնված է ոչ այնքան վտանգների դեմ պայքարի, ինչքան սեփական կարողությունների ավելացման և ներքին ռեսուրսների զարգացման վրա:[5]

Պետք է նշել, որ ազգային անվտանգության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Մասնավորապես, ամերիկյան մոտեցումը հիմնված է ուժային սպառնալիքի միջոցով սեփական արտաքին քաղաքական նպատակներին հասնելու վրա: Այլ կերպ ասած, այդ հայեցակարգը հիմնված է «զսպում վախեցնելով» սկզբունքի վրա: Ճապոնիայում ազգային անվտանգությունը դիտարկվում է որպես պետության կարգավիճակ, որը բնութագրում է պետության սոցիալ-տնտեսական հիմքերի, սոցիալական և քաղաքական համակարգի, ռազմական հզորության, երկրի տարածքային ամբողջականության վիճակը, ինչպես նաև ներքին ու արտաքին քաղաքականության մեջ նրա անկախության աստիճանը: Ֆրանսիայում պետության անվտանգությունը մեկնաբանվում է որպես մի իրավիճակ, ինչը հանդիսանում է

[4] Национальная безопасность. Опалев А., Перумов В. ЗАО Изд. “Оружие и технологии”, М.: 2010г. стр. 33-42.

[5] Национальная безопасность. Опалев А.В., Перумов В. С.. ЗАО Изд. “Оружие и технологии”, М.: 2010г. стр. 45.

ներքին խառնաշփոթից խուսափելու և արտաքին ագրեսիային հակազդելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունք:[6]

Այսպիսով, ազգային անվտանգությունը անձի, հասարակության և պետության կենսական շահերին վնաս հասցնելու հնարավորությունների բացակայությունն է, որի ռազմավարական նպատակներն են երկրի տնտեսության զարգացումը, պետության, հասարակության և անհատի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, արտաքին և ներքին սպառնալիքներին դիմագրավելու հնարավորությունների ստեղծումը:

Անվտանգությունը բավականին բարդ, բազմամակարդակ, բազմակողմանի և բազմաֆունկցիոնալ կատեգորիա է, որի ուսումնասիրությունը գրեթե միշտ գտնվել է մասնագետների ուշադրության կենտրոնում: Վ.Կ. Սենչագովի կարծիքով՝ անվտանգության ձգտումը տարբեր աստիճանով բնորոշ է բոլոր կենսաբանական համակարգերին, սակայն միայն մարդիկ են ընդունակ հնարավոր փոփոխությունների բնույթի և վտանգների բովանդակության վերլուծության հիման վրա ընտրել համապատասխան մեթոդներ, հմտություններ և աշխատանքային գործունեության եղանակներ սպառնալիքից պաշտպանվելու համար:[7] Նաև այդ հատկանիշի շնորհիվ է սոցիալական ասպեկտը տարանջատվում կենսաբանականից և հասարակության անվտանգությունը հանդես է գալիս որպես սոցիալ-տնտեսական երևույթ:

Անվտանգությունը, ըստ էության, կարելի է դիտարկել մի քանի ասպեկտներով: Առաջին, որպես անվտանգության օբյեկտների (անհատի, հասարակության, պետության) նորմալ կյանքի համար վտանգների բացակայություն, երկրորդ, սպառնալիքների դեպքում՝ հուսալի պաշտպանություն, երրորդ՝ սպառնալիքը կանխելու և հաղթահարելու կարողություն: Անվտանգությունը մի վիճակ է, որի դեպքում ապահովված է օբյեկտի, երևույթի, գործընթացի, դրանց գոյության, գործելու և զարգանալու պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:[8]

---

[6] Национальная безопасность. Опалев А.В., Перумов В. С.. ЗАО Изд. “Оружие и технологии”, М.: 2010г. стр. 51.

[7] Экономическая безопасность России: Общий курс. Под ред. В. Сенчагова. 2-е изд. М.: Дело, 2005г. стр. 111

[8] Экономическая безопасность России. Общий курс. Под ред. В. Сенчагова. 4-е изд. М.: БИНОМ. 2012г. стр. 72

Վերջիններիս դիմակայելու և զարգանալու պետության, հասարակության և անհատի կարողությունը բնութագրում է ազգային անվտանգությունը: Այն մի այնպիսի վիճակ է, երբ ապահովված է ազգային շահերի պաշտպանությունը արտաքին և ներքին սպառնալիքներից և որը թույլ է տալիս ապահովել հասարակության և պետության կայուն զարգացում: Ազգային անվտանգությունն անհատի, հասարակության և պետության կենսական շահերի, ինչպես նաև ազգային արժեքների և կենսագործունեության պաշտպանությունն է տարբեր բնույթի (քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, բնապահպանական և այլն) մի շարք արտաքին և ներքին սպառնալիքներից:[9] Պետության անվտանգությունը կախված է երկրի քաղաքական, տնտեսական և ռազմական հզորությունից, որն արտահայտվում է միջազգային հարաբերություններում կայուն դիրքեր ապահովելու, ճգնաժամերին դիմակայելու և նման իրավիճակներում գոյատևելու, ինչպես նաև ազգային շահերը պաշտպանելու միջոցով:[10] Հասարակության անվտանգությունը կենսագործունեության անպիսի պայմանների համախումբ է, որի պարագայում ապահովվում է նրա զարգացման հնարավորությունը: Անվտանգության օբյեկտը սոցիալական կամ բնական երևույթների ամբողջությունն է, որոնք պետք է ապահովեն նրա կայուն զարգացումը: Վտանգը անվտանգության օբյեկտի վրա բացասաբար ազդելու օբյեկտիվորեն գոյություն ունեցող հնարավորությունն է, որը նրան կարող է պատճառել վնաս, վատացնել վիճակը և հանգեցնել անցանկալի զարգացումների: Անվտանգության մակարդակը գնահատվում է համապատասխան ցուցանիշների միջոցով, որոնք արտացոլում են օբյեկտի վիճակն անվտանգության տեսանկյունից:

Ինչպես արդեն նշվեց, անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրը դա պետության, հասարակության և անհատի շահերի պաշտպանությունն է, որոնք բաժանվում են տարբեր խմբերի: Ազգային շահերը անձի, հասարակության և պետության օրինական կարիքներն են, որոնց բավարարումն ապահովում է դրանց գոյությունը և կայուն զարգացման հնարավորությունը: Դրանք բխում են ազգային արժեքներից և ուղղված են կայուն զարգացման համար անհրաժեշտ պայմանների

[9] Экономическая безопасность. Под общ. ред. Л. Гончаренко, Ф. Акулинина. М.: Изд. Юрайт, 2016г. стр. 18
[10] Экономическая безопасность России. Общий курс. Под ред. В. Сенчагова. 4-е изд. М.: БИНОМ. 2012г. стр. 13

ստեղծմանը: Այս համատեքստում, հատկապես կարևոր նշանակություն ունեն կենսական շահերը, որոնք ապահովում են մարդու, հասարակության և պետության գոյությունը և առաջնահերթ զարգացման հնարավորությունը, ինչպես նաև նրանց գոյատևելու ցանկությունը: Մարդու կենսական շահերն ապահովում են նրա բազմակողմանի զարգացման հնարավորությունը և իրենց մեջ ենթադրում են իրավունքների ու ազատությունների իրականացում, անձնական և գույքային անվտանգություն, կյանքի որակի և մակարդակի բարձրացում, մարդու ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացում: Հասարակության կենսական շահերի բավարարումն ապահովում է նրա գոյությունը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ներդաշնակ զարգացման հնարավորությունը: Դրանք իրենց մեջ ներառում են ժողովրդավարության ամրապնդումը, քաղաքական, տնտեսական, սոցիալական, էթնիկական և ազգային զարգացման կենսական խնդիրների վերաբերյալ ընդունելի լուծումների մշակումը, ժողովրդագրական և բնապահպանական իրավիճակի բարելավումը և բնակչության առողջության պահպանումը, տնտեսական առաջընթացը, կայուն զարգացման ապահովումը, բնակչության քաղաքական և իրավական մշակույթի ձևավորումը՝ քաղաքացիական հասարակության սկզբունքներին համապատասխան: Պետության կենսական շահերն ուղղված են երկրի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության ապահովմանը, ազգային միասնության պահպանմանն ու ամրապնդմանը, օտարերկրյա պետությունների և ծայրահեղական ուժերի ոտնձգություններից սահմանադրական կարգի պաշտպանությանը, քաղաքացիական իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ու սոցիալ-տնտեսական և իրավական երաշխիքների համակարգի զարգացմանը, ներքին քաղաքական կայունության ապահովմանը, քաղաքացիական համերաշխության և հասարակական համաձայնության պաշտպանությանն ու ամրապնդմանը, սոցիալ-քաղաքական հակամարտությունների կանխարգելմանը, զսպմանը և այլն:

Անվտանգության ապահովման տեսանկյունից հատկապես կարևոր նշանակություն ունեն ռիսկերը և սպառնալիքները: Առաջինը վտանգի այնպիսի մակարդակ է, որի պայմաններում վնաս կարող է հասցվել օբյեկտի անվտանգությանը: Վ. Լ. Մանիլովը, Մ. Ի. Դզլիևը, Բ. Ֆ. Նիցևիչը կարծում են, որ ռիսկը այն իրավիճակի

առկայությունն է կամ հնարավորությունը, երբ նախադրյալներ են ձևավորվում ազգային արժեքների, ազգային անվտանգության ապահովման շահերի և նպատակների իրականացմանը հակազդելու համար: Սպառնալիքը նրանց կողմից մեկնաբանվում է որպես ազգային շահերին և անվտանգությանը վնաս հասցնելու հնարավորություն:[11] Անվտանգության սպառնալիքները պետության ազգային շահերի իրականացմանը խոչընդոտող մի շարք պայմաններ և գործոններ են, որոնք վտանգ են ներկայացնում անհատի, հասարակության և պետության բնականոն կենսագործունեության համար: Ընդ որում, դրանք դասակարգվում են իրական և պոտենցիալ սպառնալիքների: Առաջինները կարող են ի հայտ գալ և դրսևորվել ցանկացած ժամանակ, իսկ երկրորդները՝ միայն որոշակի պայմանների ձևավորման դեպքում: Անվտանգության սպառնալիքներն իրենցից ներկայացնում են սահմանադրական իրավունքներին և ազատություններին, քաղաքացիների կյանքի որակին և կենսամակարդակին, քաղաքացիական հասարակության զարգացմանը, ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը, երկրի կայուն զարգացմանը, պաշտպանությանը և անվտանգությանն ուղղակի կամ անուղղակի վնաս հասցնելու հնարավորություն: Ակնհայտ է, որ անվտանգության սպառնալիքները վտանգում են անհատի, հասարակության և պետության կենսական շահերի իրացմանը, ինչի արդյունքում ձևավորվող սոցիալական հարաբերությունների պայմաններում անհատի, հասարակության և պետության ազգային շահերի իրականացումը դառնում է անհնար: Սպառնալիքի հիմնական հատկանիշներն են դրա տեղի ունենալու հավանականությունը և վերջինիս առաջացման դեպքում հնարավոր վնասի չափերը: Այն իրենից ներկայացնում է ազդեցության արդյունք՝ արտահայտված անվտանգության օբյեկտի համար առաջացած անցանկալի և անբարենպաստ հետևանքներով՝ որպես կանոն, նյութական ու հոգևոր բոլոր արժեքների կամ նրանց մի մասի կորստով:

Գ.Ա. Ատամանովը գտնում է, որ ցանկացած փոփոխություն կարող է սպառնալիք դառնալ սուբյեկտի համար և յուրաքանչյուր գործողություն որոշակի ռիսկեր է

[11] Атаманов Г. Азбука безопасности. Исходные понятия теории безопасности и их оп-ределения. Защита информации. Инсайд. 2012г. № 4.

պարունակում: Հետևաբար, սպառնալիքները և ռիսկերը կարող են ներկայացվել տարբեր ուղղություններով. ռիսկերը դուրս են գալիս սուբյեկտից և ուղղված են արտաքին միջավայրին, իսկ սպառնալիքը՝ գալիս է արտաքին միջավայրից, և ուղղված է դեպի սուբյեկտը: Այս առումով, դրանց ուղղությունները տրամագծորեն հակառակ են, սակայն հետևանքները նույնն են՝ սուբյեկտին վնասի պատճառում:[12]

Այսպիսով, անվտանգությունը մի վիճակ է, երբ ապահովված է ներքին և արտաքին սպառնալիքներից օբյեկտի գոյության ընթացքի, գործունեության և զարգացման պաշտպանությունը: Ազգային անվտանգության դեպքում դա հանդես է գալիս մարդու, հասարակության և պետության կայուն զարգացման համար անհրաժեշտ և բավարար մակարդակի ապահովման տեսքով: Ազգային անվտանգության ապահովման օբեկտներ են անձը (իրավունքներ ու ազատություններ), հասարակությունը (նյութական և հոգևոր արժեքներ) և պետությունը (սահմանադրական կարգ, ինքնիշխանություն և տարածքային ամբողջականություն), իսկ սուբյեկտներ՝ պետությունը, հասարակական և այլ կազմակերպություններն ու միությունները, քաղաքացիները:

Ազգային անվտանգության համակարգը միավորում է հավասարակշռված կենսական շահերով անվտանգության օբյեկտներին և սուբյեկտներին՝ իրենց գործառույթներով, իրավունքներով, պատասխանատվությամբ, պարտականություններով և անվտանգության ապահովման միջոցներով, նրանց միջև հարաբերություններով, համաձայն որի կարգավորվում, կազմակերպվում, համակարգվում և վերահսկվում է անվտանգության վիճակի պահպանմանն ուղղված անձի, հասարակության և պետության կենսական շահերից, ներքին և արտաքին, իրական և պոտենցիալ սպառնալիքներին դիմագրավելու անհրժեշտությունից բխող գործունեությունը:

Մեր համոզմամբ, ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչը տնտեսական անվտանգությունն է, որի նշանակությունը հասարակության և պետության շահերի պաշտպանության գործում չափազանց մեծ է: Այն պետական

[12] Атаманов Г. Азбука безопасности. Исходные понятия теории безопасности и их определения. Защита информации. Инсайд. 2012г. № 4.

կառավարման համակարգի առանցքային խնդիրներից է, որի լուծումը պահանջում է համալիր միջոցառումների առաջնային իրականացում: Տնտեսական անվտանգությունը, կախված լինելով տնտեսական, սոցիալական, քաղաքական, ռազմական, գիտատեխնիկական և այլ գործոններից, բնութագրում է պետության անվտանգության արդյունավետության աստիճանը: Դրա բարձր մակարդակն, ըստ էության, երկրի արտադրական հարաբերությունների կարգավորման և արտադրողական ուժերի զարգացման այնպիսի աստիճանն է, որի դեպքում տնտեսական առաջընթացն ու հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի կայունությունը չեն խաթարվում հնարավոր ներքին և արտաքին բացասական ազդեցությունների պայմաններում:

Եթե ազգային անվտանգությունը դիտարկում ենք որպես համակարգ, ապա այդ դեպքում նրա նկատմամբ միջազգային անվտանգությունը հանդիսանում է գերհամակարգ, իսկ ենթահամակարգեր են տնտեսական, քաղաքական, բնապահպանական, ռազմական և անվտանգության մյուս բաղադրիչները: Իսկ եթե տնտեսական անվտանգությունն ենք դիտարկում որպես համակարգ, ապա նրա նկատմամբ ազգային անվտանգությունը հանդիսանում է գերհամակարգ, իսկ ենթահամակարգեր են՝ ներդրումային և ինովացիոն, ռեսուրսային և հումքային, ֆինանսական, արդյունաբերական, ժողովրդագրական, էներգետիկ, արտաքին առևտրային, մակրոտնտեսական, պարենային, սոցիալական, բնապահպանական, հաղորդակցության և տրանսպորտային, ռազմատնտեսական և տնտեսական անվտանգության այլ ձևերը:

Տնտեսական անվտանգությունը, հանդիսանալով երկրի ազգային անվտանգության հիմքը, պետության կայունության և հզորացման անհրաժեշտ պայմանն է, պետության սուվերենության գրավականը: Ժամանակակից աշխարհում, գլոբալիզացիայի և միջազգային տնտեսական կապերի ընդլայնման ու օրեցօր զարգացման պայմաններում առաջնակարգ տեխնոլոգիաներով հագեցած տնտեսություն ունեցող երկրների և նոր զարգացող երկրների տնտեսական համագործակցության արդյունքում զգալի ձեռքբերումների հետ մեկտեղ կարող են առաջանալ նաև վերջիններիս համար ներքին և արտաքին այնպիսի սպառնալիքներ ու

ցնցումներ, որոնք վտանգավոր կարող են լինել թույլ տնտեսություն ունեցող երկրների ազգային անվտանգության համար: Հետևաբար, այդպիսի երկրների զարգացման մակարդակի բարձրացմանն ուղղված պետության ռազմավարությունը պետք է կոչված լինի դիմագրավելու բոլոր այն մարտահրավերներին, որոնք կարող են առաջանալ «անհատ-հասարակություն-պետություն» ինքնազարգացող դինամիկ համակարգում՝ ներքին և արտաքին վտանգների դեմ պայքարի, դրանց հետևանքների հաղթահարման ու չեզոքացման գործընթացներում: Նշված հարցերի ուսումնասիրությանն է նվիրված ատենախոսության հաջորդ բաժինը:

1.2 Տնտեսական անվտանգությունն ազգային անվտանգության համակարգում

Տնտեսական անվտանգությունը հանդիսանում է ազգային անվտանգության կարևոր բաղկացուցիչներից մեկը և կարևոր դեր ու նշանակություն ունի դրա ապահովման գործում: Ըստ էության, տնտեսական անվտանգության ցանկալի մակարդակի ձեռք բերումը յուրաքանչյուր պետության ռազմավարական խնդիրներից է, քանի որ երկրի տնտեսության զարգացման մակարդակից է կախված սոցիալական, ռազմական, քաղաքական, պարենային և ազգային անվտանգության մյուս բաղադրիչների վիճակը: Միևնույն ժամանակ, ազգային անվտանգության պայմաններում է միայն հնարավոր կայուն տնտեսական աճի, բնակչության բարեկեցության ապահովումը և պետության բարգավաճումը:

Տնտեսական անվտանգության հիմնախնդիրը մարդկությանը հետաքրքրել է դեռևս Պլատոնի և Արիստոտելի ժամանակներից:[13] Սակայն այդ ժամանակներում այն վերաբերել է հասարակության մեջ մարդու անվտանգության խնդրին, որի լուծման ուղղությամբ քայլերը հիմնականում շարունակվել են նաև հետագայում, մինչև

[13] Лесков М. Гомеостатические процессы и теория безопасности, Безопасность 4, М. 1994.
Ա. Մարկոսյան, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Նորավանք ԳԿՀ, Երևան, 2005:

գիտության կողմից տնտեսական անվտանգության հիմնախնդրի համակողմանի վերլուծությունների ու հայեցակարգային մոտեցումների հիման վրա կատարված համալիր ուսումնասիրությունների իրականացումը: Մասնավորապես, Թ. Հոբսը, դիտարկելով հիմնահարցը «մարդ-հասարակություն-պետություն» համատեքստում, երկրի տնտեսական անվտանգության խնդիրը համարում էր պետական քաղաքականություն և դրա ապահովումը՝ զուտ պետության իրավասության հարց:[14] Խնդրի լուծման մոտեցումների զարգացումը հետագայում հանգեցրեց նրան, որ 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած ԱՄՆ և եվրոպական մի շարք երկրներ ստեղծեցին իրենց տնտեսական անվտանգության համակարգերը՝ համապատասխան հայեցակարգերով, օրենսդրությամբ և հատուկ մարմիններով:

Ազգային անվտանգության առումով միջուկային սպառազինությունը որոշակի ժամանակահատվածից որոշիչ դարձավ պետությունների հզորության աստիճանի որոշման հարցում: Սակայն, գերտերությունների միջև միջուկային զենքի հավասարակշռություն հաստատվելուց հետո ակնհայտ դարձավ, որ պետության հզորությունը կարող է որոշվել հիմնականում տվյալ երկրի տնտեսական հզորությամբ: Սրա ուղղակի վկայություն պետք է համարել այն փաստը, որ ԱՄՆ-ում ազգային անվտանգության խորհրդի հետ մեկտեղ ստեղծվեց նաև ազգային-տնտեսական խորհուրդ: Այսպիսի մոտեցումը բխում է «սառը պատերազմից» հետո ձևավորված ամերիկյան տնտեսական անվտանգության հայեցակարգից, որն ուղղված է երկրի՝ որպես գերհզոր պետության տնտեսական ներուժի պահպանմանն ու բազմապատկմանը:[15]

Տնտեսական անվտանգության ապահովման գործում պետության ունեցած դերի գնահատման հարցում անշուշտ պետք է անդրադառնալ նաև պետական անվտանգության հասկացությանը,[16] որն ունի բացահայտ կարևոր նշանակություն

[14] F. Trager, F. Simone, An Introduction to the Study of National Security and American Society, Teory, Process and Policy. Ed. By Trager F., Kronenberg P., Lawrence, University of Kansas Press, 1973, p. 36.

[15] Թաթուլ Մանասերյան, Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր, Երևան, 2014, 836 էջ:

[16] Վ. Բոստանջյան, Պետության դերը տնտեսական անվտանգության ապահովման գործում, ՀՀ սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները. Գիտական հոդվածների ժողովածու - 8, Երևան, 2006, էջ 323-327:

երկրի անվտանգության պաշտպանության գործում:[17] Դա հատկապես վերաբերում է նախկին Խորհրդային Միության ազգային անվտանգությանը, որն ուղղակիորեն նույնացվում էր «պետական անվտանգություն» հասկացության հետ: Խորհրդային երկրում պաշտոնապես ընդունված պետական անվտանգության հասկացությանն համապատասխանող պետության շահերն աներկբայորեն համարվում էին գերակա անհատի կամ հասարակության շահերի նկատմամբ, ի տարբերություն արդեն կիրառության մեջ մտած «անձ-հասարակություն-պետություն» միասնական հայեցակարգի:

Տնտեսական անվտանգությունը հաճախ կրում է հարաբերական բնույթ, քանի որ երկրի անվտանգության աստիճանը կարող է գնահատվել ելնելով գործընկեր և հակառակորդ երկրների տնտեսական հզորություններից: Ուստի, երկրներից մեկի տնտեսական աճի բարձր տեմպերը մյուսի նկատմամբ, արդեն իսկ կարող է վտանգ առաջացնել թույլ զարգացող երկրի համար: Գնահատելով նման միտումները, զարգացած երկրները, որպես կանոն, օգնության ձեռք են մեկնում գործընկեր երկրներին՝ վերացնելով կամ մեղմելով սպառնացող տնտեսական վտանգը: Այսպիսին է տնտեսական անվտանգության արևմտյան արժեքային համակարգի բնույթն ու զարգացման ուղղվածությունը:[18] Սկզբունքորեն նման մոտեցում է ընկած նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների գործունեության հիմքում՝ զարգացող երկրներին աջակցելու և ներգրավելու մեկ միասնական տնտեսության մեջ: Սակայն հաճախ օգնության նպատակով ստացվող վարկերն ուղղվելով տնտեսության զարգացման համար ոչ առաջնային նշանակություն ունեցող ոլորտներ, չեն հանգեցնում ցանկալի արդյունքների, երբեմն նույնիսկ առաջացնելով ճգնաժամային երևույթներ: Դրանք հատկապես էական բացասական ազդեցություն են ունենում վերափոխումներ իրականացնող անցումային փուլում գտնվող երկրների տնտեսության վրա:[19]

---

[17] Архипов А., Городецкий А., Михайлов Б. Экономическая безопасность: оценки, проблемы, способы обеспечения, Вопросы экономики N 12, 1994г.

[18] R. Ingleheart, Culture shift in advanced industrial society, Princeton (N, J), Princeton University Press, 1990.

[19] Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Հ. Սարգսյան, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Տիգրան Մեծ, Երևան, 2003, 653 էջ:

Տնտեսական անվտանգության համակարգն ունի բարդ հիերարխիկ կառուցվածք, որի որպես օբյեկտներ հանդես են գալիս տարբեր մակարդակի տնտեսական հարաբերությունները: Այս տեսանկյունից, տնտեսական անվտանգությունը պետք է դիտարկել հետևյալ մակարդակների կտրվածքով.

- մակրոմակարդակ՝ երկրի տնտեսությունը,
- ռեգիոնալ և ճյուղային մակարդակ՝ տարածաշրջանների և ճյուղերի տնտեսությունները,
- միկրոմակարդակ՝ շուկայի գործակալները,
- անհատի և ընտանիքի մակարդակ՝ երկրի յուրաքանչյուր քաղաքացու տնտեսական շահերը:

Ի դեպ, պետք է նկատի ունենալ, որ նշված մակարդակներում գործող սուբյեկտների տնտեսական շահերը փոխկապակցված և փոխպայմանավորված են, ինչը մեկ անգամ ևս ընդգծում է «տնտեսական անվտանգություն» կատեգորիայի համալիր բնույթը:

Ակնհայտորեն, տնտեսական անվտանգության վրա ազդում են տարբեր արտաքին և ներքին գործոններ: Առաջինների շարքին են դասվում արտահանման կառուցվածքում հումքային ապրանքների գերակշռությունը, ավանդական շուկաների կորուստը, ռազմավարական նշանակության և պարենային ապրանքների ներմուծումից երկրի կախվածությունը, արտաքին պարտավորությունների աճը, արտահանման խթանմանը և ներմուծման կառուցվածքի օպտիմալացմանն ուղղված ժամանակակից ֆինանսական, կազմակերպական և ինֆորմացիոն ենթակառուցվածքների զարգացման ոչ բավարար մակարդակը և այլն: Ներքին գործոններ են հանդիսանում տնտեսության դեֆորմացվածությունը, դրա ցածր մրցունակությունը, տնտեսության մոնոպոլիզացիայի բարձր մակարդակը, գիտատեխնիկական ներուժի կորուստը և ուղեղների արտահոսքը, ներդրումային ցածր ակտիվությունը, սոցիալական կոնֆլիկտների առաջացման վտանգը, գործազրկության աճը, բնակչության ծերացումը, կրթության որակի անկումը, կոռուպցիայի բարձր մակարդակը, ստվերային տնտեության մեծ ծավալները և այլն:

Ընդհանուր առմամբ, տնտեսական անվտանգության սուբյեկտների և օբյեկտների, ինչպես նաև դրա սպառնալիքների համախումբը կարելի է ներկայացնել ստորև պատկերված 1 Գծապատկերի միջոցով:

Ակնհայտորեն, շուկայական հարաբերությունների պայմաններում գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծմամբ պետք է զբաղվի միայն պետությունը, քանի որ դրանք կարող են լուծվել միայն պետական արդյունավետ միջամտության արդյունքում: Ակնհայտորեն, նման խնդիրների թվին է պատկանում տնտեսության անվտանգության ապահովումը: Այլ կերպ ասած, տվյալ ոլորտում պետության պարտավորությունը և առանցքային ֆունկցիան կայանում է հասարակության կայունության ապահովման, ինքնապահպանման և զարգացման, հնարավոր սպառնալիքների վերացման կամ դրանց հետևանքների մեղմման մեջ:

Քաղաքական և տնտեսական զարգացման ժամանակակից փուլում յուրաքանչյուր երկրի համար տնտեսական անվտանգության ապահովումը դարձել է կենսական նշանակության խնդիր, որի լուծումն ունի առանցքային նշանակություն պետության և հասարակության կենսագործունեության ապահովման հարցում: Միևնույն ժամանակ, դրա մեկնաբանության վերաբերյալ միասնական մոտեցումների բացակայությունը զգալի դժվարություններ է ստեղծում տնտեսական անվտանգության ապահովման արդյունավետ համակարգի ձևավորմանն ուղղված կառուցակարգերի և գործիքների ընտրության և կիրառման տեսանկյունից:

Ակնհայտ է, որ ազգային տնտեսությունն առանցքային դեր ունի ցանկացած երկրի ներքին և արտաքին անվտանգության ապահովման գործում: Այս առումով, տնտեսական անվտանգությունը պետք է դիտարկել որպես ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս, որը կարող է ձեռք բերվել միայն պետության ազգային անվտանգության արդյունավետ համակարգի առկայության դեպքում: Որպես կանոն, տնտեսական անվտանգությունը հիմնականում դիտարկվում է այնպիսի բաղադրիչների համատեքստում, ինչպիսիք են տնտեսական անկախությունը, ազգային տնտեսության կայունությունը, ինքնազարգացման և առաջընթացի ունակությունը: Տնտեսական անկախությունը ենթադրում է պետության լիակատար վերահսկողություն ազգային հարստության օգտագործման նկատմամբ, ինչպես նաև

միջազգային տնտեսական հարաբերություններում հավասար մասնակցություն ապահովելու նպատակով պետության կողմից մրցակցային առավելությունների ձևավորում: Ազգային տնտեսության կայունությունը ենթադրում է տնտեսական համակարգի բոլոր տարրերի կայունության և հուսալիության ապահովում, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների և սեփականության բոլոր ձևերի պաշտպանություն, ինչպես նաև տարբեր ապակայունացնող գործոնների բացասական ազդեցության զսպում և չեզոքացում: Տնտեսության ինքնազարգացման և առաջընթացի ունակությունն իրենից ներկայացնում է պետության կողմից սեփական շահերի պաշտպանության հնարավորություն, ներդրումային բարենպաստ միջավայր ձևավորելու կարողություն, երկրի մտավոր ներուժի զարգացման ընդունակություն: Կարելի է ասել, որ վերոնշյալ երեք բաղադրիչների կտրվածքով ցանկալի արդյունքների ապահովումը հանդիսանում է կարևոր գրավական ու նախադրյալ երկրի տնտեսական անվտանգության ապահովման համար: Միայն այդ դեպքում է հնարավոր դիմակայել ներքին և արտաքին սպառնալիքներին և բացասաբար ազդող գործոններին:

Ընդհանուր առմամբ, մասնագիտական գրականության մեջ գոյություն չունի միասնական տեսակետ «տնտեսական անվտանգություն» հասկացության վերաբերյալ: Տնտեսագիտական բառարանում «տնտեսական անվտանգություն» հասկացությունը սահմանվում է որպես տնտեսության այնպիսի վիճակ, որի դեպքում ապահովվում է բարձր և կայուն տնտեսական աճ, տնտեսական կարիքների և պահանջմունքների արդյունավետ բավարարում, ազգային հարստության օգտագործման նկատմամբ պետական վերահսկողություն, ազգային և միջազգային մակարդակներում երկրի տնտեսական շահերի պաշտպանություն:[20]

Դ. Ուրսուլան տնտեսական անվտանգությունը դիտարկում է որպես արտաքին և ներքին պայմանների համախումբ, որոնց դեպքում ապահովվում է հասարակության կայուն զարգացումն ու նրա անդամների կյանքի որակի բարձրացումը:[21] Վ. Սենչագովի կարծիքով տնտեսական անվտանգությունը տնտեսության և իշխանության ինստիտուտների այնպիսի վիճակն է, որի դեպքում ապահովվում է ազգային շահերի

[20] Райзберг Б. Современный экономический словарь М.: ИНФРА-М, 2005г. стр. 421

[21] Урсул А. Переход России к устойчивому развитию. Ноосферная стратегия. М., 1998г. стр. 34-37

երաշխավորված պաշտպանություն, երկրի սոցիալական ուղղվածությամբ ամբողջական զարգացում, բավարար պաշտպանունակություն անգամ ներքին և արտաքին գործընթացների զարգացման առավել անբարենպաստ պայմաններում:[22]

Գծապատկեր 1. Տնտեսական անվտանգության սուբյեկտների, օբյեկտների և սպառնալիքների համախումբը

ՌԴ մասնագիտական շրջանակներում տնտեսական անվտանգությունը դիտարկվում է որպես երկրի ազգային անվտանգության անբաժանելի մաս, որի

[22] Сенчагов В. Как обеспечить экономическую безопасность. Российская Федерация сегодня. 2007г. № 6.

հիմնական խնդիրն է ապահովել տնտեսական քաղաքականության անկախ ընթացքը: Ընդ որում, վերջինս ենթադրում է ոչ թե ինքնաբավություն, այլ երկրի ազգային և պետական շահերից բխող գործողությունների և ծրագրերի իրականացման հնարավորություն: Տնտեսական անվտանգությունը պետք է ապահովի ազգային տնտեսության կայունությունը, նրա ինքնազարգացման և առաջընթացի կարողությունը: ՌԴ ազգային անվտանգության Ռազմավարության մեջ, (2015 թ.), հստակ նշվում է, որ հակազդելով տնտեսական անվտանգության սպառնալիքներին, պետական և տեղական իշխանությունները քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցությամբ իրականացնում են պետական սոցիալ-տնտեսական քաղաքականություն: Վ. Ռուբանովը տնտեսական անվտանգությունը սահմանում է որպես ազգի բարեկեցությունը և ներքին շուկայում կայունություն ապահովելու միջոց՝ անկախ արտաքին գործոններից: Վ. Ա. Սավինը համարում է, որ տնտեսական անվտանգությունը երկրի կենսական շահերը պաշտպանելու համակարգ է: Պաշտպանության օբյեկտ կարող է լինել երկրի տնտեսությունը՝ որպես ամբողջություն, կամ առանձին տարածաշրջանների տնտեսությունը, տնտեսության առանձին ոլորտներ և ճյուղեր, իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ որպես տնտեսական ակտիվության սուբյեկտներ: Ըստ Լ.Ի. Աբալկինի, տնտեսական անվտանգությունը պետական տնտեսական համակարգի վիճակ է, որը թույլ է տալիս նրան արդյունավետ զարգանալ և լուծել սոցիալական խնդիրներ, երբ պետությունը ունի անկախ տնտեսական քաղաքականություն իրականացնելու և զարգացնելու կարողություն:[23]

Շատ հեղինակներ տնտեսական անվտանգությունը բնութագրում են որպես տնտեսական համակարգի կայունություն արտաքին և ներքին գործոնների նկատմամբ, իսկ կայունությունը պահանջում է զարգացում: Եթե տնտեսությունը չի զարգանում, կտրուկ նվազում է նրա գոյատևման հնարավորությունը: Կայունությունն ու զարգացումը պահանջում են դինամիկ մոտեցում տնտեսական անվտանգության խնդրի լուծման համար: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ

[23] Абалкин Л. Экономическая безопасность России: угрозы и их отражение. Вопросы экономики. № 12. 1994г.

տնտեսական անվտանգության ցուցանիշները ժամանակի ընթացքում կարող են և պետք է փոխվեն: Տնտեսական անվտանգության վերաբերյալ գոյություն ունեցող բնորոշումները կարելի է բաժանել մի քանի խմբերի: Առաջին խմբին պատկանող հեղինակները (Լ. Աբալկին և այլք) «տնտեսական անվտանգությունը» սահմանում են որպես մի շարք պայմանների ամբողջություն, որոնք պաշտպանում են երկրի տնտեսությունը արտաքին և ներքին սպառնալիքներից: Երկրորդ խմբի հեղինակները (Բ. Սենչագով, Գ. Գուտման և այլք) տնտեսական անվտանգությունը կապում են պետության տնտեսության այնպիսի վիճակի հետ, որը թույլ է տալիս պաշտպանել իր կենսական շահերը: Երրորդ խմբի հեղինակները (Ա. Գորոդետսկի, Ա. Արխիպով), տնտեսական անվտանգության տակ հասկանում են տնտեսության կարողությունը ապահովելու, սոցիալական կարիքները հոգալու արդյունավետ հնարավորությունը ազգային և միջազգային շուկաներում:[24]

Ինչպես նկատում ենք բերված մեկնաբանություններից, դրանք ունեն որոշակի ընդհանրություններ՝ նախ և առաջ կապված արտաքին և ներքին սպառնալիքների բացասական ազդեցության կանխարգելման և չեզոքացման հետ: Այս առումով, կարելի է պնդել, որ տնտեսական անվտանգությունն ազգային տնտեսության պաշտպանվածությունն է ներքին և արտաքին սպառնալիքներից: Վերլուծելով այդ բոլոր տեսակետները, կարելի է եզրակացնել, որ տնտեսական անվտանգությունը երկրի ազգային անվտանգության բաղադրիչն ու անբաժանելի մասն է: Այն երկրի տնտեսության և պետական կառույցների այնպիսի վիճակն է, երբ ապահովվում են ազգային շահերի երաշխավորված պաշտպանությունը, քաղաքականության սոցիալական ուղղվածությունը, երկրի համարժեք պաշտպանունակությունը՝ նույնիսկ ներքին և արտաքին գործընթացների զարգացումների անբարենպաստ պայմաններում: Այն ենթադրում է պետության կողմից տնտեսական անվտանգության ապահովման ուղղությամբ համապատասխան կառուցակարգերի ստեղծում և ներդրում:

[24] Экономическая безопасность России. Общий курс. Под ред. В.К. Сенчагова. 4-е изд. М.: БИНОМ. 2012г. стр. 38

Տնտեսական անվտանգությունը այնպիսի տնտեսական իրավիճակի ձևավորումն է, որի դեպքում ապահովվում են ազգային շահերի երաշխավորված պաշտպանությունը, երկրի կայուն զարգացումը, ներքին և արտաքին անբարենպաստ զարգացումներին դիմակայումը: Ազգային շահերի պաշտպանությունն ապահովվում է տնտեսության զարգացման նախադրյալների ստեղծման, սոցիալական և քաղաքական կայունության պահպանման ուղղությամբ համապատասխան կառուցակարգեր ստեղծելու իշխանության կարողությամբ և պատրաստակամությամբ: Դ. Վ. Գորդիենկոն, բացահայտելով տնտեսական անվտանգության էությունը, այն դիտարկում է տարբեր կողմերից.

- որպես ազգային տնտեսության վիճակ, երբ մի շարք տնտեսական, արդյունաբերական և տեխնոլոգիական գործոններ թույլ են տալիս իրականացնել վերարտադրության ցիկլը,
- որպես ազգային տնտեսության բնականոն կենսագործունեությունն ապահովող պայմանների ստեղծման և ամրապնդման գործընթաց,
- որպես մի շարք փոխկապակցված կառուցվածքային տարրերի (արտադրական, նյութական, մարդկային) արդյունավետ փոխգործակցություն:[25]

Տնտեսական անվտանգության ռիսկերի ներքին աղբյուրներն են սոցիալական, քաղաքական, արդյունաբերական, բնապահպանական և ֆինանսական բնույթի գործոնների ազդեցության հետևանքով տնտեսական կառուցակարգի գործունեության խաթարումը, ինչպես նաև տնտեսության քրեականացման և կոռուպցիայի հետևանք հանդիսացող տնտեսական հարաբերությունների անկայունությունը:

Տնտեսական անվտանգության օբյեկտը տնտեսական հարաբերություններն են՝ արտահայտված տարբեր մակարդակների տնտեսական շահերով, իսկ սուբյեկտը՝ պետական իշխանությունը: Տնտեսական անվտանգությունը երկրի տնտեսության և նրա ենթահամակարգերի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարաբերությունների համակարգ է: Այս առումով, կայունությունը և անվտանգությունը

[25] Гордиенко Д. Основы экономической безопасности государства. М.: Финансы и статистика; ИНФРА-М, 2009г стр . 11

տնտեսական զարգացման նորմալ վերարտադրական ցիկլի ապահովման մասով լրացնում են միմյանց:

Տնտեսական անվտանգությունը բազմակողմանի, բազմաֆունկցիոնալ, բազմամակարդակ և համակարգային կատեգորիա է և բնութագրվում է անձի, հասարակության և պետության կենսական շահերին համապատասխանելիությամբ և տնտեսական հարաբերությունների համակարգի օպտիմալ գործունեության անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ: Այն ենթադրում է պետական իշխանության ինստիտուտների կողմից մի շարք միջոցառումների իրականացում տարբեր մակարդակներում անվտանգության ապահովման ուղղությամբ: Այն պետք է ապահովվի միջազգային, մակրոտնտեսական, ճյուղային, տարածքային և տնտեսավարող սուբյեկտների մակարդակով: Տնտեսական անվտանգությունը ենթադրում է հասարակության կենսական շահերի պաշտպանության, հնարավոր սպառնալիքների բացահայտման և դրանց կանխարգելման նպատակով ազգային տնտեսության բնականոն կենսագործունեության պայմանների ստեղծում ու ամրապնդում: Ըստ էության, գոյություն ունի սերտ կապ տնտեսական և սոցիալական անվտանգության միջև, ինչը նշանակում է, որ հասարակության անվտանգությունը օբյեկտիվորեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական երևույթ է: Երկրի տնտեսական անվտանգությունը, մի կողմից, գերհամակարգ է, որը բաղկացած է տնտեսական անվտանգության տարբեր ոլորտների մի քանի համակարգերից (որոնք ունեն իրենց ներքին կառուցվածքը և բաղկացած են միմյանց հետ ուղիղ և հետադարձ կապերով փոխկապակցված տարրերից), իսկ մյուս կողմից, դրանք միջազգային տնտեսական անվտանգության համակարգի ենթահամակարգ են, որն իր հերթին միջազգային անվտանգության գերհամակարգի մաս է կազմում: Այլ կերպ ասած, տնտեսական անվտանգությունը, որպես բարդ երևույթ գլոբալ և ազգային մակարդակով ստորադասվում է հետևյալ կերպ. գլոբալ մասշտաբով տնտեսական անվտանգությունը միջազգային անվտանգության համակարգի մասն է, որի անբաժանելի մասն է ազգային անվտանգությունը: Իր հերթին, ազգային մասշտաբով տնտեսական անվտանգությունը իրենից ներկայացնում է ազգային անվտանգության ենթահամակարգ:

Չնայած այն հանգամանքին, որ «տնտեսական անվտանգության» հասկացությունը մտել է գիտական շրջանառության մեջ ավելի քան 80 տարի առաջ և դրա վերաբերյալ գոյություն ունեն տարբեր սահմանումներ, այդուհանդերձ, դրա վերաբերյալ միասնական և համընդհանուր մոտեցում գոյություն չունի: Գ.Ա. Ատամանովի կարծիքով այդ ուղղությամբ հիմնական սխալներից մեկը «անվտանգություն» և «վտանգ» հասկացությունների միջև գոյություն ունեցող դիալեկտիկական կապի անտեսումն է: Որպես հիմնական թերություն նա առանձնացնում է անվտանգության մեկնաբանումը որպես «պաշտպանված վիճակ», անվտանգության նույնականացումը կայունության հետ, անվտանգության օբյեկտների և սուբյեկտների, սպառնալիքների աղբյուրների սխալ ընտրությունը, անվտանգության տեսակների և ենթատեսակների դասակարգման ժամանակ մեկ ընդհանուր բազայի բացակայությունը և տվյալ հասկացության մեկնաբանումն առանց հաշվի առնելու անվտանգության օբյեկտը և նրա կառուցվածքային բարդությունը:[26]

Տնտեսական անվտանգության ապահովման կարևոր ուղիներից մեկը արդյունավետ ներդրումային և ինովացիոն քաղաքականության մշակումն ու իրականացումն է: Ըստ էության, դրանից է հիմնականում կախված երկրի տնտեսության մրցունակությունը և տեղը համաշխարհային տնտեսության մեջ: Այս տեսանկյունից, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները պետք է նպաստեն նորարարությունների զարգացմանը, ինչն, իր հերթին, մեծապես պայմանավորում է ազգային տնտեսության զարգացման աստիճանը և որակը: Միաժամանակ, տնտեսության ներդրումային գրավչության բարձրացումը և գործարար միջավայրի բարելավումը որոշիչ նախադրյալ են հանդիսանում ներդրումների ներգրավման համար: Այս համատեքստում հատկապես կարևորվում է այնպիսի քայլերի իրականացումը, ինչպիսիք են մարդկային կապիտալի զարգացումն ու արդյունավետ օգտագործումը, ինովացիոն գործունեության իրականացմանը նպաստող ենթակառուցվածքների զարգացումը, նորարարական գործունեության նկատմամբ հարկման մեղմ պայմանների սահմանումը, փոքր և միջին բիզնեսին աջակցությունը և

[26] Атаманов Г. Азбука безопасности. Исходные понятия теории безопасности и их оп-ределения. Защита информации. Инсайд. 2012г. № 4.

այլն: Տնտեսական անվտանգության տեսանկյունից հատկապես կարևորվում է տեխնոլոգիական ճեղքվածքի հաղթահարումը և պետության ներդրումային ու ինովացիոն անվտանգության ապահովումը, ինչը կստեղծի նպաստավոր պայմաններ տեխնոլոգիական բազայի և ազգային ինովացիոն համակարգի զարգացման, ազգային տնտեսության գերակա ոլորտների արդիականացման և տնտեսության ներդրումային գրավչության բարձրացման համար:

Տնտեսական զարգացման ժամանակակից փուլում նորարարությունները նպաստում են ՀՆԱ-ի աճին, բարձր տեխնոլոգիական արտադրության զարգացմանը, աշխատանքի արտադրողականության աճին, ռեսուրսատար և էներգատար արտադրության կրճատմանը, տնտեսության մրցունակության ամրապնդմանը, բնակչության կյանքի որակի բարձրացմանը՝ հատկապես էկոլոգիապես մաքուր արտադրությունների ընդլայնման շնորհիվ: Պատահական չէ այն փաստը, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում զարգացած երկրներում գիտական հետազոտությունների համար կատարվող ծախսերը շարունակաբար աճում են: Պետության խնդիրն է ստեղծել արդյունավետ ինովացիոն համակարգ՝ խթանելով մասնավոր ներդրումները բարձր տեխնոլոգիական ճյուղերում, միաժամանակ, շարունակաբար ավելացնելով նորարարությունների զարգացմանն ուղղված բյուջետային ֆինանսավորման ծավալները:

Տնտեսական անվտանգության կարևոր բաղադրիչներից է ֆինանսական անվտանգությունը, որն իրենից ներկայացնում է ֆինանսական համակարգի ունակությունը՝ պետությանը որոշակի ժամկետում ապահովելու անհրաժեշտ ֆինանսական միջոցներով: Վերջիններս պետք է բավարար լինեն պետության գործառույթների պատշաճ իրականացման, սահմանադրական իրավունքների և կարգի պաշտպանության և այլ հիմնական խնդիրների լուծման համար: Պետական ֆինանսական համակարգը պետք է ի զորու լինի դիմագրավել ռիսկերին, սպառնալիքներին, ցնցումներին և ճգնաժամերին ոչ միայն սովորական, այլ նաև արտակարգ իրավիճակներում և պայմաններում: Անշուշտ, ֆինանսական անվտանգության ապահովման հիմնական գործիքները հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններն են: Ֆինանսական անվտանգության

ապահովման կարևոր խնդիրներից մեկը բանկային գործունեության վրա բացասաբար ազդող գործոնների չեզոքացումն ու բանկային կայուն համակարգի ձևավորումն է: Կարևոր նշանակություն ունի նաև այնպիսի ռիսկերի կառավարումը, ինչպիսիք են օտարերկրյա վարկային կազմակերպությունների մասնաբաժնի աճը կանոնադրական կապիտալում, ժամկետանց վարկերի ավելացումն ընդհանուր վարկավորման ծավալում, ակտիվների և կապիտալի շահութաբերության անկումը և այլն: Ֆինանսական անվտանգությունն ուղղակիորեն կապված է պետական պարտքի արդյունավետ կատավարման և դրա վերահսկելիության ապահովման հետ: Անհրաժեշտ է ժամանակին և լիարժեք ապահովել պետական պարտքի սպասարկումը, բարձրացնել դրա կառավարման ոլորտում հրապարակայնության և թափանցիկության աստիճանը, հստակեցնել պետության ռազմավարությունը արտաքին փոխառությունների ներգրավման հարցում, բարելավել առևտրային հաշվեկշռի կառուցվածքը և այլն: Ֆինանսական անվտանգության ապահովման գործում առանձնահատուկ նշանակություն ունի հարկաբյուջետային քաղաքականությունը, որն, անշուշտ, պետք է նպաստի ինչպես պետական ֆինանսական միջոցների կենտրոնացմանը, այնպես էլ չպետք է խոչնդոտի տնտեսական գործունեության իրականացմանը: Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացումը ենթադրում է բյուջետային համակարգի հավասարակշռելիություն և միջբյուջետային հարաբերությունների զարգացում, հարկային համակարգի կայունություն, հարկերի վճարումից խուսափելու հնարավորությունների բացառում, հիմնավորված հարկային արտոնությունների տրամադրում և այլն: Հարկային քաղաքականությունը պետք է ապահովի ֆիսկալ կայունություն, նպաստի ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և տնտեսական աճին: Ֆինանսական անվտանգության տեսանկյունից լուրջ հիմնախնդիր է ստվերային տնտեսության ծավալը, որը բացասաբար է ազդում ինչպես բյուջեի եկամուտների հավաքագրման, այնպես էլ երկրում մրցակցային միջավայրի ձևավորման վրա: Հարկային համակարգը պետք է համապատասխանի տնտեսական վերափոխումների պահանջներին, կարգավորիչ և խթանիչ ազդեցություն ունենա տնտեսական զարգացման տեսանկյունից գերակա ոլորտներում իրականացվող գործունեության վրա, նպաստի կառուցվածքային և

ինստիտուցիոնալ խնդիրների լուծմանը, ներդրումային գործընթացների ակտիվացմանը և տնտեսության ինովացիոն զարգացմանը: Անշուշտ, ֆինանսական անվտանգությունը ենթադրում է ոչ միայն պետական եկամուտների, այլ նաև հանրային ֆինանսների օգտագործման ուղղությամբ համալիր բարեփոխումների իրականացում՝ ուղղված պետական ծախսերի արդյունավետ, նպատակային և հասցեական օգտագործմանը:

Երկրի տնտեսական անվտանգության ապահովման գործում կարևոր պայման է հանդիսանում ընդլայնված վերարտադրության ռեժիմում գործելու տնտեսության ունակությունը: Հիմնական դերն այդ հարցում վերապահված է արտադրական կապիտալին, որը կարևոր գործոն է հանդիսանում նոր աշխատատեղերի ստեղծման, որակյալ ապրանքներով և ծառայություններով շուկայի հագեցման, բնակչության պահանջմունքների բավարարման և, վերջապես, պետության պաշտպանունակության բարձրացման և ազգային անվտանգության ապահովման գործում: Ակնհայտորեն, արտադրության ոլորտում առկա այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են արտադրության միջոցների բարոյական և ֆիզիկական մաշվածության բարձր և արտադրական ենթակառուցվածքների զարգացման ցածր աստիճանները, երկարաժամկետ վարկային ռեսուրսների մատչելիության ցածր մակարդակը, աշխատանքի արտադրողականության և ինովացիոն գործունեության ցածր մակարդակը, հայրենական ապրանքների և ծառայությունների ցածր մրցունակությունը և այլն, լուրջ մարտահրավերներ են հանդիսանում երկրի տնտեսական անվտանգության համար:

Ժողովրդագրական անվտանգությունը տնտեսական անվտանգության կարևոր բաղադրիչներից է և ունի անմիջական ազդեցություն ազգային, սոցիալական ու ռազմական անվտանգության վրա: Ծնելիության անկումը, մահացության աճը, կյանքի միջին տևողության կրճատումը, աշխատուժի թվաքանակի նվազումը, սեռային ու տարիքային կառուցվածքի վատթարացումը, մարդկային կապիտալի և կյանքի մակարդակի անկումը, հասարակության սոցիալական և ժողովրդագրական կառուցվածքի աղավաղումը, ընտանիքի ինստիտուտի թուլացումը և մի շարք այլ երևույթներ ժողովրդագրական անվտանգության լուրջ մարտահրավերներ են

հանդիսանում: Ակնայտ է, որ առանց վերջինիս հնարավոր չէ ապահովել տնտեսական աճ և պետության տնտեսական անվտանգությունն ամբողջությամբ: Այս ուղղությամբ կարևոր քայլեր են հանդիսանում բնակչության կյանքի մակարդակի և որակի բարձրացումը, ծնելիության բարձրացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, բնակչության առողջական վիճակի բարելավումը, երիտասարդ ընտանիքներին աջակցությունը, աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղման համար բարենպաստ պայմանների ստեղծումը և այլն: Միգրացիոն քաղաքականության ոլորտում, առաջին հերթին, անհրաժեշտ է կանգնեցնել արտագաղթը, որը հանգեցնում է երիտասարդների թվի կրճատման, «ուղեղների արտահոսքի», նվազեցնելով երկրի հոգևոր, գիտական և տեխնիկական ներուժը:

Տնտեսական անվտանգության հիմնական ուղղություններից մեկը երկրի էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացումն է, որը ենթադրում է էներգիայի կայուն և հուսալի մատակարարում, էներգախնայողության բարձրացում, ներքին էներգետիկ ընկերությունների մրցունակություն, էներգետիկ ռեսուրսների սղաճի կանխում, վառելիքի ռազմավարական պաշարների ստեղծում, ռեզերվային հզորությունների ստեղծում, էներգետիկ և ջերմամատակարարման համակարգերի կայուն շահագործում, էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացում: Առանց էներգետիկ անվտանգության ապահովման, որպես առավել կարևոր տնտեսական անվտանգության ենթահամակարգի, չեն կարող ապահովվել ազգային անվտանգության մյուս բոլոր ձևերը՝ ռազմական, քաղաքական և այլն: Անշուշտ, յուրաքանչյուր տնտեսության համար Էներգետիկ ռեսուրսներն ունեն ռազմավարական նշանակություն, քանի որ տնտեսական գործունեության հիմքն են կազմում: Դրանց սահմանափակության պայմաններում էներգետիկ անվտանգության ապահովման տեսանկյունից առաջնային նշանակություն է ստանում ռեսուրսախնայող քաղաքականության իրականացումը և վերականգնելի էներգիայի աղբյուրների կիրառման շրջանակների ընդլայնումը:

Տնտեսական անվտանգության հիմնական գործոններից է բարձր կենսամակարդակի ապահովումը: Սոցիալական ոլորտի այնպիսի հիմնախնդիրներ,

ինչպիսիք են բնակչության եկամուտների մակարդակի կրճատումը, աշխատավարձի ցածր մակարդակը, ծառայությունների որակի նվազումը, առողջության, կրթության, բնակարանային ոլորտում դրանց ձեռքբերման հետ կապված ծախսերի աճը, սոցիալական խորը բևեռացումը, աղքատության մակարդակի բարձրացումը և այլն վտանգում են տնտեսական անվտանգությունը:

Սոցիալական ապահովության մակարդակի անկումը հիմնականում բնութագրվում է պետական բյուջեում կրթության ոլորտի ծախսերի մասնաբաժնի կրճատմամբ, նվազագույն սպառողական զամբյուղի համեմատ միջին կենսաթոշակի հարաբերական նվազմամբ, կենսապահովման մակարդակի համեմատ նվազագույն աշխատավարձերի հարաբերական նվազմամբ, ցածր եկամուտներով մարդկանց թվաքանակի աճով և այլն:

1.3. Տնտեսական անվտանգության ռիսկերը և սպառնալիքները

Տնտեսական անվտանգությունը տնտեսության այնպիսի վիճակ է, որն ապահովում է երկրի առաջադիմական զարգացման բավարար մակարդակ՝ արտաքին և ներքին սպառնալիքներից ու բացասական ազդեցություններից իր տնտեսական շահերի պաշտպանության ու անկախության ապահովման նպատակով: Նման պայմաններում պետությունը ունենում է լայն հնարավորություններ ինքնիշխան կերպով, առանց արտաքին ազդեցությունների, որոշել տնտեսական զարգացման համար նախընտրելի ուղիները և ձևերը: Այն ոչ միայն ազգային շահերի պաշտպանության կարողությունն է, այլև պետական իշխանության պատրաստակամությունն ու հնարավորությունը՝ ստեղծելու կառուցակարգեր տնտեսության զարգացման, հասարակության սոցիալ-քաղաքական կայունության պահպանման համար: Միայն այդ դեպքում է հնարավոր դառնում մարդու, հասարակության և պետության շահերի պաշտպանությունը: Անշուշտ, ազգային անվտանգության վիճակը կախված է պետության կենսունակությունից, տնտեսության

զարգացման աստիճանից, կառավարման համակարգի արդյունավետությունից և մրցունակությունից:

Երկրի տնտեսական անվտանգությունը շարունակաբար ենթարկվում է տարաբնույթ սպառնալիքների, որոնք կարող են հանգեցնել տնտեսական համակարգի հաշվեկշռվածության խախտմանը և խաթարել դրա բնականոն գործունեությունը: Այս տեսանկյունից, տնտեսական անվտանգությունը հանդես է գալիս որպես երկրի կայուն զարգացման հիմնական գրավականներից մեկը, որի ապահովումը պետության գերակա առաջնահերթություններից է: Ըստ էության, դրա համար, նախ և առաջ, անհրաժեշտ է բացահայտել տնտեսական անվտանգության հիմնական սպառնալիքները, ինչը հնարավորություն կտա մշակել դրանց կանխարգելման կամ բացասական ազդեցության չեզոքացման միջոցառումներ: Պետք է նշել, որ այդ սպառնալիքները տարբեր են ինչպես իրենց ծագման բնույթով, այնպես էլ ներգործության աստիճանով: Այս տեսանկյունից, տնտեսական անվտանգության սպառնալիքների օբյեկտիվ և հիմնավորված դասակարգումը կարևոր նշանակություն ունի դրանց արդյունավետ կառավարման և չեզոքացման գործիքների ընտրության համար: Տնտեսական անվտանգությունն իրենից ներկայացնում է արտաքին և ներքին պայմանների այնպիսի համախումբ, որը նպաստում է ազգային տնտեսության դինամիկ աճին, պետության, հասարակության և անհատի պահանջմունքների բավարարմանը, արտաքին շուկաներում տնտեսության մրցունակության բարձրացմանը: Հետևաբար, տնտեսական անվտանգության սպառնալիքներ պետք է դիտարկել հասարակական վերարտադրության նորմալ ընթացքը խաթարող վտանգավոր զարգացումները, որոնց ծագման և դրսևորման արդյունքում տնտեսական համակարգի բնականոն գործունեությունը հնարավոր չի լինի ապահովել՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Պետության տնտեսական անվտանգությունը հիմնականում որոշվում է երկրի ներսում սոցիալ-տնտեսական հարաբերությունների և արտադրողական ուժերի զարգացման աստիճանով, տնտեսությունում նորագույն տեխնիկայի և արդիական տեխնոլոգիաների առկայությամբ, արտադրական նորարարությունների ինտենսիվությամբ և այլն, իսկ երկրից դուրս՝ միջազգային իրադրությամբ և արտաքին

տնտեսական հարաբերություններով: Ներքին անվտանգության վրա հիմնականում բացասական ազդեցություն են ունենում արտադրության անկումը, գործազրկության աճը, մենաշնորհների և ստվերային տնտեսության առկայությունը, կոռուպցիայի բարձր մակարդակը և նմանատիպ այլ երևույթներ, որոնք հասարակության մեջ առաջացնելով բարոյական և հոգեբանական լարվածություն, իրենց հերթին, հանգեցնում են ազգային անվտանգության կայունության խախտման: Այդպիսի իրավիճակներում տնտեսական ներքին սպառնալիքները հեշտությամբ կարող են վերածվել նաև արտաքինի, ինչն ուժեղ պետության հետ տնտեսական հարաբերությունների գործընթացում՝ միջազգային տնտեսական ինտեգրացիայի պայմաններում, կարող է հանգեցնել ազգային տնտեսության անկախության կորստի:

Ինչպես արդեն նշեցինք, անվտանգությունն, ընդհանուր առմամբ, այնպիսի վիճակ է, երբ օբյեկտին որոշակի իմաստով վտանգ չի սպառնում և գոյություն ունի պաշտպանվածության հստակ գործող համակարգ՝ ապահովված անհրաժեշտ հակակշիռներով ու սպառնալիքների չեզոքացման կառուցակարգերով: Սակայն, հարկ է նաև նշել, որ ինչպես անհատի և հասարակության, այնպես էլ պետության համար անվտանգության վիճակը դեռևս չի նշանակում վտանգների բացառում: Դրանք մշտապես հնարավոր են և որոշ իմաստով նույնիսկ նպաստում են տնտեսական ակտիվության զարգացմանը և ներքին ռեսուրսների հավաքագրմանը: Ուստի, անվտանգությունը ոչ թե վտանգների բացակայությունն է, այլ դրանցից պաշտպանվածությունն է, որոնք, ըստ էության, նաև տնտեսության զարգացման խթան են հանդիսանում: Հետևաբար, տնտեսական անվտանգությունը հանդիսանում է տնտեսության զարգացման վրա հիմնված, երկրի կայուն առաջընթացի գլխավոր նախապայմաններից մեկը, որի բացակայության պայմաններում հնարավոր չէ երկրի տնտեսական համակարգի նորմալ գործունեությունը: Այն առավել չափով արտահայտվում է հատկապես շուկայական հարաբերություններին անցման շրջանում տնտեսության կտրուկ փոփոխություն ապրող երկրների կյանքում, որի լավագույն օրինակ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը՝ իր ներկայիս քայքայված և ընկճված տնտեսությամբ, որին զարգացման թափ հաղորդելու համար անհրաժեշտ է նախ ապահովել երկրի տնտեսական անվտանգությունը: Բացառապես այս

հիմնախնդրի ապահովման դեպքում է միայն հնարավոր երկրի տնտեսության զարգացումը և պետական ու հասարակական կյանքում ծառացած բազմաթիվ խնդիրների արդյունավետ լուծումը:

Տնտեսական անվտանգության սպառնալիքների բացահայտման համար, նախ և առաջ, անհրաժեշտ է հստակեցնել «ռիսկ», «վտանգ» և «սպառնալիք» հասկացությունները, պարզել դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունները, որոշակիացնել այն հնարավոր պայմանները և իրավիճակները, որոնց դեպքում պոտենցիալ ռիսկը կվերաճի սպառնալիքի, իսկ հետագայում՝ նաև տնտեսական համակարգի համար վտանգի: Այս առումով, տնտեսական անվտանգության խնդիրների քննարկման ժամանակ անհրաժեշտ է տարբերակել սպառնալիքները, վտանգներն ու ռիսկերը, դրանց դրսևորման եղանակներն ու ձևերը, ինչի արդյունքում միայն հնարավոր կդառնա մշակել մոտեցումներ դրանց հետևանքների վերացման և մեղմման ուղղությամբ:

Տնտեսական անվտանգության տեսանկյունից ռիսկերը, վտանգները և սպառնալիքները կարող են հանդես գալ որպես միևնույն կատեգորիայի տարբեր տեսակի բնութագրեր: Այդ հասկացությունների միջև գոյություն ունեցող տարբերությունների հստակեցման համար դիտարկենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին: <<Ռիսկ>> հասկացությունը կարելի է բնութագրել որպես անբարենպաստ հետևանքների վերահաս հնարավորություն: Այլ կերպ ասած, ռիսկի գործոնը ստեղծում է բարենպաստ իրավիճակ վտանգի առաջացման համար: Վերջինս իրենից ներկայացնում է բացասական ազդեցությունների հնարավորություն, ինչի արդյունքում հասցվում է վնաս և վատթարանում է իրավիճակն ամբողջությամբ: Սպառնալիքը, որպես վտանգի առավել կոնկրետ ձև, անմիջական բացասական ազդեցություն է ունենում տնտեսության կամ տնտեսավարող սուբյեկտի վրա: Գործողությունների շղթան ունի հետևյալ հաջորդականությունը: Սպառնալիքի առաջացման գործընթացի առաջին փուլում առաջանում է ռիսկը, որից հետո դրսևորվում է վտանգավոր իրավիճակ՝ կանխորոշելով հնարավոր բացասական ազդեցությունը: Այնուհետև ձևավորվում է սպառնալիքը, որը կարող է, հանգեցնել բացասական հետևանքների, այդ թվում՝ վնաս պատճառելով սուբյեկտին:

Արդյունքում, ռիսկն իրենից ներկայացնում է վտանգի բացասական հետևանքների ամենաբարձր աստիճանը, որն առաջանում է սուբյեկտների՝ ռիսկի և վտանգի նախորդ երկու փուլերի անցումից հետո: Արդյունքում, կարելի է եզրակացնել, որ տնտեսական անվտանգության համակարգի ստեղծման համար պահանջվում է կանխել կամ էապես նվազեցնել դրա ռիսկերի և սպառնալիքների հետևանքները:

Տնտեսական անվտանգության սպառնալիքներն իրենցից ներկայացնում են մի շարք պայմանների և գործոնների համախումբ, որոնք խոչընդոտում են երկրի տնտեսական շահերի իրականացմանը՝ առաջացնելով տնտեսության վնաս պատճառելու հնարավորություն: Այս տեսանկյունից, սպառնալիքների գնահատման համար կարևոր է վերլուծել երկրի տնտեսական ներուժի կրճատման վրա ազդող գործոնները որոշակի ժամանակահատվածի կտրվածքով: Ընդ որում, պետք է տարբերակել տնտեսական անվտանգության ինչպես իրական, այնպես էլ պոտենցիալ սպառնալիքները, որոնք կարող են հանգեցնել տարբեր տեսակի ճգնաժամային իրավիճակների առաջացմանը և կենսագործունեության անբարենպաստ պայմանների ձևավորմանը: Հետևաբար, տնտեսական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել սպառնալիքների բազմակողմանի վերլուծություն:

Տնտեսական զարգացման ներկա փուլում գոյություն ունեն տարբեր գործոններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ տնտեսական համակարգի գործունեության վրա, և դրանցից յուրաքանչյուրը բնութագրվում է տարբեր հետևանքներով: Այս առումով, յուրաքանչյուր երկրի տնտեսության համար սպառնալիքները յուրահատուկ են, ինչը ենթադրում է պետության կողմից իր համար առավել նշանակալի սպառնալիքների կանխատեսում և դրա հիման վրա կոնկրետ միջոցառումների մշակում՝ ուղղված դրանց կանխարգելմանն ու չեզոքացմանը: Ելնելով ազդեցության ոլորտից, կազմից, գործողության տևողությունից, դրսևորման հավանականությունից, ազդեցության աստիճանից, տնտեսական անվտանգության սպառնալիքները դասակարգվում են հետևյալ կերպ (Աղյուսակ 1):

Տնտեսական անվտանգության սպառնալիքների նման դասակարգումը հնարավորություն է տալիս պարզել որոշակի տիպի տնտեսական գործունեության ազդեցությունը պետության տնտեսական համակարգի որակական և քանակական

բնութագրերի վրա, տնտեսական գործունեության առանձին տեսակների միմյանցից փոխկախվածության մակարդակը և դրանց ընդհանուր ազդեցության աստիճանը պետության տնտեսական համակարգի վրա, տնտեսական անվտանգության սպառնալիքի ռիսկի մակարդակը, տեսակը և այլն:

Անշուշտ, տնտեսական անվտանգության սպառնալիքներից որոշներն իրենց ազդեցության սահմանների և մասշտաբների ընդգրկվածությամբ առավել լուրջ բնույթ ունեն, որոնք առանձնահատուկ ուշադրության պետք է արժանանան այդ ուղղությամբ պետական քաղաքականության առումով՝ ժամանակին դրանց չեզոքացման կառուցակարգի ձևավորման համար: Որպես այդպիսիք պետք է դիտարկել ժողովրդագրական, սոցիալ-մշակութային, տեղեկատվական, քաղաքական, պարենային, էներգետիկ, ֆինանսական անվտանգությանն ուղղված սպառնալիքները: Վերջիններս ունեն առաջացման բավականաչափ բարձր ռիսկի աստիճան, ինչը պահանջում է իրավասու պետական մարմինների օպերատիվ միջամտությունը՝ դրանց արագ կանխարգելման և չեզոքացման համար:[27]

Տնտեսական անվտանգության ապահովման առումով կարևոր նշանակություն ունի հատկապես արտաքին և ներքին սպառնալիքների դասակարգումը: Առաջինների շարքին կարելի է դասել:

Աղյուսակ 1

Տնտեսական անվտանգության սպառնալիքների դասակարգումը

Տնտեսական անվտանգության սպառնալիքների դասակարգման չափանիշը	Տնտեսական անվտանգության սպառնալիքները
Դրսևորման ոլորտը	Միջազգային և ազգային
Մարդկային կենսագործունեության ոլորտը	Տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական և այլն

[27] Саяпин А. Инвестиционный климат как проявление экономической безопасности региона. Социально-экономические явления и процессы. Тамбов. 2011г. № 3-4.

Առաջացման բնույթը	Օբյեկտիվ և սուբյեկտիվ
Ծագման հավանականությունը	Անհավանական, քիչ հավանական, բավականաչափ հավանական
Կանխատեսման հնարավորությունը	Կանխատեսելի և անկանխատեսելի
Ազդեցության գնահատման հնարավորությունը	Չափելի և ոչ չափելի
Կանխարգելման հնարավորությունը	Ֆորս մաժորային և ոչ ֆորս մաժորային
Դրսևորման հավանականությունը	Իրական և պոտենցիալ
Կազմը	Բարդ և պարզ
Գործողության ժամանակահատվածը	Մշտական և փոփոխվող
Ազդեցության բնույթը	Ակտիվ և պասիվ
Բացասական հետևանքների աստիճանը	Սահմանային, զգալի և ոչ զգալի

1. Համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող գլոբալիզացիոն գործընթացները, ինչի արդյունքում մեծանում է մի երկրի ընկերությունների լայնածավալ ներթափանցման հնարավորությունն այլ երկրների տնտեսություն, դրանով իսկ ազդելով վերջինիս սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

2. Պարենամթերքի և առաջնային նշանակություն ունեցող այլ ապրանքների, ինչպես նաև հանքահումքային ռեսուրսների ներմուծման կախվածության աճը արտաքին շուկաներից:

3. «Ուղեղների արտահոսքը», որն ուղղակիորեն հանգեցնում է երկրում գիտական մտքի և որակյալ կադրերի կրճատմանը՝ դրանից բխող բացասական հետևանքներով:

4. Կապիտալի ապօրինի արտահոսքը:

Տնտեսական անվտանգության ներքին սպառնալիքների թվին են պատկանում համախառն ներքին արդյունքի էական կրճատումը, ներդրումային, ինովացիոն գործունեության և գիտատեխնիկական ներուժի նվազումը, տնտեսության իրական հատվածում իրավիճակի վատթարացումը, բանկային համակարգի անարդյունավետ գործունեությունը, պետական պարտքի ոչ կառավարելի աճը, արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի խորացումը, բնակչության եկամտային և գույքային

բևեռացումը, աղքատության մակարդակի բարձրացումը, ժողովրդագրական իրավիճակի վատթարացումը և այլն:

Բացի նշվածներից, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար սպառնալիքներ կարող են ստեղծել նաև.

- զինված հարձակման վտանգը,
- երկրի անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության դեմ ոտնձգությունները,
- տրանսպորտային, ջրային, ցամաքային, օդային շրջափակումը, պետության դեմ ռազմական դաշինքների կազմավորումը,
- օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետության ներքին գործերին միջամտելու և ներքաղաքական իրադրությունն ապակայունացնելու փորձերը,
- միջազգային ահաբեկչությունը և տարածաշրջանային կոնֆլիկտները,
- միջազգային հարաբերություններում բացասական զարգացումները,
- պետական համակարգի անկատարությունը,
- իրավական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացի դանդաղումը,
- ժողովրդավարության վտանգումը,
- հասարակական հարաբերությունների քրեականացումը,
- այլ պետությունների կողմից տնտեսական ճնշման և տնտեսական լծակների կիրառումը,
- տնտեսության զարգացման ցածր մակարդակը,
- հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական բևեռացումը,
- ժողովրդագրական վիճակի բացասական փոփոխությունները, արտագաղթը,
- բնակչության կենսամակարդակի անկումը և աղքատության համատարած բնույթը,
- գործազրկության բարձր մակարդակը և բնակչության զբաղվածության հիմնահարցը,
- երկրի էկոհամակարգերի հավասարակշռության խախտումը,

- կրթական և գիտական համակարգում առկա բացասական միտումները, կրթական և գիտական ներուժի անկումը, «ուղեղների» արտահոսքը,
- կրոնական, հոգևոր զարգացման մակարդակի անկումը,
- հոգևոր և բարոյական արժեքների խաթարումը,
- կրոնական տարբեր աղանդների տարածումը,
- կոռուպցիան և այլն:

Տնտեսական ոլորտում սպառնալիքները հիմնականում պայմանավորված են համախառն ներքին արդյունքի կրճատմամբ, ներդրումային ակտիվության անկմամբ, գիտատեխնիկական ներուժի նվազմամբ, պետական պարտքի աճով, վճարային հաշվեկշռի բացասական տարբերությամբ, ճյուղային անհամաչափություններով, ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործմամբ, զարգացման ռազմավարության բացակայությամբ, ներքին մրցակցության չապահովմամբ, ստվերային տնտեսության ծավալների առկայությամբ, օրենսդրության անկատարությամբ, զարգացման գերակայությունների բացակայությամբ: Տնտեսական հիմնահարցերով պայմանավորված՝ գիտատեխնիկական ներուժի նվազումը, գիտական հետազոտությունների կրճատումը, մտավոր ներուժի արտահոսքը Հայաստանի Հանրապետությանը սպառնում են առաջավոր դիրքի և պաշտպանունակության կորստով, գիտարար արտադրությունների վերացմամբ, արտաքին տեխնոլոգիական կախվածության աճով: Տնտեսության մեջ բացասական երևույթները հանգեցնում են քաղաքական և սոցիալական անկայունությանը, տնտեսական և հաղորդակցական կապերի, ինչպես նաև ֆինանսավարկային ու հարկաբյուջետային համակարգերի թուլացմանը:

Հասարակական հարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության սպառնալիք են ստեղծում տնտեսական, սոցիալական, կազմակերպական, իրավական և պետական կարգավորման այլ ոլորտներում առկա իրավիճակով պայմանավորված հասարակական հարաբերությունների քրեականացումը, հանցագործությունների աճը և կոռուպցիան, օրենքի գերակայության երաշխավորման սկզբունքի անտեսումը: Սոցիալական

ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության սպառնալիք են ստեղծում հասարակության սոցիալական բևեռացումը, բնակչության աղքատացումը, գործազրկության աճը, բնակչության զբաղվածության ապահովման հիմնահարցը: Բնակչության ֆիզիկական զարգացման և առողջության համար սպառնալիք կարող են դառնալ բնակչության սոցիալական պաշտպանության և առողջապահության համակարգերի անկատարությունը: Սոցիալական ճգնաժամի հետևանք են արտագաղթը, երկրում ծնելիության և կյանքի միջին տևողության անկումը, հասարակության սոցիալական և ժողովրդագրական կազմի ձևախեղումը, աշխատանքային ռեսուրսների՝ որպես արտադրության զարգացման հիմքի նվազումը, հասարակության հիմնական բջջի՝ ընտանիքի թուլացումը, բնակչության հոգևոր, բարոյական և ստեղծագործական ներուժի նվազումը:

Արտաքին քաղաքականության ոլորտում հիմնական սպառնալիքներ ստեղծող գործոններն են.

- ռազմաքաղաքական այնպիսի դաշինքների և միությունների գործունեությունը, որը կարող է վտանգ ստեղծել Հայաստանի Հանրապետության համար,
- երկրի պետական սահմանի և նրա դաշնակիցների սահմանների մոտ հակամարտությունների ծագումը և զարգացումը,
- տարածաշրջանի չկարգավորված խնդիրները,
- այլ պետությունների շահերի բախումը տարածաշրջանում,
- անդրազգային ընկերությունների և կորպորացիաների հետ առնչվող շահերը, որոնք նպաստում են բաժանարար գծերի առաջացմանը,
- գլոբալիզացիոն գործընթացների աշխարհաքաղաքական բացասական միտումները,
- այլ երկրներում գտնվող հայկական համայնքների նկատմամբ միջազգային նորմերը չկիրառելը:

Տեղեկատվական ոլորտի սպառնալիքներն են հեռահաղորդակցային համակարգերի բնականոն գործունեության խաթարումը, ինչպես նաև տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվության միջոցների թույլ

պաշտպանվածությունը, չթույլատրված մուտքերի հնարավորությունը, անօրինական կարգով տրամադրված տեղեկատվությունը (տեղեկատվության արտահոսքը):

Պաշտպանության ոլորտում սպառնալիքներ կարող են ստեղծել Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված ռազմաքաղաքական և ռազմական դաշինքների ու միությունների ուժային գործողությունները, ՀՀ դաշնակից չհանդիսացող պետությունների ռազմակայանների տեղաբաշխումը և ռազմական միավորումների կուտակումը Հայաստանի Հանրապետության սահմանների հարևանությամբ, ռազմական անվտանգության դեմ ուղղված գործողությունները, Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության անհրաժեշտ պայմանների անբավարար ապահովումը և այլն:

Բնապահպանական ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար սպառնալիք կարող են ստեղծել տնտեսական գործունեության բնույթը, օրենսդրության անկատարությունը, ռեսուրսախնայող տեխնոլոգիաների սահմանափակ օգտագործումը կամ բացակայությունը, տվյալ ոլորտի վերահսկողության անբավարար մակարդակը, էկոլոգիական ցածր կուլտուրան, շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների բանական օգտագործման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հնարավոր կանխարգելման և դրանց հետևանքների վերացման տնտեսական և իրավական կառուցակարգերի անբավարարությունը կամ բացակայությունը:

Ըստ էության, նշվածներն այն հիմնական սպռնալիքներն են, որոնք կարող են խաթարել երկրի տնտեսական անվտանգության մակարդակը և որոնց ազդեցության չեզոքացմանն ու վերացմանը պետք է ուղղված լինի այդ նպատակով իրականացվող պետական քաղաքականությունը:

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 ՀՀ տնտեսական զարգացման մարտահրավերները

Անկախացման անցած տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում այդպես էլ չստեղծվեց ազգային անվտանգության սպառնալիքների գնահատման և դրանց հետևանքների վերացման անհրաժեշտ համակարգ: Հաշվի առնելով նաև ՀՀ տնտեսության ոչ արդիական կառուցվածքը, ստվերային տնտեսության չափերը, կոռուպցիոն ռիսկերի, արտաքին պարտքի մակարդակը, ինչպես նաև քաղաքական բնույթի դեռևս չլուծված որոշ հիմնախնդիրների առկայությունը, ազգային անվտանգության մասին ՀՀ-ում անհրաժեշտ իրավական հիմքերի ձևավորումը և անվտանգության սպառնալիքների գնահատման ու դրանց դեմ պայքարի միասնական պետական համակարգի ստեղծումը դառնում են հրամայական պահանջ:

Հայաստանում ազգային անվտանգության ապահովման հիմնական ուղղությունների ուսումնասիրությունը[28] ցույց է տալիս, որ դա ազգային շահերի ամբողջությունն է, որոնք պետք է ձևակերպված լինեն ազգային անվտանգության հայեցակարգում՝ արտահայտելով հանրապետության անվտանգության համար շահերի և գերակայությունների առաջնահերթություններն ըստ կարևորության աստիճանի: Դրանց մեջ որպես կարևորագույն բաղադրիչ հանդես է գալիս տնտեսական գործոնը, որի ոչ լիարժեք պաշտպանվածությունը հանդիսանում է սպառնալիք երկրում վտանգավոր իրավիճակների ստեղծման համար, քանի որ այն որոշիչ կարող է դառնալ պետության հեռանկարի հարցում:[29]

Ազգային անվտանգության մյուս կարևոր գործոններից է էներգետիկ անկախության և էներգետիկ անվտանգության ապահովման խնդիրները, որոնք

[28] Բոստանջյան Վ. Ազգային անվտանգության ապահովման հիմնական ուղղությունները, Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում. Գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2007թ, էջ 131-140:

[29] Ղուշչյան Հ. ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը, Բանբեր Երևանի համալսարանի, 2000թ., թիվ 3:

ռազմավարական նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության համար: Այդ խնդիրների շրջանակում հանրապետության և հարավային Կովկասի տարածաշրջանի էներգետիկ անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ հայ և օտարերկրյա մասնագետների կողմից իրականացված վերլուծություններում ու ուսումնասիրություններում[30] ներկայացված են գործնական տարբեր մոտեցումներ, որոնք կարող են օգտագործվել էներգետիկ անվտանգության հայեցակարգերի մշակման գործում:[31]

Արդի ժամանակաշրջանում գլոբալիզացիայի և միջազգային տնտեսական ինտեգրացիայի պայմաններում զարգացող երկրների վրա արտաքին աշխարհի տնտեսական և քաղաքական դրական ազդեցություններին զուգահեռ, անշուշտ, մեծանում է նաև նոր սպառնալիքների առաջացման ռիսկերի հավանականությունը: Բնականաբար, դա բացասաբար է ազդում զարգացող երկրի տնտեսական, հետևաբար և ազգային անվտանգության վրա: Այս իրավիճակներում ավելի է կարևորվում պետության դերը երկրի տնտեսական անվտանգության ապահովման գործում, պահանջելով կառավարման համակողմանիորեն հիմնավորված ռազմավարության կիրառում՝ ուժեղացնելու համար ազգային անվտանգության պաշտպանությունը, չեզոքացնելու երկրի զարգացմանը խոչընդոտող ներքին և արտաքին սպառնալիքները, դիմակայելու հնարավոր մարտահրավերներին և հաղթահարելու դրանցով պայմանավորված հետևանքները: Միջազգային տնտեսական ինտեգրացիայի և գլոբալիզացիայի պայմաններում ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդրին առնչվող հարցերը լայնորեն ուսումնասիրված են հայ մասնագետների կողմից և իրենց արտացոլումն են ստացել մի շարք գիտական աշխատություններում:[32]

---

[30] Կարապետյան Կ. Էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատման ամփոփ (ինտեգրալային) ցուցանիշը և կանխատեսումները, 2009թ. 21-րդ ԴԱՐ, թիվ 4 (26); Հայաստանի դերը հարավացին Կովկասի տարածաշրջանի էներգետիկ անվտանգության ապահովման գործում, 2008թ. 21-րդ ԴԱՐ, թիվ 4 (22): Հայաստանը եվ տարածաշրջանային էներգետիկ գործընթացները տեղեկատվական ապահովման համատեքստում, 2009, 21-րդ ԴԱՐ, թիվ 1:

[31] Մարկոսյան Ա. Հայաստանը XXI դարի մարտահրավերների առջև, Երևան, 2004թ. 458 էջ: Խաչիկյան Գ., Մանասերյան Թ. Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման տեսագործնական մոտեցումներ, 'Рынок капитала в Армении', N 7, 8 (65-66), 2001թ. Երևան, էջ 21-26: Աթոյան Վ. Ազգային անվտանգության հիմնախնդիրներ, «Տնտեսագետ», Երևան, 2014թ. 152 էջ: Михайлов Л. Основы национальной безопасности: М., Изд. «Академия», 2008г.стр. 39.

[32] Սուվարյան Յու. Ռազմավարական կառավարում: Մեթոդաբանությունը և արդի հիմնահարցերը, Տնտեսագետ, Երևան, 1996թ. 150 էջ: Դարբինյան Ա., Հայաստանը միջազգային տնտեսական

Կառավարման շուկայական կառուցակարգերի ձևավորմանն անցած նորանկախ երկրներին բնորոշ առանձնահատկություններն, ազգային, հետևաբար նաև տնտեսական անվտանգության ապահովման համակարգի ստեղծման գործընթացի առջև դնում են սկզբունքորեն նոր պահանջներ, որոնք ենթադրում են ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալական և տնտեսական ճկուն ու արդյունավետ քաղաքականության իրականացում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման քայլերի իրականացման համար անհրաժեշտ է վերը նշված ռազմավարական գերակա ուղղությունների շրջանակում առաջին հերթին լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ազգային շահերի դասակարգումը, անվտանգության ապահովման հիմնական սկզբունքների սահմանումը և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավոր մարտահրավերների կանխատեսումը: Նշված քայլերից հետո անհրաժեշտ է իրականացնել տնտեսական անվտանգության՝

- մակարդակի համակողմանի գնահատում,
- ինստիտուցիոնալ բաղադրիչի ապահովում,
- իրավական հիմքերի ձևավորում,
- ներքին և արտաքին սպառնալիքների բացահայտում,
- անհրաժեշտ համակարգի ձևավորման մոտեցումների մշակում,
- մակարդակի բարձրացման ռազմավարական ուղղությունների որոշում:

Հարկ է նշել, որ ներքին և արտաքին սպառնալիքների համադրումը վկայում է, որ Հայաստանի համար առավել վտանգավոր են ներքին սպառնալիքները: Արտաքին սպառնալիքների մի շարք դրսևորումներ (երկրի արտաքին պարտքի անընդհատորեն ավելացումը, մերձավոր արտերկրի պետությունների հետ արտաքին առևտրային շրջանառության սահմանափակ ծավալներ և այլն) ներքին պատճառների հետևանք են. այն է՝ տնտեսության ցածր արդյունավետություն, վերամշակող ճյուղերի անբավարար մրցունակություն, արտադրության մեջ հին տեխնոլոգիաների ու հնացած սարքավորումների օգտագործում և մի շարք հարակից այլ գործոններ:

Տնտեսական անվտանգության սպառնալիքները ներթափանցել են հանրապետության տնտեսության գրեթե բոլոր բնագավառները, էապես ազդելով

ինտեգրացման գործընթացում, Պետական ծառայություն, Երևան, 2000թ, 302 էջ: Թադևոսյան Զ., Գալոյան Դ. Միջազգային տնտեսական ինտեգրացիա, Տնտ., Երևան, 2006թ. 180 էջ:

մարդու կենսագործունեության ամենատարբեր ոլորտների վրա: Իրականացվող տնտեսական քաղաքականությունը, որը հանգեցրել է արտադրության անկման, ինչպես նաև վերջինիս կառուցվածքային վերափոխման բացակայությունը, որն արհեստականորեն խոչընդոտում է արտադրության նորմալ գործողությանը և դրա բնականոն զարգացմանը, իր հերթին, հանգեցրել է նաև զբաղվածության խիստ կրճատմանը. գործոններ, որոնք քայքայում են ազգային անվտանգության հիմքերը:

Պետք է նշել, որ վերջին տարիների զարգացումները հանրապետության տնտեսական վիճակի բարելավման և երկրի տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից հուսադրող չեն: Մասնավորապես, 2016 թվականին տնտեսության զարգացման տեմպերը, պահպանելով նախորդ տարիների միտումները, զգալիորեն դանդաղել են, ինչը հիմնականում պայմանավորված է հիմնական գործընկեր երկրների տնտեսական անբարենպաստ զարգացումներով, մետաղների միջազգային գների անկմամբ, Ռուսաստանից դրամական փոխանցումների կրճատմամբ: Վերոնշյալ զարգացումների պայմաններում 2016 թվականին գրանցվել է 0.2% տնտեսական աճ, որը 2015 թվականի ցուցանիշին զիջում է 2.8 տոկոսային կետով: Ընդ որում, արձանագրված տնտեսական աճին նպաստել են արդյունաբերությունը՝ 0.8 տոկոսային կետով և ծառայությունների ճյուղը՝ 1.9 տոկոսային կետով, իսկ գյուղատնտեսությունը և շինարարությունն ունեցել են նույն չափով բացասական ազդեցություն՝ 1.0 տոկոսային կետով (տե՛ս Գծապատկեր 2): Եթե արդյունաբերության արտադրանքի ծավալը և ծառայությունների ոլորտը աճել են համապատասխանաբար 6.7%-ով և 7.1%-ով, ապա գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում արձանագրվել է համապատասխանաբար 5.0 % և 10.8% անկում: 2016 թվականին կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ կրճատվել են 8.5%-ով, արտահանման իրական ծավալներն աճել են 19.2%-ով, իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ՝ 8.8%-ով՝ հիմնականում պայմանավորված բնակչության տնօրինվող եկամտի և վարկավորման ծավալների աճով:[33]

2017 թվականին, ըստ ՀՀ կառավարության կանխատեսումների, ՀՆԱ-ի իրական աճը կկազմի 3.2 տոկոս: Ընդ որում, արդյունաբերությունը կաճի 5.5 տոկոսով,

[33] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն

գյուղատնտեսությունը՝ 4.0 տոկոսով, ծառայությունների ոլորտը՝ 2.8 տոկոսով, իսկ շինարարության ոլորտում աճ չի գրանցվի: Միաժամանակ, բավականաչափ մտահոգիչ է վերջին տարիներին արձանագրվող ներդրումների կրճատումը: Մասնավորապես, 2017 թվականին դրանց ծավալը կկազմի ՀՆԱ-ի 19.1 տոկոսը (2016 թվականի 20.2 տոկոսի և 2015 թվականի 20.8 տոկոսի ֆոնին):[34] Կարծում ենք, նման միտումները մեկ անգամ ևս կարևորում են այդ ուղղությամբ առավել արդյունավետ ծրագրերի իրականացումը, և առաջին հերթին՝ ներդրումային միջավայրի վրա բացասաբար ազդող գործոնների բացահայտման և չեզոքացման անհրաժեշտությունը:

Համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի տեսանկյունից ՀՀ-ում վերջին տարիներին արձանագրվել է Գծապատկեր 3-ում ներկայացված պատկերը: Ինչպես նկատում ենք, ՀՆԱ-ի կառուցվածքում հիմնական մաս է կազմում ծառայությունների ոլորտը, մինչդեռ արդյունաբերության մասնաբաժինը բավականաչափ համեստ է:

2016 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը մնացել է նախորդ տարվա մակարդակին և կազմել ՀՆԱ-ի 2.7%-ը: Ընդհանուր առմամբ, վերջին տարիների պատկերը բերված է Գծապատկեր 4 -ում:

Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում (տե՛ս Գծապատկեր 5) 2016 թվականին կազմել է 33.2% ՝ բարելավելով նախորդ տարվա ցուցանիշը 3.4 տոկոսային կետով: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծման մասնաբաժինը կազմել է 43.3% ՝ նախորդ տարվա 42%-ի դիմաց: Դրամական փոխանցումները տարվա արդյունքներով կազմել են ՀՆԱ-ի 9.4%-ը՝ մոտենալով 2000 թվականի պատմական ամենացածր մակարդակին: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2016 թվականի արդյունքներով կազմել է 5075.3 մլն. ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.4%-ով: 2016 թվականին տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 20.0%-ով՝ կազմելով 1782.9 մլն. ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 1.6%-ով և կազմել է 3292.4 մլն. ԱՄՆ դոլար:[35]

[34] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջե

[35] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն



Գծապատկեր 2. 2016 թվականին տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների նպաստումները ՀՆԱ-ի իրական աճին, տոկոսային կետ[36]



Գծապատկեր 3. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում 2013-2017 թթ.[37]

[36] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն
[37] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջե



Գծապատկեր 4. Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ[38]



Գծապատկեր 5. ՀՀ առևտրային հաշվեկշռի դինամիկան 2000-2016 թվականներին /մլն ԱՄՆ դոլար/[39]

[38] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջե
[39] Նույն տեղում



Գծապատկեր 6. Ներմուծման ծածկման գործակիցը ՀՀ-ում 1996-2016 թվականներին[40]

Ներմուծման ծածկման գործակիցը, որը ցույց է տալիս, թե արտահանման հաշվին ներմուծման որ մասն է ֆինանսավորվել հանրապետությունում վերջին տարիներին, ներկայացված է Գծապատկեր 6 -ում:

2016 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.1%-ը՝ նախորդ տարվա 23.2%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ՀՆԱ-ի 21.3%-ը՝ նախորդ տարվա 21.2%-ի դիմաց: 2015 թվականի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 0.3%, իսկ հարկային եկամուտներինը՝ 1.1%: Ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը դրսևորել է աճի միտումներ և կազմել 28.6%, նախորդ տարվա համեմատ աճելով 0.6 տոկոսային կետով: ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2016 թվականին կազմել է ՀՆԱ-ի 5.5%-ը՝ նախորդ տարվա 4.8%-ի դիմաց, իսկ արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 45.9% ՝ նախորդ տարվա 41.5%-ի դիմաց:[41] Ակնկալվում է, որ 2017 թվականին հարկային բեռի ծանրությունը բնութագրող հիմնական՝ «հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ» ցուցանիշը կկազմի

[40] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն
[41] Նույն տեղում

21.0 տոկոս: 2017 թվականին բյուջետային մուտքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 1 տրիլիոն 135.0 մլրդ. դրամ:[42]

2016 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են շուրջ 1171.1 մլրդ. դրամ (տե՛ս Աղյուսակ 2), որոնք նախորդ տարվա փաստացի ցուցանիշը գերազանցել են 3.4 մլրդ. դրամով կամ 0.3%-ով, իսկ ծրագրային ցուցանիշը կատարվել է 91.6%-ով: Հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ծրագիրը կատարվել է 92%-ով, այլ եկամուտները՝ 97.3%-ով: ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 23.1%, որը 0.1 տոկոսային կետով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը: Պետական բյուջեի եկամուտների աճը կազմել է 0.3% կամ 3.4 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված հարկային եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների համապատասխանաբար 1.1% (11.8 մլրդ. դրամ) և 5.1% (1.5 մլրդ. դրամ) աճով և այլ եկամուտների 14.2% (10.0 մլրդ. դրամ) կրճատմամբ: Պետական բյուջեի եկամուտների 92.2%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են շուրջ 1079.7 մլրդ. դրամ և 92%-ով կատարել կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Նշված գումարից շուրջ 1046.4 մլրդ. դրամը կազմել են հարկային եկամուտները, իսկ 33.3 մլրդ. դրամը՝ պետական տուրքերը: 2015 թվականի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են 11.8 մլրդ. դրամով: Հարկային եկամուտներն աճել են 1.1%-ով կամ ավելի քան 10.9 մլրդ դրամով, իսկ պետական տուրքերը՝ 2.8%-ով կամ շուրջ 904.6 մլն դրամով: Աճը ձևավորվել է եկամտային հարկի, շահութահարկի, ակցիզային հարկի, շրջանառության հարկի, նպատակային սոցիալական վճարների աճի և ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքի և բնապահպանական ու բնօգտագործման վճարների գծով մուտքերի նվազման արդյունքում: 2016 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 21.3%, 0.1 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հարկային սահունության գործակիցը 2016 թվականին կազմել է 1.6 (ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր տոկոսային կետին բաժին է ընկել հարկերի 1.6 տոկոսային կետով աճ)՝ 2015 թվականի 0.1-ի դիմաց:[43] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի եկամուտների

[42] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջե
[43] Նույն տեղում

ընդհանուր գումարը ծրագրվել է 1 տրիլիոն 210.1 մլրդ. դրամի չափով, որը նախորդ տարվա հաստատված ցուցանիշը գերազանցում է մոտ 2 տոկոսով կամ 23.8 մլրդ դրամով: Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2017 թվականի համար ծրագրվել են 1 տրիլիոն 135.0 մլրդ. դրամի չափով: ԱԱՀ-ին և ակցիզային հարկին բաժին է ընկնում 448 մլրդ. դրամ, որը կազմում է հարկային եկամուտների և պետական տուրքի ընդհանուր գումարի մոտ 39.5%-ը:[44]

Աղյուսակ 2.

ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծավալը 2015-2017 թվականներին[45]

		2015	2016	2017
	Ընդամենը պետական բյուջեի եկամուտները	1 167.7	1171.1	1,210.0
	այդ թվում՝			
1.	Հարկեր և տուրքեր	1 067.9	1079.7	1,135.0
	այդ թվում՝			
	ավելացված արժեքի հարկ	423.4	391.1	354.6
	շահութահարկ	103.6	127.2	134.2
	ակցիզային հարկ	48.9	59.7	63.6
	մաքսատուրք	61.5	55.4	53.6
	հաստատագրված վճարներ	3.1	3.2	3.3
	բնապահպանական և բնօգտագործման վճարներ	31.	27.4	32.7
	շրջանառության հարկ	11.8	15.3	24,3
	եկամտային հարկ	311.7	332.7	347.2
	այլ հարկային եկամուտներ	20.1	20.9	22.9
	պետական տուրքեր	32.4	33.3	30,3
2.	Այլ եկամուտներ	69.9	59.8	44.1
3	Պաշտոնական դրամաշնորհներ	29.9	15.4	30,9

[44] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջե

[45] Աղյուսակը կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016-ի, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջեի տվյալների հիմա վրա

Ինչպես նկատում ենք Աղյուսակ 3-ի տվյալներից, վերջին տարիներին հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության առումով գրեթե էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Անշուշտ տվյալ ցուցանիշի բավականաչափ ցածր մակարդակն էականորեն սահմանափակում է պետության ծախսային պարտավորությունների ընդլայնման հնարավորությունները և, այս տեսանկյունից, առաջիկա տարիներին դրա աստիճանական բարձրացումը պետք է դառնա ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Ընդ որում, այն պետք է իրականացվի ինչպես համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի բարելավման, այնպես էլ տնտեսության հարկային ներուժի լրաժեք օգտագործման ուղղություններով:

Աղյուսակ 3.

ՀՀ 2015-2017 թվականների պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը

Եկամտատեսակը	2015թ. փատացի			2016թ. հաստատված			2017թ. պլանային		
	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	ՀՆԱ-ի նկատմբ (%)	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	ՀՆԱ-ի նկատմբ (%)	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	ՀՆԱ-ի նկատմբ (%)
Ընդմաներ, որից	1,131.3	100.0%	22.5%	1137.3	100.0%	21.8%	1,210.0	100.0%	22.4%
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,065.3	94.2%	21.2%	1079.7	94.9%	20.7%	1,135.0	93.8%	21.0%
2.Պաշտոնական դրամաշնորհներ	28.3	2.5%	0.6%	15.4	1.4%	0.6%	30.9	2.6%	0.6%
3. Այլ եկամուտներ	37.7	3.3%	0.7%	59.8	5.2%	0.5%	44.1	3.6%	0.8%

2017 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների գերակշիռ մասը կապահովվի ավելացված արժեքի հարկից ստացվելիք մուտքերի հաշվին, ինչը կկազմի մոտ 354.6 մլրդ դրամ: Փաստորեն, միայն ավելացված արժեքի հարկից ստացվող մուտքերը կկազմեն ընդհանուր հարկային մուտքերի (ներառյալ պետական տուրքը) 33.8 տոկոսը: Միևնույն ժամանակ, շահութահարկից և եկամտային հարկից ստացվող բյուջետային մուտքերն առաջիկա տարվա համար նախատեսված են համապատասխանաբար՝ 134.2 մլրդ. դրամի (հարկային մուտքերի 11.8 տոկոսի) և 347.2 մլրդ. դրամի (հարկային մուտքերի 30.6 տոկոսի) չափով:

Ընդհանուր առմամբ, ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության հաստատումը հարկային համակարգի արդյունավետության կարևոր նախապայմաններից մեկն է հանդիսանում: Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին արձանագրված զարգացումների արդյունքում որոշակիորեն փոխվել է ուղղակի և անուղղակի հարկեր հարաբերակցությունը՝ ի հօգուտ առաջինի: Սակայն խորքային վերլուծությունները ցույց են տալիս, որ դա հիմնականում տեղի է ունեցել եկամտային հարկի ներդրմամբ և դրանում որոշակի կառուցվածքային փոփոխությունների իրականացմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անուղղակի հարկերի գծով փաստացի բեռն ընկնում է վերջնական սպառողների վրա, կարող ենք արձանագրել, որ հանրապետությունում հարկային բեռի հիմնական ծանրությունը կրում են ֆիզիկական անձինք: Մասնավորապես, միայն ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և եկամտային հարկի գծով մուտքերն առաջիկա տարում կկազմեն ընդհանուր հարկային եկամուտների 70 տոկոսը: Կարծում ենք, որ նման փաստը պետք է որոշակի մտահոգությունների առիթ հանդիսանա՝ հատկապես հանրապետությունում ազգաբնակչության սոցիալական ներկայիս վիճակի պայմաններում:

Աղյուսակ 4.

Հարկային եկամուտներ ծավալը ՀՀ-ում 2005-2016թթ. (մլրդ. դրամ)

	2015թ. փաստացի[46]	2016թ. հաստատված[47]	2017թ. պլանային[48]
Ավելացված արժեքի հարկ	423.9	391.1	354.6
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոսային արտահայտությամբ)	39.8	36.2	31.2
Ակցիզային հարկ	49.0	59.7	63..6
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոսային արտահայտությամբ)	4.6	5.5	5.6
Շահութահարկ	103.7	127.2	134.2
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոսային արտահայտությամբ)	9.7	11.8	11.8
Եկամտային հարկ	311.7	332.7	347.2
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների մեջ (տոկոսային արտահայտությամբ)	29.3	30.8	30.6

2016 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի (տե՛ս Աղյուսակ 4) 36.2%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 391.1 մլրդ. դրամ: Նշված գումարից 168.2 մլրդ. դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 222.9 մլրդ. դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից:

[46] Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի հաշվետվություն
[47] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջե
[48] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջե

Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն նվազել է 7.7%-ով կամ 32.8 մլրդ. դրամով, ինչի հիմնական պատճառներ են հանդիսացել անբարենպաստ մակրոտնտեսական միջավայրը, ներմուծման ծավալների կրճատումը:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 5.5%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին, կազմելով շուրջ 59.7 մլրդ դրամ: Մասնավորապես, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 35.7 մլրդ դրամ, իսկ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 24.1 մլրդ դրամ: 2015 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերը աճել են 22%-ով կամ 10.8 մլրդ դրամով: Ընդ որում, ներմուծվող ապրանքների գծով մուտքերում արձանագրվել է 16.7 % կամ 5.1 մլրդ դրամի, իսկ տեղական արտադրության ենթաակցիզային ապրանքների գծով՝ 30.7%-ով կամ 5.7 մլրդ դրամի աճ: ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների գծով մուտքերի աճը պայմանավորված է բենզինի, դիզելային վառելիքի, ինչպես նաև ծխախոտի արտադրանքի ներմուծումից ստացված մուտքերի աճով:

2016 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 11.8%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 127.2 մլրդ. դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 22.7%-ով կամ 23.5 մլրդ դրամով: Պետական բյուջե մուտքագրված 332.7 մլրդ. դրամ եկամտային հարկն ապահովել է հարկային եկամուտների և պետական տուրքերի 30.8%ը: Նախորդ տարվա համեմատ մուտքերի աճը կազմել է 3.9% կամ 12.5 մլրդ. դրամ: Մաքսատուրքը կազմել է 55.4 մլրդ. դրամ, ապահովելով հարկերի և տուրքերի 5.1%-ը: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերը նվազել են 9.9%-ով կամ շուրջ 6.1 մլրդ. դրամով, ինչը պայմանավորված է ինչպես Հայաստանի Հանրապետության՝ ԵՏՄ անդամ երկրներին համամասնորեն տրվող մաքսատուրքի գումարների նվազմամբ, այնպես էլ երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող՝ մաքսատուրքով հարկվող ապրանքների ծավալների կրճատմամբ: 2016 թվականին շրջանառության հարկի գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 15.3 մլրդ դրամ (կազմելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 1.4%-ը), որը 28.7%-ով կամ 3.4 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա

համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացված մուտքերի աճով: Շրջանառության հարկի գումարից 8.2 մլրդ դրամը մուտքագրվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից, 1.4 մլրդ դրամը՝ արտադրական գործունեությունից, 795.1 մլն դրամը՝ ռեզիդենտների կողմից ստացվող պասիվ եկամուտներից, 235 մլն դրամը՝ նոտարական գործունեությունից և 4.6 մլրդ դրամը՝ գործունեության այլ տեսակներից: Շրջանառության հարկի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է եղել օրենսդրական փոփոխություններով:[49]

Համախառն ներքին արդյունքի հետ հարաբերակցության առումով պատկերը ներկայացված է Աղյուսակ 5 -ում:

2017 թվականի պետական բյուջեի ծախսային մասը կկազմի 1 տրիլիոն 360.1 մլրդ. դրամ, որը 2016 թվականի պետական բյուջեի հաստատված մակարդակի համեմատ նվազել է 16.8 մլրդ. դրամի չափով (տե՛ս Աղյուսակ 6): Բյուջետային ծախսերի 93%-ը կամ 1 տրիլիոն 264.6 մլրդ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, իսկ 7%-ը կամ 95.6 մլրդ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:[50]

Ինչպես կարելի է նկատել Աղյուսակ 6-ի տվյալներից, ընդհանուր առմամբ 2017 թվականի պետական բյուջեի նախագծով պահպանվել է դեռևս նախորդ տարիներին ձևավորված ծախսերի ուղղվածությունը: Մասնավորապես, սոցիալական բնագավառի ծախսերի տեսակարար կշիռը 2017 թվականի պետական բյուջեի ծախսերում կկազմի 45.8 տոկոս, պաշտպանության, ազգային անվտանգության և հասարակական կարգի

[49] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն
[50] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջե

Աղյուսակ 5.

ՀՀ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2012-2015 թվականներին[51] (ՀՆԱ-ի նկատմամբ՝ %)

		2012	2013	2014	2015
	Ընդամենը եկամուտներ	**22.2**	**23.5**	**23.7**	**23.2**
	այդ թվում՝				
1.	Հարկեր և տուրքեր	20.6	22.0	22.0	21.2
	այդ թվում՝				
	ավելացված արժեքի հարկ	8.7	8.8	9.1	8.4
	շահութահարկ	2.8	2.7	2.1	2.1
	եկամտահարկ	2.1	0.1	0.0	0.0
	ակցիզային հարկ	1.2	1.1	1.0	1.0
	մաքսատուրք	1.0	1.0	1.0	1.2
	հաստատագրված վճարներ	0.3	0.2	0.1	0.1
	բնապահպանական և բնօգտագործման վճարներ	0.6	0.8	0.7	0.6
	շրջանառության հարկ	-	0.3	0.2	0.2
	եկամտային հարկ	-	5.5	6.0	6.2
	այլ հարկային եկամուտներ	0.3	0.3	0.5	0.4
	պետական տուրքեր	0.6	0.6	0.8	0.6
	պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	3.0	0.4	0.3	0.2
2.	Այլ եկամուտներ	1.2	1.3	1.3	1.4
3.	Պաշտոնական դրամաշնորհներ	0.4	0.3	0.4	0.6

[51] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016

Աղյուսակ 6.

.

ՀՀ 2015-2017թթ. պետական բյուջեների ծախսերը (մրդ. դրամ)

Գործառնական դասակարգման խմբերի անվանումները	2015	2016	2017
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	1.408.9	1,449.1	1,360.1
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	281.4	292.1	265.0
Պաշտպանություն	198.5	225.9	209.8
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	122.0	120.3	102.4
Տնտեսական հարաբերություններ	109.8	131.1	93.6
Շրջակա միջավայրի պաշտպանություն	5.6	4.5	10.0
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	39.2	25.6	14.3
Առողջապահություն	86.1	88.6	85.9
Հանգիստ, մշակույթ և կրոն	30.4	26.6	26.3
Կրթություն	122.3	122.4	127.6
Սոցիալական պաշտպանություն	383.7	396.8	408.9
Հիմնական բաժիններին չդասվող պահ. ֆոնդեր	29.9	15.1	16.3

պահպանության համակարգերի ծախսերը՝ 21.2 տոկոս, տնտեսության ճյուղերի ծախսերը՝ 8.4 տոկոս, պետական պարտքի սպասարկման ծախսերը՝ 8.8 տոկոս, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններին ցուցաբերվող աջակցությունը՝ 3.6 տոկոս: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ ծախսային քաղաքականության առումով հիմնական ուղղությունները մնալու են նույնը և բյուջետային ծախսերի

գերակշիռ մասը՝ 67 տոկոսն ուղղվելու է սոցիալական ոլորտի և պաշտպանության բնագավառների ֆինանսավորմանը:[52]

ՀՀ պետական բյուջեի ծախսերի հարաբերակցությունը համախառն ներքին արդյունքի նկատմամբ՝ տե՛ս Աղյուսակ 7:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեն կատարվել է 278 մլրդ. դրամ պակասուրդով՝ 54%-ով գերազանցելով ծրագիրը: 2015 թվականի համեմատ պակասուրդի մեծությունն աճել է 15.2 %-ով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2016 թվականին կազմել է 5.5%՝ 2015 թվականի 4.8%-ի դիմաց: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե 2015 թվականին ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել էր պակասուրդի համապատասխանաբար 4.7 և 95.3 տոկոսը, ապա 2016 թվականին նշված ցուցանիշները կազմել են 38.6 և 61.4 տոկոս:[53] 2017 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 2.8 տոկոսի չափով և կազմում է 150.1 մլրդ. դրամ, որը նախատեսվում է ֆինանսավորել ներքին և արտաքին աղբյուրների հաշվին: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել արտաքին ու ներքին աղբյուրների հաշվին, որոնք կկազմեն համապատասխանաբար 79.0 մլրդ դրամ և 71.1 մլրդ դրամ:[54]

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը (տե՛ս Աղյուսակ 8) կազմել է 2,325.6 մլրդ. դրամ (4,805.6 մլն. ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 45.9%-ը՝ 2015 թվականի 2,088.0 մլրդ. դրամի (4,316.2 մլն. ԱՄՆ դոլարի) և 41.5%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 4,300.9 մլն. ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության պարտավորություններն են, 504.7 մլն. ԱՄՆ դոլարը՝ Կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները: 2016 թվականին արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 230.1 մլն. ԱՄՆ դոլար, որից 189.8 մլն. ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 40.3 մլն. դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 6.6%՝ նախորդ տարվա 12.5%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ[a] 9.4% նախորդ տարվա 16 %-ի դիմաց: 2016 թվականի վերջի

[52] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջե
[53] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն
[54] Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջե

Աղյուսակ 7.

ՀՀ պետական բյուջեի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2012-2015 թվականներին[55] (ՀՆԱ-ի նկատմամբ՝ %)

		2012	2013	2014	2015
	Ընդամենը ծախսեր, այդ թվում	23.6	25.1	25.6	28.0
01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	3.8	4.1	4.5	5.6
02	Պաշտպանություն	3.6	4.0	3.9	3.9
03	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	1.8	2.0	2.2	2.4
04	Տնտեսական հարաբերություններ	1.7	2.8	1.7	2.2
05	Շրջակա միջավայրի պաշտպանություն	0.2	0.1	0.1	0.1
06	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	0.3	0.5	0.6	0.8
07	Առողջապահություն	1.5	1.4	1.6	1.7
08	Հանգիստ, մշակույթ և կրոն	0.5	0.4	0.4	0.6
09	Կրթություն	2.4	2.3	2.4	2.4
10	Սոցիալական պաշտպանություն	6.8	6.5	7.1	7.6
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոներ	1.0	0.9	1.0	0.6

Աղյուսակ 8.

ՀՀ պետական պարտքը 2015-2017 թթ.

	Առ 31.12.2015թ.	Առ 31.12.2016թ.	Առ 31.12.2017թ.
մլրդ դրամ			
ՀՀ պետական պարտք	2,456	2,872	3,096
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	2,088	2,356	2,530
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	*230*	*248*	*293*

[55] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016

ներքին պետական պարտք	368	516	565
մլն ԱՄՆ դոլար			
ՀՀ պետական պարտք	5,078	6,041	6,512
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	4,316	4,955	5,323
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	476	522	617
ներքին պետական պարտք	761	1,086	1,189
տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ			
ՀՀ պետական պարտք	48.8	55.8	57.3
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	41.5	45.7	46.8
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	*4.6*	*4.8*	*5.4*
ներքին պետական պարտք	7.3	10.0	10.5

դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշն (ԶՆԱ) աճել է՝ 2015 թվականի 3604.6 մլն. ԱՄՆ դոլարի դիմաց, կազմելով 4002.5 մլն. ԱՄՆ դոլար: Աճել է նաև ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2015 թվականի 34.2%-ի դիմաց կազմելով 37.9%, սակայն նվազել է ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2015 թվականի 114.9%-ից հասնելով 114.3%-ի:[56]

Ինչպես երևում է աղյուսակ 9-ից, 2015-2017 թվականների տարեվերջի դրությամբ պետական պարտքի գերակշռող մասը բաժին է ընկնում արտաքին պարտքին: Նման իրավիճակն, ըստ էության, օրինաչափ երևույթ է դարձել ՀՀ-ի համար՝ մեկ անգամ ևս ուշադրություն հրավիրելով ֆինանսավորման ներքին աղբյուրների զարգացման և ֆինանսական ներքին ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդրի արդիականության վրա:

Չնայած ՀՀ պետական պարտքի մեծությանը, այն գտնվում է միջազգայնորեն ընդունված (կամ ոչ վտանգավոր) պարտքային բեռի տիրույթում և համապատասխանում է <<Պետական պարտքի մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջին, ըստ որի. Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը:[57]

[56] Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն

[57] <<Պետական պարտքի մասին>> ՀՀ օրենք

Ինչ վերաբերում է արտաքին պարտքի սպասարկմանը, այդ նպատակով նախատեսվում է ծախսել 296 մլն. ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 9

Աղքատության հիմնական ցուցանիշները ՀՀ-ում /տոկոսներով/

	2008թ			2014թ.			2015թ.					
	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	%-ը աղքատ բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Քաղաքային բնակավայրեր	1.9	13.0	27.6	2.4	11.2	30.0	2.2	10.4	29.4	61.5	4.7	1.3
Ք. Երևան	1.1	8.1	20.1	2.0	9.0	25.2	2.0	8.3	25.0	27.4	3.9	1.1
Այլ քաղաքներ	2.8	18.2	35.8	2.9	13.6	35.1	2.4	12.8	34.4	34.1	5.5	1.5
Գյուղական բնակավայրեր	1.2	11.9	27.5	2.0	10.4	29.9	1.7	10.3	30.4	38.5	4.9	1.3
Ընդամենը	**1.6**	**12.6**	**27.6**	**2.3**	**10.9**	**30.0**	**2.0**	**10.4**	**29.8**	**100**	**4.7**	**1.3**

Երկրի անվտանգության գլխավոր սպառնալիքներից կարելի է առանձնացնել եկամուտների խիստ անհամաչափ բաշխումը բնակչության մեջ, նրա սոցիալական վիճակի կտրուկ վատթարացումը: Ակնհայտ է, որ սոցիալական ոլորտն առանցքային նշանակություն ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև ազգային անվտանգության ապահովման հիմնախնդրում: Այստեղ ներառվում են անհատի, ընտանիքի, հասարակության, դրա առանձին շերտերի, սոցիալական խմբերի և պետության կենսական շահերը: Աղքատության ավելացումն երկրում, այդ թվում աղքատության ստորին սահմանն անցած մարդկանց թվի գնալով ավելացումը, սննդի նկատմամբ բնական պահանջմունքի ոչ լրիվ բավարարումը, բնակչության լայն զանգվածի համար կրթությունը շարունակելու և առողջապահության ծախսերը հոգալու անհնարինությունը, զբաղվածության էական կրճատումը և այլ բացասական

սոցիալական երևույթներ հանգեցնում են երկրում կյանքի որակի խիստ անկմանը և արտագաղթի տեմպերի կտրուկ աճին: Ներկա վիճակում ՀՀ բնակչության կենսամակարդակի մասին գործնականում ավելի կոնկրետ և ճշգրիտ դատողություններ կարելի է անել այնպիսի կարևոր ցուցանիշի հիման վրա, ինչպիսին է աղքատության մակարդակը երկրում:[58] Տարածքային բաշխվածության տեսանկյունից այն ունեցել է ստորև ներկայացված պատկերը (տե՛ս Գծապատկեր 7):

Ցանկացած երկրի հզորության, տնտեսական առաջընթացի և կայուն զարգացման գլխավոր գրավականը նրա գիտատեխնիկական կարողությունն է, որը շնորհիվ արտադրության մեջ ներառված նորարարությունների, բարձր տեխնոլոգիաներով հագեցած սարքավորումների և ժամանակակից տեխնիկայի ներդրմամբ ստեղծում է այնպիսի լայն սպեկտրով արտադրական կարողություններ, որոնք պայմանավորում են ամբողջ երկրի հզորությունը, պաշտպանունակության բարձր մակարդակի ապահովումը և երկարաժամկետ հատվածում երկրի կայուն ու բարձր տեմպերով զարգացումը: Ներկայումս, ինչպես և տնտեսության մյուս ճյուղերը, գիտատեխնիկական բնագավառը ՀՀ-ում գտնվում է խորացող ճգնաժամային իրավիճակում: Կիրառական ինստիտուտների և ձեռնարկությունների վճարունակության լուրջ անկումը հանգեցրել է գիտատեխնիկական նոր մշակումների և ներդրումների նկատմամբ պահանջարկի կտրուկ նվազման: Տեխնիկայի և տեխնոլոգիաների նորագույն տեսակների պետական բյուջետային ֆինանսավորման կրճատումը հանգեցրել է գիտական հետազոտությունների ծավալների կրճատման, որի արդյունքում տեղի է ունենում գիտական առաջնակարգ կադրերի և երիտասարդ մասնագետների զանգվածային արտագաղթ, փոշիանում են շուրջ մեկ դարի ընթացքում գիտական հիմնարկների ձեռք բերած և կուտակած կարողություններն, ըստ էության, վերանում է երկրում հիմնարար գիտությունների վերարտադրությունը:

[58] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:



Գծապատկեր 7. Աղքատության ցուցանիշներն ըստ տարածաշրջանների, 2008 և 2015 թվականներին

Հայաստանի Հանրապետությունն իր պատմության ընթացքում միշտ եղել է տնտեսական և քաղաքական շահերի բախման կիզակետում և իր աշխարհագրական դիրքով պայմանավորված, գտնվել է սպառնալիքների մշտական ազդեցության ներքո: Նախկին վարչահրամայական համակարգի փլուզման արդյունքում հանրապետությունը հայտնվեց խորը քաղաքական և տնտեսական ճգնաժամի մեջ, ինչի հետևանքները դեռևս վառ արտահայտված են հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական և գաղափարական կյանքում:

Տնտեսության վատթար իրավիճակի պայմաններում ոչ լիարժեք են լուծվում հասարակության սոցիալական բնույթի կենսական խնդիրները, ինչը էականորեն նպաստում է բնակչության սոցիալական խնդիրների խորացմանը և սոցիալական լարվածության աճին: Նշված գործոնները, ակնհայտորեն, լուրջ սպառնալիքներ են հանդիսանում երկրի անվտանգության համար: Տնտեսությունը բախվում է բազմաթիվ արտաքին ու ներքին վտանգների հետ, որոնք առնչվում են տարածաշրջանում հանրապետության դիրքին ու շահերին: Այն պաշտպանված չէ նաև ներքին տնտեսական անկայունություն առաջացնող գործոնների ազդեցությունից: Նման պայմաններում ազգի, հասարակության ու պետության պաշտպանվածության ապահովման բոլոր հարցերն ընդգրկող ազգային անվտանգության շրջանակներում

կարևորվում է հատկապես տնտեսական անվտանգության խնդիրը: Մեր կարծիքով, այն ներկայումս պետք է դառնա տնտեսության, քաղաքականության և միջազգային հարաբերությունների բնագավառներում զբաղված տարբեր մասնագետների խորը և բազմակողմանի ուսումնասիրության կարևոր օբյեկտներից մեկը, քանի որ տնտեսական բարեփոխումների անցած տարիներին հանրապետության ներքին ու արտաքին տնտեսական դրությունը այնպիսի դինամիկա է ունեցել, որ բարեփոխումների կիրառվող մոդելը կարիք ունի տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից լրջագույն փորձաքննության և գնահատման: Այս ամենով պայմանավորված, կարծում ենք, ներկայումս խիստ հրամայական է դարձել երկրի ազգային անվտանգության և, մասնավորապես, տնտեսական անվտանգության ապահովման ուղղությամբ գործնական միջոցառումների մշակումը և հետևողական իրականացումը: Պետք է նշել, որ մինչև այժմ չեն ձեռնարկվել հանրապետության տնտեսական անվտանգության համապատասխան հայեցակարգի, ծրագրերի, արդյունավետ քաղաքականության, իրավական ու ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի մշակման շատ թե քիչ նշանակալից քայլեր՝ չնայած խնդիրը, մեր կարծիքով, չափազանց կարևոր է ու անհետաձգելի: Հարկ է անհապաղ անդրադառնալ տարբեր բնույթի վտանգներից ու վնասներից ազգային տնտեսության պաշտպանության պայմանների, չափանիշների ու ցուցանիշների, կազմակերպական եղանակների ու կառուցակարգերի համակարգի մշակմանը, ազգային պետական շահերի հետ տնտեսական անվտանգության կապի իմաստավորմանը: Տնտեսական անվտանգության մակարդակը պետք է գնահատել ցուցանիշների այնպիսի համակարգով, որոնք կարտացոլեն տնտեսության գործառույթի սահմանային արժեքները: Այսինքն, այն սահմանը, որից դուրս տնտեսությունը կորցնում է դինամիկ ինքնազարգացման ունակությունը, մրցունակությունը ներքին ու արտաքին շուկաներում, դառնում է միջազգային էքսպանսիաների, երկրի ազգային հարստության ներքին ու արտաքին կողոպուտի օբյեկտ, ծաղկում է կոռուպցիան, տնտեսությունը քրեականացվում է:

ՀՀ տնտեսական անվտանգության տեսանկյունից առավել լուրջ սպառնալիքներ են հանդիսանում ժողովրդագրական իրավիճակի շարունակական վատթարացումը,

սոցիալական բևեռացումը և տնտեսության ենթակառուցվածքային ապահովվածության ոչ բավարար վիճակը: Առաջինը սպառնալիք է ազգային մակարդակով և արտահայտվում է բնակչության հիվանդությունների և մահացության զգալի աճով, ծնելիության նվազմամբ, կյանքի տևողության կրճատմամբ և արտագաղթի մեծ ծավալներով: Սոցիալական բևեռացման հետևանք են հանդիսանում աղքատության մակարդակի բարձրացումը, հասարակության վառ արտահայտված շերտավորումը և այլն: Դրա մեծ ծավալներն ու խորության աստիճանը խիստ բացասաբար են ազդում ոչ



Գծապատկեր 8. ՀՀ բնակչության հիմնական տարիքային կառուցվածքը 1995-2016 թվականներին[59]

միայն մարդկային կենսագործունության, այլ նաև տնտեսության վրա, քանի որ բնակչությունն, ի թիվս այլ գործոնների, հանդիսանում է նաև պահանջարկ ձևավորող և հիմնական սպառող: Հետևաբար, բնակչության եկամտային և գույքային բևեռացման կրճատումը պետք է դառնա սոցիալական քաղաքականության հիմնական առանցքը՝ ուղղված քաղաքացու կարևորագույն սոցիալական իրավունքների ապահովմանը և երաշխիքների տրամադրմանը: Տնտեսության ենթակառուցվածքային ապահովվածության ոչ բավարար վիճակը բնութագրվում է արտադրության

[59] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

գործընթացում կիրառվող տեխնոլոգիաների և սարքավորումների ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճանով: Լուրջ հիմնախնդիր է հանդիսանում նաև բնակչության ծերացումը, որը վերջին տարիներին արձանագրել է հետևյալ միտումները (տե՛ս Գծապատկեր 8):

Ինչպես նկատում ենք, դիտարկվող ժամանակահատվածում հանրապետությունում նկատվում է 0-15 տարեկանների թվաքանակի նվազում, որը բավականաչափ մտահոգիչ հանգամանք է երկրի ազգային անվտանգության տեսանկյունից:

Ընդհանրացնելով, հարկ ենք համարում նշել, որ տնտեսական անվտանգության գոյություն ունեցող սպառնալիքներից, ներկայումս հանրապետությունում ձևավորվել է մի այնպիսի իրավիճակ, որը անվտանգության տեսանկյունից բավականաչափ խոցելի է: Տնտեսական անվտանգության սպառնալիքների համակարգը գտնվում է դինամիկ զարգացման մեջ, որի պայմաններում մի սպառնալիքը ստեղծում է մեկ այլ սպառնալիք, դրանով իսկ ընդլայնելով ընդհանուր ազդեցությունը տնտեսության վրա: Այս առումով, տնտեսական անվտանգության համակարգի ձևավորումը պետք է հիմնված լինի հնարավոր սպառնալիքների բացահայտման և համակողմանի վերլուծության վրա, ինչը կարող է կանխել դրանց առաջացումը վաղ փուլում, ինչպես նաև վերացնել դրանցով պայմանավորված բացասական հետևանքները երկրի տնտեսության համար:

2.2 Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները և դրա մակարդակի գնահատումը

Տնտեսական անվտանգության ապահովման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությունը, ըստ էության, պետք է ուղղված լինի այդ ոլորտում առկա սպառնալիքների և վտանգների վերացմանն ու բացասական ազդեցության

չեզոքացմանը: Այս տեսանկյունից, հատկապես կարևոր նշանակություն ունի տնտեսական անվտանգության գնահատման համակարգի ձևավորումը:

Անշուշտ, տնտեսական անվտանգության բարձր մակարդակի կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ տնտեսության գերակա կախվածություններով, ներքաղաքական և սոցիալական լարվածություններով պայմանավորված հետևանքների չափերն երկրում չեն գերազանցի սահմանային այն մեծությունները, որոնց դեպքում վերջինս կարող է հայտնվել դժվար հաղթահարելի մարտահրավերների առջև և ազգային ինքնուրույնության պահպանման, պետության ռազմական հզորության ապահովման, հասարակության կյանքի որակի բարձրացման ու երկրի ռազմավարական այլ նպատակների իրագործման համար կդառնան լուրջ սպառնալիքներ: Ուստի, ազգային անվտանգության ապահովման համար առաջնային նշանակություն ունի հնարավոր սպառնալիքների և մարտահրավերների նախապես բացահայտումն ու համակարգված վերլուծությունը, դրանց դասակարգումն ըստ երկրի համար վտանգավորության աստիճանի և լուծման ենթակա խնդիրների կարևորության առաջնահերթությունների: Նման մոտեցման դեպքում, գնահատելով հնարավոր սպառնալիքներով պայմանավորված հետևանքների սահմանային մեծությունները, էականորեն մեծանում են դրանց հաղթահարման և կանխարգելման համար իրատեսական ու արդյունավետ ուղիների մշակման հնարավորությունները:

Երկրի տնտեսական անվտանգության ապահովումը ժամանակակից պայմաններում պետք է հիմնված լինի պոտենցիալ սպառնալիքների բացահայտման և գոյություն ունեցող տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման միջոցով դրանց հաղթահարման վրա: Անշուշտ, դա ենթադրում է մի շարք քայլերի և միջոցառումների իրականացում, որոնցից հատկանշական են հետևյալները:

Առաջին, պետական մակարդակով այնպիսի կառուցակարգերի և ինստիտուտների ստեղծում, որոնք հնարավորություն կտան ապահովել երկրի տնտեսական անվտանգությունը: Երկրորդ, համաշխարհային տնտեսության հետ ինտեգրացիոն կապերի խորացում, գիտատեխնիկական համագործակցություն, աշխատանքի արտադրողականության բարձրացում, հայրենական տնտեսության մրցունակության մակարդակի ապահովում: Անշուշտ, նման խոշորամասշտաբ

խնդիրների լուծումը, նախ և առաջ, պահանջում է ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում, տնտեսության ճյուղային և կառուցվածքային վերափոխում, ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորում, նորարարական գործունեության խթանում, տնտեսության գերակա ճյուղերի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում և իրագործում:

Պետք է նշել, որ տնտեսական անվտանգության վրա ազդում են տարբեր գործոններ, որոնցից յուրաքանչյուրն ունի վտանգավորության իր աստիճանը: Մասնավորապես, ծնելիության ցածր և մահացության բարձր աստիճանի, միգրացիոն ոչ ցանկալի գործընթացների հետևանք հանդիսացող ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակն ուղղակիորեն անդրադառնում է ոչ միայն երկրի տնտեսական, այլ նաև ազգային անվտանգության վրա՝ ստեծելով լուրջ սպառնալիքներ պետության և հասարակության զարգացման համար: Այդ ամենի հետևանք է նաև հանդիսանում աշխատունակ բնակչության թվաքանակի կրճատումը, որակյալ կադրերի դեֆիցիտը, ուղեղների արտահոսքը, որոնք լուրջ սպառնալիքներ են յուրաքանչյուր երկրի համար: Նման պայմաններում երկրի տնտեսությունը դառնում է խոցելի արտաքին և ներքին մարտահրավերների առումով՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Երկրի տնտեսական զարգացման և անվտանգության ապահովման վրա էական ազդեցություն ունեն նաև հասարակության անդամների իրավական պաշտպանվածության ցածր մակարդակը, ինչպես նաև օրինականության ապահովման և արդարադատության իրականացման ուղղությամբ պետական ինստիտուտների սահմանափակ հնարավորությունները կամ գործունեության ցածր արդյունավետությունը: Նշված խնդրների լուծման համար պահանջվում է ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում՝ ուղղված տնտեսական և քաղաքական գործունեության բոլոր մակարդակներում վստահության մակարդակի բարձրացմանը: Պետք է նաև կարևորել պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որի կարևոր նպատակներից պետք է հանդիսանան պետական մարմինների գործունեության հստակ կանոնների հաստատումը, նրանց գործառույթների օպտիմալացումը և հրապարակայնության ապահովումը: Վերը նշված

ուղղություններով, ինչպես նաև իրավապահ և դատական համակարգերում բարեփոխումների իրականացումը կարևոր նշանակություն ունի սոցիալ-տնտեսական բազմաբնույթ խնդիրների լուծման համար:

Երկրի տնտեսական անվտանգության վրա բացասաբար ազդող գործոններից է նաև տարածքային ոչ համաչափ զարգացումը և դրա հետևանք հանդիսացող բևեռացումը: Այս պարագայում պետության հիմնական խնդիրն է համապատասխան գործիքների կիրառման և միջոցառումների իրականացման միջոցով նպաստել վարչատարածքային միավորների կողմից սեփական տնտեսական ներուժի լիարժեք և արդյունավետ օգտագործմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է բարձրացնել պետական կառավարման և տեղական ինքկառտավարման համակարգերի գործունեության արդյունավետությունը, կատարելագործել միջբյուջետային հարաբերությունների կարգավորման կառուցակարգը և հաշվեկշռել տարածքային միավորների եկամտային հնարավորություններն ու ծախսային պարտավորությունները: Այս խնդիրը հատկապես հրատապ է Հայաստանի Հանրապետության համար, քանի որ ներկայումս լուրջ խնդիրներ գոյություն ունեն տարածաշրջանային տնտեսական կապերի զարգացման ու ամրապնդման առումով: Մարզային ենթակառուցվածքների զարգացման ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև արտադրության գործոնների հետ կապված սահմանափակումները խիստ բացասաբար են ազդում երկրի տարածքային զարգացման վրա: Նշված խնդիրների լուծումը պահանջում է տարածաշրջանների ենթակառուցվածքային և տեխնոլոգիական զարգացում, հաղորդակցության ուղիների ապահովում և այլն: Բացի այդ պետք է կարևորել նաև տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխությունների իրականացումը, գործարար միջավայրի բարելավումը, տարածաշրջանային զարգացման ծրագրերի մշակումն ու իրականացումը, դրանցում գործարար հատվածի ներգրավումը և այլն:

Հայտնի է, որ համաշխարհային տնտեսությանը ներկայումս բնորոշ են գլոբալիզացիոն գործընթացների խորացման միտումները: Այս առումով, կարևոր նշանակություն են ստանում արտաքին առևտրի և ապրանքաշրջանառության ծավալների ավելացումը, ինչպես նաև միջազգային տնտեսական գործընթացներում

երկրի ակտիվ մասնակցության ապահովումը: Անհրաժեշտ է առավելագույնս ռացիոնալ կերպով օգտագործել հանրապետության մրցակցային առավելությունները համաշխարհային շուկայում՝ հատկապես գիտատար արտադրանքի և ծառայությունների արտահանման միջոցով: Անհրաժեշտ է նվազեցնել երկրի տնտեսության կախվածությունը արտաքին գործոններից, ինչը զգալիորեն կնվազեցնի տնտեսական տատանումները: Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել նաև գլոբալիզացիոն գործընթացների առավելությունները և առավելագույնս օգտագործել դրանք՝ ի շահ երկրի տնտեսության: Վերջիններս նպաստում են մրցակցության խորացմանը՝ ապահովելով արտադրանքի և ծառայությունների որակի և դրանով իսկ նաև մրցունակության բարձրացում: Անշուշտ, դա նաև պահանջում է ներդրումների ներգրավման արդյունավետ կառուցակարգերի ու գործիքների կիրառում, ինչը ներկայումս հանրապետության համար բավականաչափ արդիական խնդիր է, հատկապես պայմանավորված ներդրումային ոչ բարենպաստ միջավայրով: Նշված խնդրի լուծման, ինչպես նաև տնտեսության դիվերսիֆիկացման համար անհրաժեշտ են այնպիսի պետական կառույցներ, որոնք կխթանեն ներդրումային գործընթացները գործունեության նոր ոլորտներում, և մասնավոր կառույցներ, որոնք կնպաստեն տեղական ընկերությունների գործունեության կանոնակարգմանն արտաքին շուկաներում: Ներդրումների ներգրավումը խթանող կառույցները պետք է ստեղծեն համապատասխան պայմաններ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար, լուծեն բիզնես սեկտորի համար անհրաժեշտ տեղեկատվական ապահովվածության հետ կապված խնդիրները, ապահովեն պայմանագրերի և սեփականության իրավական պաշտպանության կառուցակարգերի գործունեությունը, նպաստեն ռիսկային նախագծերի ֆինանսավորմանը և այլն:

Պետք է նշել, որ ներկայումս ձևավորված չեն սերտ փոխհարաբերություններ գիտության, արտադրության և կրթության միջև, արտադրության մեջ քիչ են օգտագործվում գիտական նվաճումները, ինչը չի նպաստում տնտեսության արդիականացմանը և առաջանցիկ զարգացմանը՝ հանգեցնելով մրցակցային առավելությունների կրճատմանը: Տնտեսության նորարարական զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել կառուցակարգեր, որոնք կկարողանան պաշտպանել մտավոր

սեփականությունը, իրականացնել գիտատար և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում ներդրումային և ինովացիոն նախագծեր: Բացի այդ, անհրաժեշտ է արդյունավետ օգտագործել գիտական ներուժը, բարձրացնել հետազոտությունների նշանակությունը և գիտական մշակումների իրազեկումը, որոնք կհանգեցնեն կայուն տնտեսական աճի, նորարարական համակարգերի ձևավորմանը, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների զարգացմանը:

Սոցիալական ոլորտը ևս պահանջում է լուրջ փոփոխություններ, որոնք կնպաստեն շուկայական տնտեսավարման պայմաններում սոցիալական խնդիրների արդյունավետ լուծմանը: Սոցիալական ծառայությունների որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել կրթության և առողջապահական համակարգերի արդիականացում՝ պահպանելով սոցիալական ծառայությունների մատչելիության սկզբունքը: Այս առումով, կարևոր է նշված ոլորտներում պետական աջակցության հասցեականության ապահովումը և նվազագույն սոցիալական երաշխիքների տրամադրումը: Սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է համակարգել իշխանության տարբեր մակարդակներում պետական ծրագրերի իրականացումը: Բնակչության նյութական բարեկեցության ապահովումը կապված է սպառման այնպիսի մակարդակի ձևավորման հետ, որը հնարավորություն կտա բոլոր խմբերին բավարարել իրենց նվազագույն սոցիալական կարիքները: Այդ իսկ պատճառով, տնտեսության զարգացման ուղղությունները երկարաժամկետ կտրվածքով պետք է նպաստեն բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և եկամուտների բևեռացման կրճատմանը:

Այսպիսով, զարգացման ներկա փուլում երկրի տնտեսական անվտանգության ապահովումը պահանջում է ժամանակակից կառուցակարգերի և գործիքների կիրառում՝ ուղղված տնտեսության երկարաժամկետ զարգացմանը և բնակչության կյանքի որակի բարձրացմանը: Դա, իր հերթին, ենթադրում է տնտեսական անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների բացահայտում, դրանց ազդեցության գնահատում և կանխարգելման մոտեցումների մշակում:

Ընդհանուր առմամբ, տնտեսական անվտանգության շեմային ցուցանիշները իրենցից ներկայացնում են որոշակի մեծություններ, որոնց գերազանցումը վերացնում է տնտեսության բնականոն կերպով գործելու հնարավորությունները[60]: Անուշտ, դրանց որոշումը բավականաչափ բարդ խնդիր է: Շատ մասնագետների կարծիքով տնտեսական անվտանգության ցուցանիշների մշակումը պետք է հիմնված լինի «անվտանգություն» և «ռիսկ» հասկացությունների հարաբերակցության վրա: Ռիսկի գործոնը տնտեսական անվտանգության ռազմավարության մեջ ներառում է երեք հիմնական բաղադրիչներ. ռիսկի գնահատում, նվազեցում և կառավարում: Տնտեսական անվտանգության գնահատման համար մասնագիտական շրջանակներում առաջարկվում են մի շարք մեթոդներ, որոնք կարելի է խմբավորել հինգ ուղղություններով.[61]

1. մակրոտնտեսական ցուցանիշների համեմատություն սահմանային արժեքների հետ (Ս. Գլազև),

2. փորձագիտական գնահատման մեթոդ, ելնելով սպառնալիքների աստիճանից (Ն. Դյուժենկով),

3. մակրոտնտեսական ցուցանիշների, տնտեսական աճի տեմպերի ու դինամիկայի գնահատում (Ի. Դոլմատով),

4. մաթեմատիկական մեթոդների կիրառում (Ն. Օգառև),

5. Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատում ցուցանիշների շեմերի միջոցով (Է. Խտկին, Ա. Դենիսով, Վ. Սալնիկով):

Տնտեսական անվտանգության գնահատման մեթոդների տեսանկյունից հիմնական խնդիրը կայանում է այն ցուցանիշների ընտրության մեջ, որոնք կապահովեն տվյալ երևույթի համապարփակ գնահատական: Անշուշտ, երկրի տնտեսական անվտանգության հիմնարար պայմաններ են հանդիսանում ռեսուրսային ներուժի առկայությունը, դրանց արդյունավետ օգտագործումը, հնարավոր սպառնալիքներին դիմակայելու կարողությունը:

---

[60] Экономическая безопасность России: Общий курс: Под ред. В. К. Сенчагова. М., 2005г. стр. 809

[61] Олейников Е. Экономическая и национальная безопасность. М.: Экзамен, 2005г. стр. 126

Ընդհանուր առմամբ, անվտանգության մակարդակները որոշելը բարդ և հակասական գործողություն է: Սակայն մեկ բան ակնհայտ է. անվտանգությունն ամբողջությամբ հակառակ է վտանգին: Հետևաբար, դրանք լիարժեք հակադրություններ են և միմյանցից տարբերվում են 180 աստիճանով: Վտանգի առաջին մակարդակը մարտահրավերն է, երկրորդը՝ ռիսկը, երրորդը՝սպառնալիքը, չորրորդը՝ ինքը վտանգն է:

Պետք է նշել, որ տնտեսական անվտանգության գնահատման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն ոչ թե ցուցանիշները, այլ նրանց շեմային արժեքները, այսինքն, սահմանային թույլատրելի նորմերը, որոնց խախտումը խաթարում է վերարտադրության բնականոն ընթացքը, հանգեցնում անվտանգության տեսանկյունից մի շարք բացասական միտումների ձևավորմանը: Դրանք նպաստում են տնտեսության վիճակի ճշգրիտ «ախտորոշմանը», հնարավորություն տալով բացահայտել վտանգավոր միտումները: Անշուշտ, դա ենթադրում է տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային արժեքների համապարփակ գնահատում: Դ.Վ. Գորդիենկոյի կարծիքով տնտեսական անվտանգության մակարդակի վերլուծությունը ենթադրում է հետևյալ բաղադրիչների հաշվառում և գնահատում.[62]

1. պետության ռեսուրսային կարողություններ և զարգացման հնարավորություններ, այդ թվում ռեսուրսների և կապիտալի օգտագործման արդյունավետությունը, ռազմավարական պաշարների նկատմամբ պետական վերահսկողությունը,

2. ընդլայնված վերարտադրություն ապահովելու տնտեսության կարողությունը, առաջին հերթին, կենսական և ռազմավարական նշանակության ոլորտների զարգացումը,

3. գիտատեխնիկական ներուժի զարգացման մակարդակը, հայրենական գիտական դպրոցների զարգացման հնարավորությունը,

4. ֆինանսական համակարգի կայունությունը,

[62] Гордиенко Д. Основы экономической безопасности государства. М.: Финансы и статистика; ИНФРА-М, 2009г. стр. 213

5. ներքին շուկայի կարիքների բավարարմանը և ներքին արտադրողների պաշտպանությանն ուղղված հավասարակշռված արտաքին տնտեսական քաղաքականությունը,

7. բնակչության կենսամակարդակը, ինչպես նաև աղքատության, գործազրկության, գույքի տարբերակման մակարդակը,

8. տնտեսության մրցունակությունը:

Տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշները, ըստ էության, սահմանում են համապատասխան ոլորտի կամ ճյուղի կտրվածքով թույլատրելի արժեքային մեծությունը կամ շեմը: Դրանցից շեղման արդյունքում տնտեսությունը կորցնում է դինամիկ ինքնազարգացման, ներքին և արտաքին շուկաներում մրցունակության բարձրացման հնարավորությունները, ստեղծվում են դժվարություններ ցանկալի արդյունքների ստացման առումով: Այլ կերպ ասած, այդ ցուցանիշները հնարավորություն են տալիս գնահատել տնտեսության վիճակն անվտանգության տեսանկյունից: Որպես այդպիսիք հիմնական կիրառվում են կյանքի մակարդակը և որակը, գնաճը, գործազրկության մակարդակը, տնտեսական աճը, բյուջեի դեֆիցիտը, պետական պարտքի չափը, միջազգային պահուստների ծավալը, ստվերային տնտեսության չափերը և այլն: Փորձագիտական որոշ շրջանակների կողմից առաջարկվում են տնտեսական անվտանգության գնահատման հետևյալ շեմային արժեքները (տե՛ս Աղյուսակ 10):[63]

[63] Метелев С. Национальная безопасность и приоретиты развития России: социально-экономические и правовые аспекты. Монография. М: 2006г. стр. 47-49.

Աղյուսակ 10.

Տնտեսական անվտանգության գնահատման շեմային արժեքները

п/п	Չափորոշիչ	Շեմային արժեք
1	Վերամշակող արդյունաբերության մասնաբա-ժինը արդյունաբերական արտադրությունում, %	70
2	Մեքենաշինության մասնաբաժինը արդյունաբերական արտադրությունում, %	20
3	Ներդրումային ծավալները, % ՀՆԱ-ի համեմատ	25
4	Պաշտպանության ծախսերը, % ՀՆԱ-ի համեմատ	5
5	Գիտական հետազոտությունների ծախսերը, % ՀՆԱ-ի համեմատ	2
6	Սպառողական նվազագույն զամբյուղից ցածր եկամուտներով բնակչության մասնաբաժինը, %	7
7	Բնակչության կյանքի տևողությունը, տարիներով	70
8	Բնակչության բարձր եկամուտ ունեցող խմբի եկամուտների 10 %-ի հարաբերակցությունը ցածր եկամուտ ունեցող խմբի եկամուտների 10% -ին	8
9	Հանցագործության մակարդակը (հանցագործությունների թիվը 100 հազար բնակչության դեպքում), հազար միավորով	5
10	Կրթության ծախսերը, % ՀՆԱ-ի համեմատ	10
11	Գործազրկության մակարդակը, %	7
12	Գնաճը տարվա կտրվածքով, %	20
13	Ներքին պարտքի ծավալ % ՀՆԱ-ի համեմատ,	30
14	Արտաքին պարտքի ծավալը, % ՀՆԱ-ի համեմատ	25
15	Օտարերկրյա փոխառության մասնաբաժինը բյուջեի դեֆիցիտի մարման մեջ, %	30
16	Բյուջեի դեֆիցիտը % ՀՆԱ-ի համեմատ	5
17	Արտարժույթով կանխիկ փողի ծավալը կանխիկ դրամի ծավալի նկամամբ, %	25
18	Փողի զանգված (M2),% ՀՆԱ-ի համեմատ	50
19	Ներմուծման մասնաբաժինը ներքին սպառման մեջ %	30 25

Մասնագետների մեկ այլ խումբ առաջարկում է տնտեսական անվտանգության գնահատման հետևյալ շեմային արժեքները (տե՛ս Աղյուսակ 11):[64]

Աղյուսակ 11.

Պետության անվտանգության ցուցանիշների սահմանային մեծությունները

N	Ցուցանիշի անվանումը	Համաշխարհային պրակտիկայում սահմանային չափը	Շեղման դեպքում քաղաքական, տնտեսական և ռազմական հնարավոր հետևանքները
1.	2.	3.	4.
	Տնտեսական ոլորտ		
1.	Արդյունաբերական արտադրության մեջ • վերամշակող արդյունաբերության բաժինը • մեքենաշինության բաժինը	 70% 20%	Երկրի ապաինդուստրալիզացիա, ռազմաարդյունաբերական համալիրի փլուզում
2.	Ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ	25%	Արտադրության խաթարում
3.	Նոր ապրանքատեսակների ծավալը թողարկվող ապրանքների մեջ	6%	Բարձր տեխնոլոգիաների, իրացման շուկաների կորուստ, երկրի պաշտպանունակության անկում
4.	Ինֆլյացիայի տարեկան տեմպերը	20%	Բնակչության վստահության անկում, տնտեսության ճգնաժամ
5.	Արտաքին պատքի ծավալը ՀՆԱ-ում	25%	Պետության ինքնուրույնության կորուստ, երկրի ֆինանսական կախվածության մեծացում
6.	Արտաքին փոխառությունների բաժինը բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման մեջ	30%	Պետության ինքնուրույնության անկում
7.	Բյուջետային դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ	5%	Ինֆլյացիայի աճ
8.	Արտաքին արժույթի կանխիկ ծավալը ազգային արժույթի կանխիկ ծավալի նկատմամբ	25%	Ազգային արժույթի նկատմամբ բնակչության վստահության անկում, օտարերկրյա պետություններից երկրի ֆինանսական կախվածության աճ
9.	Դրամական զանգվածը ՀՆԱ-ի նկատմամբ	50%	Շրջանառու միջոցների անբավարարություն, արտադրության անկում
10.	Ներմուծման բաժինը ներքին		Տնտեսական, սոցիալական,

[64] Ярочкин В. Секьюритология: наука о безопасности жизнедеятельности. ,,Ось 89,, М.: 2000 г. Стр. 147

	սպառման մեջ - ընդհանուր, - պարենամթերք	 30% 25%	քաղաքական և ռազմական կախվածություն օտարերկրյա պետություններից
11.	Արդյունաբերական արտադրության անկման մակարդակը	30-40%	Տնտեսության ապաինդուստրալիզացիա, արտադրության ոլորտում զբաղվածների թվաքանակի անկում
12.	Արտահանման մեջ վերամշակող արդյունաբերության բաժինը	40%	Մասնագիտացման անկում, տնտեսության հումքային կառուցվածք
13.	Արտահանման մեջ բարձր տեխնոլոգիաների բաժինը	10-15%	Գիտատար արտադրություններում զբաղվածների թվաքանակի անկում, տնտեսության տեխնոլոգիական հետընթաց
14.	Գիտությանը պետական հատկացումների բաժինը ՀՆԱ-ի նկատմամբ	2%	Ինտելեկտուալ և գիտական ներուժի փլուզում
Սոցիալական ոլորտ			
15.	10 տոկոս առավել հարուստների եկամուտների հարաբերությունը 10 տոկոս առավել աղքատների եկամուտներին	10:1	Սոցիալական բևեռացում, հասարակության սոցիալական կառուցվածքի ձևախեղում
16.	Աղքատության եզրին ապրող բնակչության թվաքանակը	10%	Բնակչության զգալի հատվածի լյումպենացում
17.	Նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցությունը	1:3	Աշխատուժի որակավորման անկում
18.	Գործազրկության մակարդակ	8-10%	Բնակչության սոցիալապես անապահով զանգվածի աճ
Ժողովրդագրական ոլորտ			
19.	Ծնելիության գումարային գործակիցը	2.15	Բնակչության պարզ վերարտադրության բացակայություն
20.	Կյանքի սպասվող միջին տևողությունը	75 տարի	Բնակչության կյանքի պայմանների և առողջության վատթարացում
21.	Բնակչության ծերացման գործակիցը (65 տարեկանից բարձր բնակչության բաժինը)	7%	Բնակչության ծերացում
Բնապահպանության ոլորտ			
22.	Բնապահպանական վճարներից ստացվող մուտքերը ՀՆԱ-ի նկատմամբ	5 %	Բնապահպանական վերահսկողության ցածր մակարդակ

23.	Բնապահպանական միջոցառումների ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ	5%	Բնապահպանության դեգրադացիայի էքստենսիվ բնույթ
Մարդկային վարքագծի ոլորտ			
24.	Հանցավորության աստիճանը (հանցագործությունների թվաքանակը 100 հազար մարդու հաշվով)	5-6 հազար	Հասարակական հարաբերությունների քրեականացում, մարդու փաստացի անպաշտպանվածություն բռնությունների նկատմամբ
25.	Ալկոհոլի օգտագործման քանակը մեկ մարդու հաշվով տարեկան կտրվածքով	8լ	Գիտակցության փաստացի դեգրադացիա
26.	Հոգեկան հիվանդությունների տարածքման մակարդակը 1000 մարդու հաշվով	300	Հասարակության փաստացի դեգրադացիա
Քաղաքական ոլորտ			
27.	Քաղաքական համակարգի արմատական փոփոխությունների կողմնակիցների բաժինը	40 %	Իշխանության ապալեգիտիմացում, պետության և քաղաքացու դիմակայություն
28.	Իշխանության մարմինների նկատմամբ բնակչության վստահության մակարդակը	20-25 %	Ժողովրդից իշխանության հեռացում, բնակչության պասիվություն, անտարբերություն, անելանելիության զգացում բնակչության մոտ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Մարկոսյանի կողմից առաջարկվում է կիրառել տնտեսական անվտանգության գնահատման հետևյալ շեմային ցուցանիշները, որոնք առավել լիարժեք և ամբողջական են բացահայտում անվտանգության մակարդակը երկրում (տե՛ս Աղյուսակ 12)։[65]:

Աղյուսակ 12

Տնտեսական անվտանգության ցուցանիշները և դրանց սահմանային մեծությունները

Տնտեսական անվտանգության ցուցանիշները	Ցուցանիշի սահմանային մեծությունը
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով ($)	2250
Ջինիի գործակիցը	0,15-0,17
Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	ոչ ավելի, քան 60%
Ինֆլյացիայի միջին մակարդակը, %	ոչ ավելի, քան 6-10%

[65] Մարկոսյան Ա. Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. Մեթոդաբանություն և արդյունքներ: Նորավանք ԳԿՀ: Երևան 2005թ. էջ 122-124

Գործազրկության մակարդակը, %	ոչ ավելի, քան 10%
Տնտեսական աճը, %	ոչ պակաս, քան 2-3%
Ներքին պետական պարտքը, % ՀՆԱ նկատմամբ,	ոչ ավելի, քան 20%
Աղքատության ցու ցանիշի «բնական» մակարդակը, %	ոչ ավելի, քան 9%
Կրթության և գիտու թյան համար կատար ված ծախսերը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ պակաս, քան 5%
Արդյունաբերական արտադրության մեջ վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, %	ոչ պակաս, քան 70%
Արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը, %	ոչ պակաս, քան 20%
Ներդրումների ծավալը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ պակաս, քան 25%
Կյանքի սպասվելիք տևողությունը (տարի)	ոչ պակաս, քան 70 տարի
Հանցագործության մակարդակը (հանցա- գործությունների թիվը 100 հազար մարդու հաշվով)	ոչ ավելի 500-ի
Արտաքին պարտքը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ ավելի, քան 25%
Բյուջեի պակասուրդը ՀՆԱ նկատմամբ, %	ոչ ավելի, քան 5%
Դրամական զանգվա- ծը ՀՆԱ նկատմամբ,%	ոչ պակաս 50%- ից
Ներմուծված ապ- րանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	ոչ ավելի, քան 35%
Ներմուծման տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ, %	ոչ ավելի, քան 30%
Ներմուծված սննդամթերքի տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ, %	ոչ ավելի, քան 25%

Ստորև բերվում են ՀՀ վարկանիշային միավորները 2016թ.-ին և տնտեսական անվտանգության մակարդակը 2010 - 2016 թվականներին (տե՛ս Աղյուսակ 13 և գծապատկեր 9.): [66]

Աղյուսակ 13

Հայաստանի Հանրապետության վարկանիշային միավորները 2016թ.-ին

Ցուցանիշը	**Վարկանիշային միավորների մեծությունները**
ՀՆԱ մեկ բնակչի հաշվով (PPP, $)	8818
Տնտեսական աճ, %	0,2
Ներմուծում, % ՀՆԱ-ի նկատմամբ	43,3

[66] Աղբյուրը՝ հաշվարկվել և կազմվել է հեղինակի կողմից:

Արտահանում, % ՀՆԱ-ի նկատմամբ	33,1
Վերջնական սպառման ծախսեր, % ՀՆԱ-ի նկատմամբ	88,9
Գնաճի մակարդակը, %	-1,3
Ներքին շուկայի չափը*	2,8
Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսք/ՀՆԱ, %	3,2
Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ արտահոսք /ՀՆԱ, %	0,5
Մշակող ադյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, %	11,7
Համախառն ազգային խնայողություններ, % ՀՆԱ-ի նկատմամբ	16
Արդյունահանող ադյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, %	18,5
Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետություն	0,5
Մրցակցային առավելությունների բնույթը	0,1
Դրամական զանգվածը, % ՀՆԱ-ի նկատմամբ	43
Ներքին շուկայում մրցակցության ինտենսիվությունը*	1,1
Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը*	1,5
Բանկային համակարգի կայունություն*	2,5
Բիզնեսի անկախությունը*	1,5
Ենթակառուցվածքների որակը*	0,8
Սեփականության իրավունք*	2,5
Դատական անկախություն*	0,6
Կոռուպցիայի ընկալման ցուցանիշ*	0,7
Հարևան երկրների հետ հարաբերությունները*	0,7
Իրավունքի գերակայություն*	1,6
Կազմակերպված հանցագործությունների թիվը*	1,8

Ոստիկանական ծառայությունների հուսալիություն*	1,4
Անօրինական վճարներ և կաշառք*	0,2
Քաղաքական կայունություն*	0,9
Կառավարության արդյունավետություն	0,8
Գիտահետազոտական աշխատանքների վրա կատարվող ծախսեր % ՀՆԱ-ի նկատմամբ	1,9
Նորարարական կարողություններ	2,4
Կյանքի սպասվելիք տևողություն	74
Մեծահասակների գրագիտության մակարդակը%	91,3
Թերսնման մակարդակը	17
Գործազրկության մակարդակը	18.1
Մանկամահացության դեպքերը 1000 նորածնի հաշվով	12

*ցուցանիշը նորմավորված է 0-4 միջակայքում որտեղ 4-ը վկայակոչում է լավագուն արդյունքի արձանագրումը



Գծապատկեր 9. ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակը 2010-2016 թվականներին

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից շեմային ցուցանիշների մշակման կաևորությունն առավել քան ակնհայտ է: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ դրանց և փաստացի ցուցանիշերի համապատասխանությունը դեռևս միանշանակ կերպով չի վկայում տնտեսական անվտանգության ցանկալի մակարդակի առկայության մասին: Վերջիններս ավելի շատ ունեն կողմնորոշիչ բնույթ: Այս առումով, մեկ անգամ ևս կարևորվում է հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարության մշակման անհրաժեշտությունը, որը թույլ կտա տնտեսական անվտանգուիթյան մակարդակի գնահատման միջոցով համապատասխան միջոցառումներ իրականացնել այդ ուղղությամբ առկա հիմնախնդիրների լուծման համար:

2.3 Տնտեսական անվտանգության օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ ապահովվածությունը

Ցանկացած պետության տնտեսական անվտանգության ապահովումն, անշուշտ, ենթադրում է որոշակի օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ հիմքերի առկայություն: Վերջիններիս գծով հանրապետությունում տիրող իրավիճակը, մեր կարծիքով, բավարար համարվել չի կարող: Կարելի է ասել, որ հիմնականը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն է, որը հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007 թ. հունվարի 26-ի նիստում: Նշված փաստաթղթով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը ահմանվում է որպես պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ, որն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար

ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով:[67]

Ազգային անվտանգության ռազմավարության իրագործման հիմնական երաշխիքներն են՝

- պետական կառավարման համակարգի արդյունավետությունը,
- իրավունքի գերակայության ապահովումը,
- ժողովրդավարական արժեքների արմատավորումը,
- դատական իշխանության անաչառությունն ու անկախությունը,
- զինված ուժերի մարտունակությունը,
- անվտանգության և իրավապահ մարմինների արդյունավետ գործունեությունը,
- արդյունավետ միջազգային ներգրավվածությունն ապահովող արտաքին քաղաքականությունը,
- սոցիալական արդարության ապահովումը:

Ռազմավարությամբ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքներ են հռչակվում՝ անկախությունը, պետության և ժողովրդի պաշտպանվածությունը, խաղաղությունը և միջազգային համագործակցությունը, հայապահպանությունը, բարեկեցությունը: Փաստաթղթով սահմանվում են նաև ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոններն ու գործողությունները անկախության, պետության և ժողովրդի անվտանգության, խաղաղության և միջազգային անվտանգության, հայապահպանության և բարեկեցության ոլորտներում: Ազգային անվտանգության ռազմավարությամբ արտաքին սպառնալիքներն են հռչակվում զինված ուժի կիրառումը, էթնիկական հակամարտությունները, ներքին բախումները և ռազմական գործողությունները սահմանակից պետություններում, սահմանամերձ պետությունների տարանցիկ ուղիների խափանումը, ռազմավարական դաշինքների թուլացումը կամ ոչ բավարար ներգրավվածությունը դրանց. ահաբեկչությունն ու անդրսահմանային հանցագործությունները, Էներգետիկ կախվածությունը, Հայաստանի մեկուսացումը

[67] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն

տարածաշրջանային ծրագրերից, սփյուռքի ազգամշակութային ինքնության թուլացումը, համաճարակները և աղետները: Ներքին սպառնալիքներն են պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազումը, դատաիրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը, քաղաքական համակարգի անկատարությունը, ժողովրդավարության արմատավորման ոչ բավարար մակարդակը, հասարակության բևեռացումը, ուրբանիզացումը, շուկայական տնտեսության կայացման և ֆինանսաբյուջետային կառավարման մարտահրավերները, ենթակառուցվածքների ցանցի ոչ բավարար մակարդակը, գիտակրթական համակարգի արդյունավետության ցածր մակարդակը, բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը, ժողովրդագրական բացասական միտումները, բնապահպանական խնդիրները և բնական պաշարների անարդյունավետ կառավարումը, համաճարակները և աղետները:[68]

Ազգային անվտանգության ռազմավարությամբ ազատական տնտեսության ուղղությամբ նպատակներ են սահմանվում՝ տնտեսության կայուն աճը, մանր և միջին գործարարության զարգացումը, էներգետիկ անկախությունը, գործարարության համար առավել ազատական պայմանների ստեղծումը:

Կայուն տնտեսական առաջընթացի ապահովման գործում կարևորում է շուկայական հարաբերությունների հետագա զարգացումը, տնտեսության մրցունակության բարձրացումը, մակրոտնտեսական և ֆինանսական կայունության ապահովումը, ֆինանսական համակարգի զարգացումը, ֆինանսական միջնորդության խորացումը, մրցակցային միջավայրի բարելավումը, տնտեսության ստվերային մասի կրճատումն ու դոլարացման էական նվազեցումը, տնտեսության ճյուղերի մենաշնորհացման կանխումը, բնական մենաշնորհների արդյունավետ կառավարումը և վերահսկումը, ներդրումների խթանման հեռանկարային ծրագրի իրագործումը, տարածքային ու ճյուղային սոցիալ-տնտեսական զարգացման համաչափությունը, ենթակառուցվածքների արդյունավետ կառավարումը, տնտեսության կառուցվածքում գիտատար ճյուղերի և բնապահպանության տեսակետից մաքուր տեխնոլոգիաների կիրառման գերակայության ապահովումը, արտահանման խթանումը: Կարևոր

[68] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն

խնդիրներ են դիտարկվում նաև էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացումը, հանրապետության տրանսպորտային համակարգի կայուն զարգացումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, բնակչության կենսաբանական անվտանգության և երկրի պարենային անվտանգության ապահովումը:

Կյանքի որակի բարելավման նպատակով կարևորվում են աղքատության հաղթահարումը, բնակչության կենսամակարդակի հարաճուն բարձրացումը, սոցիալական արդարության արմատավորումը, հասարակության բևեռացման վերացումը, գիտակրթական համակարգի արդիականացումը, կրթության մատչելիությունը, հոգևոր-մշակութային ոլորտների շարունակական զարգացումը, բնակչության սոցիալական պահանջմունքների բավարարումը, սոցիալական ենթակառուցվածքների ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը, նոր աշխատատեղերի ստեղծմամբ և ապահովագրական համակարգի ներդրմամբ բնակչության սոցիալական վիճակի հարաճուն բարելավումը, կենսաթոշակային համակարգի արդյունավետության բարձրացումը, կենսաթոշակի նվազագույն չափի համապատասխանեցումը կենսաբանական պահանջմունքների միջազգային չափանիշներին, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, գիտական և գիտամանկավարժական ներուժի վերարտադրությունը, «ուղեղների արտահոսքի» կանխումը, առողջապահության առավել արդյունավետ համակարգի ստեղծումը:[69]

Տնտեսական անվտանգության ապահովման իրավական ապահովվածության առումով վիճակն առավել անմխթար է հանրապետությունում համապատասխան օրենսդրական հիմքերի բացակայության առումով: Նույնը վերաբերում է ինստիտուցիոնալ ապահովվածությանը: Մինչդեռ, զարգացած երկրներում այդ ուղղությամբ առկա միջազգային փորձն առավել քան խոսուն է: Մասնավորապես, ազգային անվտանգության ապահովման համար Ֆրանսիայում ստեղծված են տարբեր մարմիններ՝ քաղաքացիական անվտանգության և պաշտպանության, հասարակական անվտանգության և պաշտպանության, տնտեսական պաշտպանության և այլն[70], իսկ Գերմանիայում տնտեսական անվտանգության նկատմամբ պետական մոտեցումն, ըստ

[69] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն

[70] Շահգելդյան Մ., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2003:

երկրի սոցիալական դոկտրինայի, խստորեն ուղղված է բնակչության շահերի պաշտպանությանը: Չինաստանում տնտեսական անվտանգությունը համարվում է պետական անվտանգության համակարգի ուղղակի մաս, իսկ Ճապոնիայում այն չհամարվելով ինքնուրույն հասկացություն, հանդիսանում է ազգային անվտանգության համալիրի բաղկացուցիչ: Ռուսաստանի Դաշնությունում ևս մեծ ուշադրություն են կենտրոնացնում տնտեսական անվտանգության ապահովման հարցերի վրա, որոնք, ըստ հեղինակավոր որոշ ուսումնասիրությունների, պետք է հանդիսանան պետական ռազմավարության կարևորագույն մասը:[71]

Հարկ է նշել, որ իրենց բնույթով՝ ինչպես ամերիկյան, այնպես էլ եվրոպական տնտեսական անվտանգության հայեցակարգերն, այդուհանդերձ, կիրառելի չեն Հայաստանի նման փոքր և թույլ տնտեսական ներուժ ունեցող երկրներում, քանի որ նրանցում առկա են անվտանգության սկզբունքային տարբեր խնդիրներ:[72] Միևնույն ժամանակ, ազգային անվտանգության դիտարկված հայեցակարգերում ընդհանրականն այն է, որ գրեթե բոլոր երկրների տնտեսական անվտանգության ապահովումը զուտ պետության գործառույթն է:

Ընդհանոր առմամբ, տնտեսական անվտանգության համակարգն ունի որոշակի գործառույթներ, որոնցից հատկանշական են պաշտպանիչ, կարգավորիչ, կանխարգելիչ, նորարարական և սոցիալական գործառույթները: Պաշտպանիչ գործառույթը ենթադրում է ներքին և արտաքին սպառնալիքների չեզոքացմանն ուղղված քայլերի իրականացում, որը կարող է ապահովվել ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մարդկային կապիտալի զարգացման, արտաքին ազդեցություններից տնտեսության պաշտպանության կառուցակարգերի ներդրման միջոցով: Կարգավորիչ գործառույթը հիմնված է սպառնալիքների չեզոքացման երկու՝ «վերևից ներքև» և «ներքևից վերև" մոտեցումների վրա: Առաջինը հիմնված է պետական կարգավորման

---

[71] Абалкин Л. Избранные труды: В 4-х томах, т.4, В поисках новой стратегии, М. ОАО “НПО Экономика”, 2000г. 799 стр. Бухвальд Е., Головацкая К., Лазуренко С., Макроаспекты экономической безопасности: факторы, критерии, показатели, Вопросы экономики, 1999г. N 12. Глазьев С. Основа обеспечения экономической безопасности России–альтернативный реформационный курс, Российский экономический журнал 1997г. N 1-2,

[72] Աղայան Ա. Ազգային անվտանգություն. հասկացությունները, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2003: Սաֆարյան Ս. Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2003:

և տնտեսության շուկայական կառուցակարգի ձևավորման վրա: Այս համատեքստում, տնտեսության պետական կարգավորումը պետք է կամ ուժեղացնի շուկայական կառուցակարգը, կամ սահմանափակի նրա հնարավորությունները, ելնելով տնտեսական զարգացման առանջնահերթություններից և նպատակահարմարությունից: Պետական կարգավորման գլխավոր նպատակը պետք է լինի խնայողությունների և ներդրումների միջև հավասարակշռության, մակրոտնտեսական կայունության, տնտեսական աճի, բարենպաստ գործարար միջավայրի ապավումը: Երկրորդ մոտեցումը հիմնված է շուկայական ինքնակարգավորման կառուցակարգերի արդյունավետ օգտագործման վրա: Դա, առաջին հերթին, վերաբերում է տնտեսական գործունեության արտաքին և ներքին պայմաններին, մրցակցությանը և ազատ գնագոյացմանը: Երկրի տնտեսական անվտանգության համակարգի կանխարգելիչ գործառույթը միտված է ներքին և արտաքին սպառնալիքների, ռիսկերի, ճգնաժամային իրավիճակների կանխատեսմանն ու կանխմանը: Հատկապես կարևոր նշանկություն ունեն տնտեսական համակարգի պաշտպանությանն ուղղված միջոցառումները: Կանխարգելիչ միջոցառումների իրականացումը հիմնված է տնտեսական անվտանգության ապահովման տեղեկատվական բաղադրիչի արդյունավետ օգտագործման վրա, ինչը ներառում է ռիսկերի և սպառնալիքների կանխատեսման և դրանց հաղթահարման համար ճշգրիտ և ժամանակին ստացված տեղեկատվությունը: Տեղեկատվական ռեսուրսների միջոցով է միայն հնարավոր դառնում արդյունավետ կերպով չեզոքացնել տնտեսական անվտանգության սպառնալիքներն ու ռիսկերը: Տնտեսական անվտանգության նորարարական գործառույթը ենթադրում է նորարարական լուծումների մշակում՝ երկրի տնտեսությանն ուղղված սպառնալիքների վերացման նպատակով: Այս գործառույթն ուղղակիորեն իրականացվում է սպառնալիքի չեզոքացում - հետևանքների վերացում - կորուստների փոխհատուցում հաջորդականությամբ: Եվ վերջապես, սոցիալական գործառույթը ենթադրում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրացում, բնակչության կյանքի որակի բարելավում և հանրային կարիքների բավարարում: Հաշվի են առնվում նաև մի շարք գործոններ, որոնք սպառնալիք են ներկայացնում երկրի տնտեսական

անվտանգության համար, այդ թվում գործազրկություն, եկամուտների անհավասար բաշխվածություն, հանցավորություն, կոռուպցիա և այլն: Այս պայմաններում ցանկացած ժողովրդավարական պետության խնդիրն է ապահովել և զարգացնել սոցիալական և տնտեսական նշված ռիսկերը հաղթահարելու կառուցակարգեր:

Կարևոր նշանակություն ունի նաև երկրի տնտեսական անվտանգության ապահովման կառուցակարգի կազմակերպական հիմքերի ստեղծումը: Այն իր մեջ ընդգրկում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները, հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության մյուս ինստիտուտները, ինչպես նաև տնտեսական անվտանգության ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը: Սա նշանակում է, որ ազգային շահերի պաշտպանությունը տնտեսության ոլորտում պահանջում է իշխանության և ոչ պետական կառույցների միջև սերտ համագործակցություն: Ընդ որում, պետք է հստակ սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները ազգային շահերի պաշտպանության ոլորտում, որոնք պետք է իրականացվեն տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների որոշման, ֆինանսական և բանկային համակարգի բարեփոխումների, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առաջընթացի և կանխատեսումների իրականացման ժամանակ և այլն: Տնտեսական անվտանգության ապահովման արդյունավետ կառուցակարգը նաև ենթադրում է կառավարության և մասնավոր հատվածի միջև հավասարակշռված փոխգործակցության ապահովում:[73]

Տնտեսական անվտանգության ապահովման կառուցակարգը կարելի է ներկայացնել հետևյալ առանցքային տարրերի տեսքով:[74]

- Պետության կողմից տնտեսության և հասարակության գործունեության բազմակողմանի վերլուծության հիման վրա տնտեսական անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների բացահայտում,

[73] Экономическая безопасность России: Общий курс: Под ред. В. К. Сенчагова. М., 2005г. стр. 808

[74] Фирсов В. Меры по устранению угроз экономической безопасности Российской Федерации. Вестник РАГС при Президенте РФ. 2008г. № 2.

- սոցիալ-տնտեսական ցուցանիշների շեմային թույլատրելի նորմաների որոշում, որոնց գերազանցումը կհանգեցնի անկայունության և սոցիալական կոնֆլիկտի,
- տնտեսության անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Առաջինն, ըստ էության, ենթադրում է տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված մոնիթորինգի պետական համակարգի ստեղծում, պետական կառույցներին տեղեկատվական աջակցության ցուցաբերում տնտեսական անվտանգության սպառնալիքների, դրանց բնույթի, հնարավոր հետևանքների ու այս ոլորտում կանխատեսումների վերաբերյալ, իշխանության տարբեր մակարդակների միջև տեղեկատվական համագործակցություն, տնտեսական անվտանգության սպառնալիքների վերահսկում: Մոնիտորինգի իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- կազմակերպչական և մեթոդաբանական աջակցություն տեղեկատվության ձեռք բերման և գնահատման նպատակով,
- տնտեսական անվտանգության ռիսկերի մասին տեղեկությունների ձեռք բերման կառուցակարգի մշակում,
- տնտեսական անվտանգության սպառնալիքների կանխման համար տեղեկությունների օպերատիվ վերլուծություն:

Մոնիտորինգի համակարգի միջոցով տնտեսական անվտանգության ապահովման կոնկրետ գործիքներն ու կառուցակարգերը որոշելիս պետք է հաշվի առնել տնտեսական անվտանգության սպառնալիքները, ինչպես նաև դրանց ազդեցության կարճաժամկետ կամ երկարաժամկետ բնույթը, կանխելու հնարավորությունը:

Տնտեսական անվտանգության ապահովման կառուցակարգի երկրորդ տարրը հիմնված է անվտանգության մակարդակի գնահատման ցուցանիշների սահմանման վրա: Ընդ որում, անհրաժեշտ է գնահատել դրանց բարելավման կամ վատթարացման միտումները՝ բացահայտելու համար վտանգավոր սահմաններից տնտեսության դուրս գալու ուղիները:

ԳԼՈՒԽ 3
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1. Ազգային անվտանգության ապահովման ռազմավարական հիմնադրույթները

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը կենսագործունեության բոլոր ոլորտներում արտաքին և ներքին վտանգներից Հայաստանի Հանրապետությունում անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովմանն ուղղված մոտեցումների համակարգի ձևավորման հիմք պետք է հանդիսանա, որը կամրագրի երկրի անվտանգության ապահովման սկզբունքները: Այս համատեքստում որպես հիմնական սկզբունքներ պետք է դիտարկվեն ազգային շահերի առաջնայնությունը, անվտանգության ապահովման հարցում անհատի, հասարակության և պետության փոխադարձ պատասխանատվությունը, տնտեսական անվտանգության ապահովման միջոցառումների միասնականությունը, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, անվտանգության համակարգի գործունեության վերահսկողությունը, օրինականությունը, անկախությունը արտաքին ազդեցություններից, օտար արժեքների և գերակայությունների պարտադրումից և այլն: Հայաստանի Հանրապետությունում որպես ազգային անվտանգության օբյեկտներ պետք է դիտարկվեն մարդու բնական և անօտարելի իրավունքները և ազատությունները, ազգային, հոգևոր, բարոյական և այլ արժեքները, սեփականությունը, սահմանադրական կարգը, շրջակա միջավայրի պահպանությունը, տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը: Ազգային անվտանգության սուբյեկտներ պետք է հանդիսանան պետությունը՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների համակարգով, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, քաղաքացիները:

Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը, նախ և առաջ, պետք է հիմնված լինի ազգային շահերի համակողմանի և ամբողջական պաշտպանության վրա: Դրանք քաղաքական, տնտեսական, սոցիալական, միջազգային, տեղեկատվական, պաշտպանության, բնապահպանական, առողջապահական, հոգևոր, իրավական և այլ ոլորտներում անհատի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ամբողջությունն է, որը կրում է երկարաժամկետ բնույթ և սահմանում է պետության արտաքին և ներքին քաղաքականության հիմնական նպատակները, ռազմավարական, մարտավարական և ընթացիկ խնդիրները: Ազգային շահերի պաշտպանությունը պետք է իրականացվի տնտեսության կայուն զարգացման հիման վրա, ժողովրդավարական քաղաքական համակարգի ներդրմամբ, քաղաքացիական հասարակության կայացմամբ: Ընդ որում, պետք է կարևորել անհատի, հասարակության և պետության շահերի առանձնացումը, որոնք որոշ դեպքերում կարող են միմյանց հետ գտնվել որոշակի հակադրության մեջ: Անհատի շահերը կայանում են սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացման, անձնական անվտանգության ապահովման, կենսամակարդակի բարձրացման, ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման մեջ: Հասարակության շահերը Հայաստանի՝ իբրև ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության զարգացման, ինչպես նաև ազգային համերաշխության ամրապնդման արդյունքում՝ ժողովրդի մտավոր, հոգևոր և սոցիալտնտեսական վիճակի բարելավման մեջ են: Պետության շահերը Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի, տարածքային ամբողջականության, ինքնիշխանության և քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության, օրինականության և իրավակարգի ապահովման, բարիդրացիական և փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման մեջ են:

Անվտանգության տարբեր ոլորտներում ազգային շահերն ունեն տարբեր դրսևորումներ: Տնտեսական ոլորտում դրանք կայանում են բնակչության կենսամակարդակի շարունակական բարձրացման ապահովմանն ուղղված տնտեսական, արդյունավետ և կենսունակ համակարգի ստեղծման մեջ: Սոցիալական ոլորտում ազգային շահերը պահանջում են ժողովրդի բարձր կենսամակարդակի և

առողջության ապահովում: Տեղեկատվական ոլորտում դրանք կայանում են տեղեկատվության ստացման, օգտագործման և տարածման բնագավառում քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովման, հեռահաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման, պետական և այլ տեղեկատվական համակարգերի պետական, ծառայողական, առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվության և տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության, համաշխարհային տեղեկատվական տարածությանը ինտեգրվելու, արտաքին բացասական ազդեցություններից և ներգործություններից սեփական տեղեկատվական տարածության պաշտպանության մեջ: Ազգային շահերը պաշտպանության ոլորտում կայանում են Հայաստանի Հանրապետության անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, Հայաստանի Հանրապետության և նրա դաշնակիցների դեմ ռազմական ագրեսիայի կանխման, պետության խաղաղ, ժողովրդավարական զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման մեջ: Բնապահպանական ու բնօգտագործման ոլորտում ազգային շահերը կայանում են շրջակա միջավայրի պահպանության, վերականգնման, վերարտադրության և բնական պաշարների բանական օգտագործման մեջ, բնակչության կյանքի համար առողջ միջավայրի ապահովման նպատակով:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման ոլորտում հիմնական խնդիրներն են՝

- երկրի պաշտպանության ամրապնդումը, ազգային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների կանխատեսումը, բացահայտումը, կանխարգելումը, հակազդումը և չեզոքացումը,
- արտաքին և ներքին սպառնալիքների կանխարգելման և վերացման ուղղությամբ ծրագրային և օպերատիվ միջոցառումների իրականացումը,
- Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ապահովումը,
- ժողովրդագրական գործընթացների կարգավորումը,

- այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության բարիդրացիական, հավասարակշռված, իրավաահավասար և փոխշահավետ համագործակցությունը,
- երկրի տնտեսության զարգացումը և սոցիալական ուղղվածություն ունեցող տնտեսական քաղաքականության իրականացումը, տնտեսական շահերի պաշտպանությունը,
- գիտատեխնիկական և տեխնոլոգիական կախվածության նվազեցումը,
- մարդու և քաղաքացու անվտանգության, նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովումը,
- պետական և տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործումը, օրինականության ու կարգուկանոնի ամրապնդումը և հասարակության սոցիալտնտեսական և քաղաքական կայունության ապահովումը,
- երկրի բնապահպանական ու բնօգտագործման վիճակի բարելավումը:

Արտաքին տնտեսական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են տնտեսության միջազգային ինտեգրացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության առավել լայն ինտեգրացումը, այլ պետությունների, միջազգային տնտեսական և ֆինանսական կառույցների հետ համագործակցության ընդլայնումը, հայրենական արտադրանքի իրացման շուկաների ընդլայնումը, հայրենական արտադրողների շահերի պաշտպանության ապահովումը, երկրի արտաքին պարտավորությունների կրճատմանն ուղղված հաշվեկշռված տնտեսական քաղաքականության իրականացումը, հեռահաղորդակցային տրանսպորտային և ապրանքափոխադրման ցանցերի շահագործման գործում տարբերակված մոտեցումների կիրառումը, արժույթային կարգավորման և դրա վերահսկողության ոլորտում ներքին շուկայում արտասահմանյան արժույթային հաշիվների կրճատման և կապիտալի անվերահսկելի արտահանման զսպմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը, սպառողների շահերի պաշտպանությունը:

Ներքին տնտեսական ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են.

1) տնտեսական անվտանգության հայեցակարգի մշակումը,

2) տնտեսական բարեփոխումների օրենսդրական բազայի ապահովումը և դրա կիրառման նկատմամբ վերահսկողության արդյունավետ կառուցակարգերի ստեղծումը,

3) տնտեսական ազատականացման և տնտեսության պետական կարգավորման միջև ներդաշնակ հարաբերակցության ապահովումը,

4) գիտատեխնիկական, տեխնոլոգիական և արտադրական ներուժի պահպանումը և զարգացումը, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացումը, տնտեսական աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման ապահովումը,

5) արտադրության կազմակերպման գործուն կառուցակարգերի ձևավորման և ապրանքների իրացման ու ծառայությունների մատուցման ճանապարհով հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցության առավելագույն մակարդակի ապահովման նպատակով արդյունավետ և սոցիալական ուղղվածություն ունեցող շուկայական տնտեսության ձևավորումը,

6) փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը և նրան ուղղված պետական աջակցությունը,

7) տնտեսության կառուցվածքի կատարելագործումը, գիտատար և վերամշակման բարձր մակարդակ ունեցող արտադրությունների զարգացումը, ընդլայնված վերարտադրության հիմք հանդիսացող ճյուղերին աջակցությունը, բնակչության զբաղվածության ապահովումը,

8) ներդրումային ակտիվության բարձրացումը, դրա պետական պաշտպանության ուժեղացումը, տնտեսության շահերին համապատասխանող բանկային համակարգի ստեղծումը, արդյունաբերության կառուցվածքային բարեփոխումների և կապիտալ ներդրումների ֆինանսավորման նպատակով պետական ծրագրային քաղաքականության իրականացումը,

9) մրցունակ ճյուղերի և արտադրությունների առաջանցիկ զարգացումը, գիտատար արտադրանքի շուկայի ընդլայնումը, առաջադեմ տեխնոլոգիաների զարգացումը,

հայրենական ձեռնարկությունների մրցունակության բարձրացումը, հայրենական արտադրության հովանավորչությունը,

10) գիտության և տեխնիկայի զարգացման առաջնահերթ ուղղությունների ֆինանսական և նյութական ռեսուրսների կենտրոնացումը,

11) գիտատեխնիկական ներուժի զարգացումը,

12) գիտահետազոտական մշակումների արդյունքների օգտագործումն ու հեղինակային իրավունքի պաշտպանությունն ապահովող պետական աջակցության ենթակառուցվածքների ձևավորումը,

13) պետության կողմից ձեռնարկությունների զարգացման և մրցունակության բարձրացման համար հավասար պայմանների ստեղծումը, բնակչության բարեկեցության բարձրացմանը, գիտության և կրթության առաջընթացի, հասարակության հոգևոր և բարոյական զարգացմանը, սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված գործունեություն իրականացնող ձեռնարկությունների պետական աջակցությունը,

14) մարդու և քաղաքացու սոցիալական պաշտպանվածության համակարգերի ստեղծումը, սոցիալական իրական երաշխիքների պետական ապահովումը, կոլեկտիվ պատասխանատվության և որոշումների ժողովրդավարական ձևով ընդունման կառուցակարգերի զարգացումը, սոցիալական գործընկերության արմատավորումը,

15) արդյունաբերական այնպիսի ճյուղերի զարգացումը, որոնց արտադրատեսակների պահանջն ունի ներքին և արտաքին շուկան:

Ժողովրդագրական ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են՝ ազգաբնակչության ներդաշնակ տարաբնակեցման ապահովումը և սահմանամերձ գոտիների հավասարաչափ զարգացումը, ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներում վերաբնակեցման կազմակերպումը:

Սահմանադրական կարգի պահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովումը, բնակչության տարբեր խմբերի շահերի և

հետաքրքրությունների մերձեցումը, նրանց բազմակողմանի համագործակցության ապահովումը, հավասարակշռված և ներդաշնակ պետական, ազգային և տարածքային քաղաքականության իրականացումը, օրենքի գերակայության ապահովումը և օրենսդրության կատարելագործումը, պետության տարածքային ամբողջականության պաշտպանության իրավական և կազմակերպական կառուցակարգերի մշակումը, համապետական և տեղական շահերի հավասարակշռվածությունն ապահովող տարածքային քաղաքականության մշակումը և իրականացումը:

Ազգային անվտանգության հիմնախնդիրների համալիր բացահայտման և ռազմավարության մշակման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի դրանց հայեցակարգային մոտեցումների մշակումը սահմանադրականության ապահովման համատեքստում:[75] Այս տեսակետից էական քայլ ենք համարում Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի» ստեղծումը, որն առայժմ միակն է հանրապետությունում, և կարծում ենք, որ այն մեծ չափով կնպաստի Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության խնդիրների համակողմանի վերլուծությանը, որն իր հերթին կնպաստի երկրի անվտանգության ապահովման խնդրի կայուն իրագործմանը:

ԵՊՀ «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը», հանդիսանալով «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոն հիմնադրամի կոլեկտիվ համահիմնադիր անդամ, իր գործունեության խնդիրների շարքում հանձնառու է դառնում «տարբեր ոլորտներին առնչվող տնտեսական քաղաքականության սկզբունքների մշակմանը, հաշվի առնելով սահմանադրական նորմերի ազդեցության գործառութային, կառուցակարգային հնարավորությունները և կիրառելիության առանձնահատկությունները»:[76]

Քաղաքացիների առողջության պահպանման և ամրապնդման ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման

[75] Գ.Գ. Հարությունյան, Հ.Լ. Սարգսյան, Ռ.Ա. Գևորգյան, Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, «Զանգակ-97» ՍՊԸ, Երևան, 2017, 139 էջ:

[76] Տե՛ս, http://consteconom.ysu.am/en/:

կարևորագույն խնդիրներն են առողջապահության հայեցակարգի մշակումը, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը, բնակչության անապահով խավերին հասցեագրված առողջապահական ծրագրերի իրականացումը, մատչելի և արդյունավետ բուժօգնության ապահովումը, պետական ապահովագրության և մասնավոր բժշկական օգնության զարգացումը, բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, ճառագայթային անվտանգության, երեխաների առողջության պահպանության, շտապ և անհապաղ բժշկական օգնության ոլորտում պետական ծրագրերի իրականացումը:

Բնապահպանական ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են.

1) շրջակա միջավայրի անվտանգության հայեցակարգի մշակումը,

2) շրջակա միջավայրի պահպանությունը, վերականգնումը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը,

3) բնակչության շրջակա միջավայրի պահպանության մշակույթի բարձրացումը,

4) շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների կանխումը, վտանգավոր նյութերի և թափոնների ապօրինի շրջանառության կանխումը, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների բնապահպանական անվտանգության ապահովումը, վտանգավոր նյութերի և թափոնների արտադրության, օգտագործման, ներմուծման, արտահանման և հեռացման նկատմամբ վերահսկողությունը,

5) շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտման կանխումը,

6) ատոմային կայանի վառելիքի էկոլոգիապես անվտանգ պահպանումը և թափոնների վնասազերծումը,

7) բնապահպանական ու բնօգտագործման բնույթի հիմնախնդիրների լուծման գործում միջազգային համագործակցությունը,

8) անվտանգ արտադրությունների, էկոլոգիապես մաքուր էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործումը և էներգախնայողության ու էներգաարդյունավետության բարձրացումը,

9/ բնապահպանության ու բնօգտագործման ոլորտի օրենսդրության կատարելագործումը.

10) շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնահարցերի լուծման վերաբերյալ որոշումների կայացմանը հասարակության ներգրավման ապահովումը,

11) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման բնապահպանական ու բնօգտագործման փորձաքննության գործընթացի կատարելագործումը և կիրառումը:

Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ոլորտում ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են՝ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի մշակումը, տեղեկատվական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացումը, հայրենական տեղեկատվական ենթակառուցվածքների կատարելագործումը և պաշտպանությունը, համաշխարհային տեղեկատվական տարածքին Հայաստանի Հանրապետության ինտեգրումը, տեղեկատվական ոլորտում սպառնալիքների կանխումը, տեղեկատվության ոլորտի սուբյեկտների (մասնակիցների) գործունեության համար հավասար պայմանների ստեղծումը, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումը, արտաքին տեղեկատվական էքսպանսիայի և հասարակական կարծիքի մանիպուլիացիայի, հասարակական գիտակցությանը հասցվող բարոյական վնասի կանխմանն ուղղված միջոցառումների մշակումը և իրականացումը:

Պարենային անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են.

1) պարենային անվտանգության հայեցակարգի մշակումը,

2) թունավոր և վնասակար նյութերից զերծ սննդամթերքով և սպառման այլ ապրանքներով ազգաբնակչության ապահովումը,

3) Հայաստանում արտադրվող և հանրապետություն ներմուծվող սննդամթերքի և սպառման այլ առարկաների հիգիենիկ անվտանգության, որակի ստանդարտների պետական համակարգի պահանջներին համապատասխանությունը,

4) պարենային անկախությունը և պետության կողմից բնակչությանը պարենով ապահովելու մատչելիության պետական երաշխավորումը,

5) պոտենցիալ վտանգ ներկայացնող նյութերի և օրգանիզմների գրանցման պետական համակարգի, ազգային ռեգիստրի և տվյալների բազայի ստեղծումը,

6) ներմուծվող և արտահանվող սննդամթերքի և սպառման այլ ապրանքների որակի սերտիֆիկացումը,

7) արտասահմանից սննդամթերքի ներկրման դադարեցման դեպքում պարենային ճգնաժամի կանխարգելումը,

8) սպառման վայրում բնակչության գնողունակ պահանջարկը բավարարող ծավալներով սննդամթերքի և սպառման այլ ապրանքների առաջարկի ապահովումը,

9) կենսապահովման նվազագույն զամբյուղի սահմանումը, սոցիալական նպաստների, արտոնությունների, եկամուտների մակարդակի, գնային համակարգի սպառման կառուցվածքի պայմաններում բնակչության կողմից ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան սննդամթերքի և սպառման այլ ապրանքների ձեռքբերման հնարավորությունների ստեղծումը,

10) պետական պարենային պահուստի առկայությունը, վերականգնումը և համալրումը.

11) երկրի համար անհրաժեշտ սննդամթերքի հնարավոր առավելագույն ծավալի արտադրության ապահովումը,

12) պարենային անվտանգության ապահովման պետական նպատակային ծրագրերի իրականացումը,

13) պարենային անվտանգության ոլորտում իրավիճակի կանխատեսումը և պարենային ճգնաժամի կանխարգելման միջոցառումների իրականացումը,

14) բնակչության ջրամատակարարման համակարգերի անվտանգության ապահովումն ու պահպանությունը:

Սոցիալական ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են.

1) սոցիալական ապահովության հայեցակարգի մշակումը,

2) բնակչության կենսամակարդակի բարձրացումը,

3) սոցիալական ապահովության և աջակցության պետական և ոչ պետական գործուն կառուցակարգերի ձևավորումը,

4) բնակչության սոցիալապես անապահով խմբերի նկատմամբ հասցեագրված սոցիալական քաղաքականության իրականացումը,

5) կենսաթոշակառուների, հաշմանդամների, ծերերի, երեխաների և բնակչության օգնության կարիք ունեցող այլ խավերի նկատմամբ պետական նպատակային ծրագրերի իրականացումը,

6) հասարակության սոցիալական բևեռացման մեղմացմանը և աղքատության վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

7) կենսաթոշակների, կրթաթոշակների, նպաստների, զբաղվածության, աշխատանքի վարձատրության, ինչպես նաև դրանցով պայմանավորված՝ բնակչության կենսամակարդակի բարձրացման նպատակով պետական ծրագրային քաղաքականության իրականացումը,

8) բնակչության և նրա առանձին խավերի սոցիալական դրության և պաշտպանվածության չափանիշների մշակումը,

9) սոցիալական պահանջմունքների նորմատիվների մշակումը (կենսաապահովման նվազագույն զամբյուղ, նվազագույն աշխատավարձ, նվազագույն կենսաթոշակ և այլն):

10) ընտանիքի ամրապնդմանը և հաշմանդամների՝ հասարակության մեջ լիարժեք ինտեգրմանն ուղղված պետական քաղաքականության մշակումը,

11) ծնելիության մակարդակի բարձրացման, խթանման ծրագրի իրականացումը:

3.2. Տնտեսական անվտանգության ապահովման համակարգի ձևավորման մոտեցումները

Երկրի տնտեսական անվտանգության ապահովումը պահանջում է անվտանգության սպառնալիքների գնահատման և ազգային շահերի պաշտպանության համար արդյունավետ համակարգի ձևավորում: Վերջինիս հիմքում

պետք է դրված լինի տնտեսական քաղաքականության բոլոր տարրերի փոխկապակցվածության և հավասարակշռության ապահովման սկզբունքը: *Տնտեսական անվտանգության* համակարգի գլխավոր նպատակը պետք է լինի տնտեսական սպառնալիքների կանխումը: Այն իր մեջ պետք է ներառի.

- օբյեկտիվ և համակողմանի մոնիտորինգի և կանխատեսման միջոցներ, որոնք հնարավորություն կտան որոշել տնտեսական անվտանգության սպառնալիքները,
- անվտանգության մակարդակը բնութագրող ցուցանիշների սահմանային թույլատրելի նորմաներ, որոնց խախտումը հանգեցնում է անկայունության և բացասական զարգացումների:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի տնտեսական անվտանգության համակարգի արդյունավետ գործունեության մոնիտորինգի ապահովմանը, որը դրա գնահատման ցուցանիշների և շեմային արժեքների փոփոխության դինամիկային հետևող տեղեկատվական և վերլուծական կառուցակարգ է: Անշուշտ, ինչպես այդ համակարգի գործունեությունը, այնպես էլ տնտեսական անվտանգության ապահովումը ենթադրում է համապատասխան կադրային, իրավական, ֆինանսական, տեղեկակատվական, գիտական և այլ տեսակի ռեսուրսներով ապահովվածություն:

Հանրապետության տնտեսական անվտանգությունը պետք է ապահովվի այդ նպատակով մշակված ռազմավարության հիման վրա: Տնտեսական անվտանգության համակարգն, առաջին հերթին, պետք է միտված լինի երկրի տնտեսական ինքնիշխանության, տնտեսական զարգացման կայունության, ինքնազարգացման և առաջընթացի ապահովմանը: Այն պետք է ունենա նաև կոնկրետ նպատակային ուղղվածություն և ստեղծի նպաստավոր միջավայր՝ գիտականտեխնիկական և տեխնոլոգիական ներուժի զարգացման, ազգային տնտեսության կառուցվածքային և նորարարական վերափոխումների իրականացման համար, ստեղծի անհրաժեշտ նախադրյալներ, պայմաններ և խթաններ ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար, կանխի ֆինանսական, նյութական և տեղեկատվական ռեսուրսների, մտավոր և մարդկային կապիտալի արտահոսքը երկրից, հաղթահարի կոռուպցիան ու տնտեսության ստվերային հատվածը, նպաստի ներդրումների և նորարարության

համար բարենպաստ կլիմայի ստեղծմանը, արտադրության արդիականացմանը, բնակչության մասնագիտական, կրթական և մշակութային մակարդակի բարձրացմանը:

Պետք է նշել, որ ժամանակակից համաշխարհային տնտեսության պարագայում տնտեսական անկախությունը բացարձակ բնույթ չի կրում: Աշխատանքի միջազգային բաժանումը ազգային տնտեսությունները դարձնում է միմյանց հետ փոխկապակցված: Այս պայմաններում, տնտեսական անկախությունը նշանակում է պետության հնարավորությունը վերահսկել ազգային ռեսուրսները, արտադրության որակի, արդյունավետության այնպիսի մակարդակի հասնելը, որն ապահովում է իր մրցունակությունը, թույլ է տալիս համաշխարհային առևտրի, կոոպերատիվ հարաբերությունների, գիտական և տեխնիկական ոլորտում փոխանակման մեջ հավասարապես մասնակցությունը:

Տնտեսական անվտանգության ապահովման համակարգի հիմնական խնդիրներն են՝ ներքին և արտաքին միջավայրում տեղի ունեցող բացասական փոփոխություններին ժամանակին հակազդելու կարողությունը, իրական մարտահրավերների, տնտեսական անվտանգության ռիսկերի և սպառնալիքների վերաբերյալ տեղեկատվության հրատապության, օբյեկտիվության, ճշգրտության և լիարժեքության ապահովումը, տնտեսական անվտանգության ապահովման կառույցների արդյունավետ օգտագործումը, ապահովելով տնտեսական անվտանգության համակարգի բոլոր ենթահամակարգերի և բաղադրիչների ներգրավում:

Քննարկվող հիմնահարցերի լուծման և երկրում ազգային-տնտեսական անվտանգության խնդիրների իրականացման համար տնտեսական անվտանգության ապահովման պետական ռազմավարությունը պետք է հիմնված լինի երկրի տնտեսական և սոցիալական զարգացման երկարաժամկետ կանխատեսումների վրա: Միաժամանակ, անհրաժեշտ է սեղծել տնտեսության պետական կարգավորման այնպիսի համակարգ, որը թույլ կտա ոչ մեծ ռեսուրսների օգտագործմամբ կարգավորել տնտեսական գործընթացները հնարավոր և բարձր արդյունավետությամբ, չեզոքացնել երկրի անվտանգությանն ուղղված տնտեսական սպառնալիքներն ու նոր

մարտահրավերները, ապահովելով տնտեսության անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության գլխավոր բաղադրիչ:

Ընդհանուր առմամբ, տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովման եթե ոչ պարտադիր, ապա հիմնական պայմաններից է տնտեսական անկախության, տնտեսության կայունության և աճի վրա հիմնված տնտեսական անվտանգության ապահովումը: Վերջինս, հանդիսանալով ազգային անվտանգության կարևոր բաղադրիչներից, մեծ դերակատարում ունի երկրի քաղաքական և տնտեսական զարգացման գործում: Տնտեսական անվտանգության համակարգի հիմնական խնդիրներ են հանդիսանում.

- ներքին և արտաքին սպառնալիքների բացահայտումն ու կանխարգելումը, դրանց բացասական ազդեցության չեզոքացման ուղղությամբ համապատասխան միջոցառումների մշակումն ու իրականացումը,
- երկրի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ապահովումը,
- տնտեսական կայուն և որակյալ աճի ապահովմանն ուղղված տնտեսական քաղաքականության մշակումն ու իրականացումը,
- երկրի գիտաարդյունաբերական ներուժի զարգացումը, գիտության և տնտեսության միջև սերտ փոխգործակցության ապահովումը,
- մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը,
- հասարակության բարեկեցության ապահովումը, բնակչության կյանքի որակի բարձրացումը,
- պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակների միջև արդյունավետ համգործակցության ապահովումը,
- միջազգային տնտեսական հարաբերություններում երկրի տնտեսական շահերի պաշտպանությունը,
- երկրում օրինականության ապահովումը, պատասխանատվության արդյունավետ կառուցակարգերի ներդրումը, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի գործնական կենսագործումը,
- այլ պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների ձևավորումը,

- պետության պաշտպանունակության ամրապնդումը և երկրի ռազմական ներուժի ամրապնդումը,
- շրջակա միջավայրի պահպանությունը, երկրի բնական հարստության և ռեսուրսների բանական օգտագործումը,
- միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացների խորացումը, համաշխարհային տնտեսությունում սեփական դիրքերի ամրապնդումը,
- տնտեսության մրցունակության բարձրացումը, արտաքին շուկաներում հայրենական արտադրողների շահերի պաշտպանությունը,
- երկրի ֆինանսական անկախության ապահովումը, պարտքային պարտավորությունների աճի զսպումը,
- արտաքին տնտեսական գործունեության իրավական հիմքերի կատարելագործումը, միջազգային ստանդարտներին դրանց համապատասխանեցումը, հանրապետության ներդրումային գրավչության բարձրացումը, արտաքին տնտեսական կապերի ամրապնդումը,
- տնտեսական գործունեության արդիականացումը, ժամանակակից տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրման խրախուսումը, ներմուծման փոխարինման քաղաքականության ուժեղացումը,
- երկրի արտահանման կարողությունների ընդլայնումը, արտահանող ձեռնարկությունների իրավունքների ու շահերի պաշտպանությունը, արտաքին շուկաներում հայրենական արտադրողների դիրքերի ամրապնդումը,
- արտաքին պարտքի վերակառուցումը, վարկային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, պարտքի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը, հայրենական արժույթի կայունության ապահովումը և այլն,
- տնտեսական գործունեության կազմակերպաիրավական հիմքերի զարգացումը, գործարար միջավայրի բարելավումն ու վարչական միջամտությունների սահմանափակումը և այլն:

Ըստ էության, տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրները գլոբալիզացիայի ժամանակակից փուլում ավելի են խորացել՝ հիմնականում պայմանավորված արտաքին և ներքին մարտահրավերներով: Նման իրավիճակում,

անշուշտ, պետության դերն առանցքային նշանակություն ունի հնարավոր սպառնալիքների բացահայտման և կանխարգելման առումով:

Տնտեսական անվտանգության ապահովման համար հատկապես պետք է կարևորել հետևյալ խնդիրների լուծումը.

- բնակչության քաղաքացիական իրավունքների պաշտպանություն, կյանքի մակարդակի և որակի բարձրացում, սոցիալական կայունության ապահովում,
- քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրների արդյունավետ լուծում՝ ելնելով ազգային և պետական շահերից,
- համաշխարհային տնտեսական գործընթացներում ակտիվ ներգրավվածություն:

Երկրի տնտեսական անկախությունը մեծապես կախված է տնտեսական անվտանգության ռազմավարությունից, որի գերակա ուղղություններ պետք է դառնան.

- տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորումը,
- տնտեսական կայուն և մշտական աճի ապահովումը,
- զբաղվածության առավելագույն մակարդակի ապահովումը,
- աղքատության մակարդակի իջեցումը,
- բյուջեի սղաճի և պետական պարտքի կրճատումը,
- ազգային արժույթի կայունության ապահովումը,
- արժեթղթերի շուկայի զարգացումը,
- տնտեսական մրցակցության պաշտպանությունը,
- ներդրումային միջավայրի բարելավումը,
- սեփականության բոլոր ձևերի պաշտպանությունը,
- ազգային տնտեսության մրցունակության բարձրացումը,
- ազգային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը,
- մտավոր և գիտատեխնիկական ներուժի զարգացումը,
- սոցիալական պաշտպանության ապահովումը,
- բնակչության կենսամակարդակի բարձրացումը և այլն:

Ազգային անվտանգության համակարգը գործում և զարգանում է բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի արտաքին և ներքին գործոնների ազդեցության ներքո: Տնտեսական գործոններ են հանդիսանում աշխատուժը, տնտեսական

ենթակառուցվածքները, բնակչության կյանքի մակարդակը և որակը, ռազմավարական և տեղեկատվական պաշարները, և այլն: Տնտեսական անվտանգության ռիսկերի ներքին աղբյուրներն են՝ քաղաքական, արդյունաբերական և ֆինանսական գործոնների ազդեցության, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների անկայունության հետևանքով գործող տնտեսական կառուցակարգերի խաթարումները: Տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված քաղաքականության հիմնական նպատակն է՝ վերացնել կամ հակազդել բացասական բնույթի գործոններին, կանխել կամ նվազագույնի հասցնել տնտեսությանը վնասելու հնարավորությունը, բացահայտել տնտեսական հավասարակշռությունը և աճի ռեզերվները: Տնտեսական անվտանգության հիմնական սկզբունքներն են՝ օրենքի գերակայությունը, անհատի, հասարակության և պետության անհատական և փոխադարձ պատասխանատվության ապահովումը տնտեսական անվտանգության ոլորտում:

Ռազմավարության ձևավորումը և տնտեսական անվտանգության համակարգի կառուցումը, ինչպես նաև ազգային անվտանգությունը, որպես իր բոլոր բաղադրիչների ամբողջություն, պետք է հիմնված լինի մեթոդաբանական մոտեցման վրա, որպես համակարգի հիմնական ֆունկցիոնալ բաղադրիչներ դիտարկելով տնտեսական անվտանգության սպառնալիքները, պաշտպանության սուբյեկտներին և օբյեկտներին, երկրի կենսական շահերը: Տնտեսական անվտանգությունը պետք է ապահովվի միասնական պետական քաղաքականության միջոցով՝ հիմնված այդ նպատակով մշակված ռազմավարության և մարտավարության ու դրանցից բխող միջոցառումների վրա: ***Տնտեսական անվտանգության ռազմավարությունը*** պետք է նախատեսի տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարական նպատակների և խնդիրների, դրանց իրականացման համար գործունեության ուղղությունների, ինչպես նաև համապատասխան միջոցների և ռեսուրսների օգտագործման տեսակների և մեթոդների ամբողջությունը՝ իրական և պոտենցիալ սպառնալիքների չեզոքացնման և զսպման համար: Ինչ վերաբերում է ***մարտավարությանը, ապա այն բխելով ռազմավարությունից, միաժամանակ պետք է հաշվի առնի*** ներքին և արտաքին սպառնալիքների և դրանց դրսևորման եղանակների փոփոխությունները: Տնտեսական անվտանգության ռազմավարությունը պետք է ուղղված լինի, առաջին հերթին,

արտադրության, բնակչության, էներգետիկ, արտաքին տնտեսական, ներդրումային և ինովացիոն, պարենային, սոցիալական, ֆինանսական, բնապահպանական, տեղեկատվական, ռեսուրսային և այլ ուղություններով անհրաժեշտ ներուժային մակարդակի ապահովմանը: Անշուշտ, դա պետք է իրականացվի ազգային անվտանգության ընդհանուր կոնցեպցիայի շրջանակներում և հանդիանա երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր ուղություններից, որի հիմնական գերակայություններն են՝ կայուն տնտեսական զարգացումը, բնակչության բարեկեցության բարելավումը, նրա իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև, ազգային անվտանգության և երկրի պաշտպանության մակարդակի բարձրացումը:

Անվտանգության սահմանման տեսանկյունից հատկապես կարևորվում է կենսական շահերի հասկացությունը, որոնք ապահովում են անհատի, հասարակության և պետության զարգացման հնարավորությունը: Հիմնական չափանիշը, ըստ որի շահերը կարող են դառնալ կենսական, դրանց համապատասխանությունն է անվտանգության օբյեկտների առաջանցիկ զարգացման պայմաններին և հնարավորությանը: Ընդ որում, պաշտպանության են ենթակա ոչ բոլոր շահերը, որովհետև նրանք իրենց բովանդակությամբ կարող են հակասել միմյանց: Անձի հետաքրքրությունները կարող են չարտացոլել հասարակության և պետության շահերը, ճիշտ այնպես, ինչպես հասարակության որոշ հատվածների շահերը կարող են ուղղվել անհատի և պետության շահերի դեմ: Հետևաբար, պաշտպանության պետք է ենթակա լինեն անհատի, հասարակության և պետության համար կենսական շահերը:

Ընդհանուր առմամբ, շուկայական տնտեսությունը ենթադրում է մի շարք պայմանների ապահովում, առանց որի տնտեսական համակարգի բնականոն գործունեությունը բացառվում է: Այդ առումով, յուրաքանչյուր պետության զարգացումը ենթադրում է տնտեսական անվտանգության ապահովում և այդ ուղղությամբ համապատասխան միջոցառումների մշակում և հետևողական իրականացում, քանի որ այն հանդիսանում է երկրի կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալը: Երկրի քաղաքական և տնտեսական համակարգերի բնականոն գործունեության

ապահովման համար չափազանց կարևոր նշանակություն ունի անվտանգության անհրաժեշտ մակարդակի առկայությունը: Այդ բաղկացուցիչների շարքում հատկապես կարևոր է տնտեսական անվտանգության դերը, որից ուղղակիորեն կախված է տնտեսական համակարգի գործունությունը, հետևաբար նաև տնտեսության զարգացումը: Ընդ որում, շուկայական հարաբերություններին անցման փուլում երկրի տնտեսական անվտանգության ապահովման հետ կապված հարցերը ձեռք են բերում առանձնահատուկ կարևորություն: Վերջինս, ակնհայտորեն, յուրաքանչյուր պետության կարևորագույն գործառույթներից մեկն է, որի բովանդակությունը շարունակաբար փոխվում է՝ կախված պետության և հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման աստիճանից, տվյալ ժամանակաշրջանում առկա արտաքին և ներքին պայմաններից ու բազմաբնույթ գործոններից: Տնտեսական անվտանգությունը հանդիսանում է երկրի կայուն զարգացման հիմնական նախադրյալներից մեկը, առանց որի, գրեթե բացառվում է երկրի տնտեսական համակարգի բնականոն գործունեության հնարավորությունը: Հատկապես շուկայական հարաբերություններին անցման փուլում գտնվող երկրների, և մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար, տվյալ հիմնախնդրի լուծմամբ է առավելապես պայմանավորված տնտեսության զարգացումը և պետական ու հասարակական կյանքում գոյություն ունեցող բազմաբնույթ խնդիրների արդյունավետ լուծումը: Այդ առումով, պետք է նշել, որ տնտեսական անվտանգության ոլորտում պետական ռազմավարությունը պետք է հիմնվի երկրի տնտեսական և սոցիալական զարգացման բազմատարբերակ կանխատեսումների վրա՝ հաշվի առնելով հնարավոր զարգացումները և դրանց հետևանքները: Միաժամանակ, անհրաժեշտ է ձևավորել տնտեսության պետական կարգավորման արդյունավետ համակարգ, որը թույլ կտա նվազագույն կորուստներով և առավելագույն արդյունավետությամբ կարգավորել տնտեսական գործընթացները, ապահովել երկրի տնտեսության անվտանգությունը, չեզոքացնել կամ վերացնել երկրի անվտանգությանն ուղղված հնարավոր սպառնալիքները և այլն: Այդ ուղղությամբ պետական քաղաքականության մշակումը և իրականացումը, նախ և առաջ, ենթադրում է տնտեսական համակարգում գոյություն ունեցող հիմնախնդիրների բացահայտում, դրա վրա ազդող գործոնների գնահատում և տնտեսական անվտանգության

ապահովման նպատակով համապատասխան կառուցակարգերի ներդրում: Չնայած նման կարևոր նշանակությանը, մինչև այժմ հանրապետության տնտեսական անվտանգության համապատասխան հայեցակարգի, ծրագրերի, իրավական ու ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների մշակման ուղղությամբ որոշակի քայլեր չեն ձեռնարկվել: Նախկին պլանային համակարգի պայմաններում հանրապետությունը ներգրավված էր անվտանգության միութենական համակարգի մեջ և անկախության ձեռք բերումից հետո երկիրը դուրս մնաց այդ համակարգից: Փաստորեն, զարգացման ներկա փուլում անհրաժեշտ հրամայական է դարձել հանրապետության տնտեսական անվտանգության ապահովումը և համապատասխան օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորումը: Այդ առումով, հրատապ է տարբեր բնույթի վտանգներից տնտեսության պաշտպանության պայմանների, չափանիշների ու ցուցանիշների, կազմակերպական եղանակների ու կառուցակարգերի համակարգի մշակումը, ազգային պետական շահերի և տնտեսական անվտանգության ապահովումը: Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետությունում տնտեսական անվտանգության մշակման ու իրականացման ռազմավարությունը պետական իշխանության հիմնական խնդիրն է, որը պետք է իրականացվի գործադիր իշխանության կողմից: Միաժամանակ, ոչ պակաս կարևոր է նշված ռազմավարության իրականացման նկատմամբ մշտադիտարկման համակարգի առկայությունը, որը մեր երկրում կարող է իրականացվել ազգային անվտանգության խորհդի կողմից: Դա, մեր կարծիքով, հնարավորություն կտա ձևավորել երկրում տնտեսական անվտանգության ապահովման արդյունավետ համակարգ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա կարելի է անել մի շարք հետևություններ ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Իրականացված վերլուծությունների և ուսումնասիրությունների ամփոփ արդյունքները արտացոլված են հետևյալ առավել հատկանշական եզրակացություններում.

1. Ազգային անվտանգությունը տվյալ երկրի Սահմանադրությամբ, օրենքներով և իրավական այլ ակտերով երաշխավորված պետական շահերի պաշտպանությունն է, որի նպատակն է անհատին, հասարակությանը և պետությանը զերծ պահել արտաքին և ներքին վտանգներից: Այդ առումով, պետության կենսական ու առաջնային շահերն են՝ տարածքային ամբողջականության և բնակչության բնականոն վերարտադրության ապահովումը, նրանց բարեկեցության բարձրացումը և առողջության պահպանումը, ինչպես նաև մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, զարգացման համար կայուն երաշխիքների ստեղծումը և այլն: Այլ խոսքով, անվտանգությունը՝ դա անհատի, հասարակության և պետության արտաքին և ներքին վտանգներից ու սպառնալիքներից պաշտպանվածության վիճակն է, որը հիմնվում է դրանց բացահայտման, կանխարգելման և չեզոքացման համար իրականացվող նպատակաուղղված համալիր գործողությունների վրա: Այս տեսանկյունից, անվտանգության ռազմավարության հիմնական խնդիրը պետք է կայանա այնպիսի պայմանների ձևավորման մեջ, որոնք երկարաժամկետ հատվածում կապահովեն հասարակության կայուն առաջընթացը և տնտեսության արդյունավետ զարգացումը:

2. Անվտանգությունը կարելի է դիտարկել մի քանի ասպեկտներով: Առաջին՝ որպես անվտանգության օբյեկտների (անհատի, հասարակության, պետության) նորմալ կյանքի համար վտանգների բացակայություն, երկրորդ՝ սպառնալիքների դեպքում հուսալի պաշտպանություն, երրորդ՝ սպառնալիքը կանխելու և հաղթահարելու կարողություն: Անվտանգությունը մի վիճակ է, որի դեպքում ապահովված է օբյեկտի, երևույթի, գործընթացի, դրանց գոյության, գործելու և զարգանալու պաշտպանությունը

ներքին և արտաքին սպառնալիքներից: Վերջիններիս դիմակայելու և զարգանալու պետության, հասարակության և անհատի կարողությունը բնութագրում է ազգային անվտանգությունը: Այն մի այնպիսի վիճակ է, երբ ապահովված է ազգային շահերի պաշտպանությունը արտաքին և ներքին սպառնալիքներից և որը թույլ է տալիս ապահովել հասարակության և պետության կայուն զարգացումը:

3. Տնտեսական անվտանգությունը բազմակողմանի, բազմաֆունկցիոնալ, բազմամակարդակ և համակարգային կատեգորիա է և բնութագրվում է անձի, հասարակության և պետության կենսական շահերին համապատասխանելիությամբ և տնտեսական հարաբերությունների համակարգի օպտիմալ գործունեության անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ: Այն ենթադրում է պետական իշխանության ինստիտուտների կողմից մի շարք միջոցառումների իրականացում տարբեր մակարդակներում անվտանգության ապահովման ուղղությամբ: Այն պետք է ապահովվի միջազգային, մակրոտնտեսական, ճյուղային, տարածքային և տնտեսավարող սուբյեկտների մակարդակով: Տնտեսական անվտանգությունը ենթադրում է հասարակության կենսական շահերի պաշտպանության, հնարավոր սպառնալիքների բացահայտման և դրանց կանխարգելման նպատակով ազգային տնտեսության բնականոն կենսագործունեության պայմանների ստեղծում ու ամրապնդում: Երկրի տնտեսական անվտանգությունը, մի կողմից, գերհամակարգ է, որը բաղկացած է տնտեսական անվտանգության տարբեր ոլորտների մի քանի համակարգերից (որոնք ունեն իրենց ներքին կառուցվածքը և բաղկացած են միմյանց հետ ուղիղ և հետադարձ կապերով փոխկապակցված տարրերից), իսկ մյուս կողմից, դրանք միջազգային տնտեսական անվտանգության համակարգի ենթահամակարգ են, որն իր հերթին միջազգային անվտանգության գերհամակարգի մաս է կազմում:

4. Տնտեսական անվտանգության ապահովման կարևոր ուղիներից մեկը արդյունավետ ներդրումային և ինովացիոն քաղաքականության մշակումն ու իրականացումն է: Ըստ էության, դրանից է հիմնականում կախված երկրի տնտեսության մրցունակությունը և տեղը համաշխարհային տնտեսության մեջ: Այս տեսանկյունից, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները պետք է նպաստեն նորարարությունների զարգացմանը, ինչն, իր հերթին, մեծապես պայմանավորում է

ազգային տնտեսության զարգացման աստիճանը և որակը: Միաժամանակ, տնտեսության ներդրումային գրավչության բարձրացումը և գործարար միջավայրի բարելավումը որոշիչ նախադրյալ են հանդիսանում ներդրումների ներգրավման համար: Այս համատեքստում հատկապես կարևորվում է այնպիսի քայլերի իրականացումը, ինչպիսիք են մարդկային կապիտալի զարգացումն ու արդյունավետ օգտագործումը, ինովացիոն գործունեության իրականացմանը նպաստող ենթակառուցվածքների զարգացումը, նորարարական գործունեության նկատմամբ հարկման մեղմ պայմանների սահմանումը, փոքր և միջին բիզնեսին աջակցությունը և այլն: Տնտեսական անվտանգության տեսանկյունից հատկապես կարևորվում է տեխնոլոգիական ճեղքվածքի հաղթահարումը և պետության ներդրումային ու ինովացիոն անվտանգության ապահովումը, ինչը կստեղծի նպաստավոր պայմաններ տեխնոլոգիական բազայի և ազգային ինովացիոն համակարգի զարգացման, ազգային տնտեսության գերակա ոլորտների արդիականացման և տնտեսության ներդրումային գրավչության բարձրացման համար:

5. Տնտեսական անվտանգությունը տնտեսության այնպիսի վիճակ է, որն ապահովում է երկրի առաջադիմական զարգացման բավարար մակարդակ՝ արտաքին և ներքին սպառնալիքներից ու բացասական ազդեցություններից իր տնտեսական շահերի պաշտպանության ու անկախության ապահովման նպատակով: Նման պայմաններում պետությունը ունենում է լայն հնարավորություններ ինքինիշխան կերպով, առանց արտաքին ազդեցությունների, որոշել տնտեսական զարգացման համար նախընտրելի ուղիները և ձևերը: Այն ոչ միայն ազգային շահերի պաշտպանության կարողությունն է, այլև պետական իշխանության պատրաստակամությունն ու հնարավորությունը՝ ստեղծելու կառուցակարգեր տնտեսության զարգացման, հասարակության սոցիալ-քաղաքական կայունության պահպանման համար: Միայն այդ դեպքում է դառնում հնարավոր մարդու, հասարակության և պետության շահերի պաշտպանությունը: Անշուշտ, ազգային անվտանգության վիճակը կախված է պետության կենսունակությունից, տնտեսության զարգացման աստիճանից, կառավարման համակարգի արդյունավետությունից և մրցունակությունից:

6. Պետության տնտեսական անվտանգությունը հիմնականում որոշվում է երկրի ներսում սոցիալ-տնտեսական հարաբերությունների և արտադրողական ուժերի զարգացման աստիճանով, տնտեսությունում նորագույն տեխնիկայի և արդիական տեխնոլոգիաների առկայությամբ, արտադրական նորարարությունների ինտենսիվությամբ և այլն, իսկ երկրից դուրս՝ միջազգային իրադրությամբ և արտաքին տնտեսական հարաբերություններով: Ներքին անվտանգության վրա հիմնականում բացասական ազդեցություն են ունենում արտադրության անկումը, գործազրկության աճը, մենաշնորհների և ստվերային տնտեսության առկայությունը, կոռուպցիայի բարձր մակարդակը և նմանատիպ այլ երևույթներ, որոնք հասարակության մեջ առաջացնելով բարոյական և հոգեբանական լարվածություն, իրենց հերթին, հանգեցնում են ազգային անվտանգության կայունության խախտման: Այդպիսի իրավիճակներում տնտեսական ներքին սպառնալիքները հեշտությամբ կարող են վերածվել նաև արտաքինի, ինչն ուժեղ պետության հետ տնտեսական հարաբերությունների գործընթացում՝ միջազգային տնտեսական ինտեգրացիայի պայմաններում, կարող է հանգեցնել ազգային տնտեսության անկախության կորստի:

7. Տնտեսական անվտանգության սպառնալիքներն իրենցից ներկայացնում են մի շարք պայմանների և գործոնների համախումբ, որոնք խոչընդոտում են երկրի տնտեսական շահերի իրականացմանը՝ առաջացնելով տնտեսությանը վնաս պատճառելու հնարավորություն: Այս տեսանկյունից, սպառնալիքների գնահատման համար կարևոր է վերլուծել երկրի տնտեսական ներուժի կրճատման վրա ազդող գործոնները որոշակի ժամանակահատվածի կտրվածքով: Ընդ որում, պետք է տարբերակել տնտեսական անվտանգության ինչպես իրական, այնպես էլ պոտենցիալ սպառնալիքները, որոնք կարող են հանգեցնել տարբեր տեսակի ճգնաժամային իրավիճակների առաջացմանը և կենսագործունեության անբարենպաստ պայմանների ձևավորմանը: Հետևաբար, տնտեսական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել սպառնալիքների բազմակողմանի վերլուծություն:

8. Հասարակական հարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության սպառնալիք են ստեղծում տնտեսական, սոցիալական, կազմակերպական, իրավական և պետական կարգավորման այլ

ոլորտներում առկա իրավիճակով պայմանավորված հասարակական հարաբերությունների քրեականացումը, հանցագործությունների աճը և կոռուպցիան, օրենքի գերակայության երաշխավորման սկզբունքի անտեսումը: Սոցիալական ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության սպառնալիք են ստեղծում հասարակության սոցիալական բևեռացումը, բնակչության աղքատացումը, գործազրկության աճը, բնակչության զբաղվածության ապահովման հիմնահարցը: Բնակչության ֆիզիկական զարգացման և առողջության համար սպառնալիք կարող են դառնալ բնակչության սոցիալական պաշտպանության և առողջապահության համակարգերի անկատարությունը: Սոցիալական ճգնաժամի հետևանք են արտագաղթը, երկրում ծնելիության և կյանքի միջին տևողության անկումը, հասարակության սոցիալական և ժողովրդագրական կազմի ձևախեղումը, աշխատանքային ռեսուրսների՝ որպես արտադրության զարգացման հիմքի նվազումը, հասարակության հիմնական բջջի՝ ընտանիքի թուլացումը, բնակչության հոգևոր, բարոյական և ստեղծագործական ներուժի նվազումը:

9. Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման քայլերի իրականացման համար անհրաժեշտ է լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ազգային շահերի դասակարգումը, անվտանգության ապահովման հիմնական սկզբունքների սահմանումը և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավոր մարտահրավերների կանխատեսումը: Նշված քայլերից հետո անհրաժեշտ է իրականացնել տնտեսական անվտանգության՝

- մակարդակի համակողմանի գնահատում,
- ինստիտուցիոնալ բաղադրիչի ապահովում,
- իրավական հիմքերի ձևավորում,
- ներքին և արտաքին սպառնալիքների բացահայտում,
- անհրաժեշտ համակարգի ձևավորման մոտեցումների մշակում,
- մակարդակի բարձրացման ռազմավարական ուղղությունների որոշում:

10. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը կենսագործունեության բոլոր ոլորտներում արտաքին և ներքին վտանգներից Հայաստանի Հանրապետությունում անձի, հասարակության և

պետության անվտանգության ապահովմանն ուղղված մոտեցումների համակարգի ձևավորման հիմք պետք է հանդիսանա, որը կամրագրի երկրի անվտանգության ապահովման սկզբունքները: Այս համատեքստում որպես հիմնական սկզբունքներ պետք է դիտարկվեն ազգային շահերի առաջնայնությունը, անվտանգության ապահովման հարցում անհատի, հասարակության և պետության փոխադարձ պատասխանատվությունը, տնտեսական անվտանգության ապահովման միջոցառումների միասնականությունը, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, անվտանգության համակարգի գործունեության վերահսկողությունը, օրինականությունը, անկախությունը արտաքին ազդեցություններից, օտար արժեքների և գերակայությունների պարտադրումից և այլն: Հայաստանի Հանրապետությունում որպես ազգային անվտանգության օբյեկտներ պետք է դիտարկվեն մարդու բնական և անօտարելի իրավունքները և ազատությունները, ազգային, հոգևոր, բարոյական և այլ արժեքները, սեփականությունը, սահմանադրական կարգը, շրջակա միջավայրի պահպանությունը, տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը: Ազգային անվտանգության սուբյեկտներ պետք է հանդիսանան պետությունը՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների համակարգով, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, քաղաքացիները:

11. Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը, նախ և առաջ, պետք է հիմնված լինի ազգային շահերի համակողմանի և ամբողջական պաշտպանության վրա: Այն պետք է իրականացվի տնտեսության կայուն զարգացման հիման վրա, ժողովրդավարական քաղաքական համակարգի ներդրմամբ, քաղաքացիական հասարակության կայացմամբ: Ընդ որում, պետք է կարևորել անհատի, հասարակության և պետության շահերի առանձնացումը, որոնք որոշ դեպքերում կարող են միմյանց հետ գտնվել որոշակի հակադրության մեջ: Անհատի շահերը կայանում են սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացման, անձնական անվտանգության ապահովման, կենսամակարդակի բարձրացման, ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման մեջ: Հասարակության

շահերը Հայաստանի՝ իբրև ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության զարգացման, ինչպես նաև ազգային համերաշխության ամրապնդման արդյունքում՝ ժողովրդի մտավոր, հոգևոր և սոցիալտնտեսական վիճակի բարելավման մեջ են: Պետության շահերը Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի, տարածքային ամբողջականության, ինքնիշխանության և քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության, օրինականության և իրավակարգի ապահովման, բարիդրացիական և փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման մեջ են:

12. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման ոլորտում հիմնական խնդիրներն են.

- երկրի պաշտպանության ամրապնդումը, ազգային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների կանխատեսումը, բացահայտումը, կանխարգելումը, հակազդումը և չեզոքացումը,
- արտաքին և ներքին սպառնալիքների կանխարգելման և վերացման ուղղությամբ ծրագրային և օպերատիվ միջոցառումների իրականացումը,
- Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ապահովումը,
- ժողովրդագրական գործընթացների կարգավորումը,
- այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության բարիդրացիական, հավասարակշռված, իրավաահավասար և փոխշահավետ համագործակցությունը,
- երկրի տնտեսության զարգացումը և սոցիալական ուղղվածություն ունեցող տնտեսական քաղաքականության իրականացումը, տնտեսական շահերի պաշտպանությունը,
- գիտատեխնիկական և տեխնոլոգիական կախվածության նվազեցումը,
- մարդու և քաղաքացու անվտանգության, նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովումը,
- պետական և տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործումը, օրինականության ու կարգուկանոնի ամրապնդումը և

հասարակության սոցիալտնտեսական և քաղաքական կայունության ապահովումը.

- երկրի բնապահպանական ու բնօգտագործման վիճակի բարելավումը:

13. Արտաքին տնտեսական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են տնտեսության միջազգային ինտեգրացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության առավել լայն ինտեգրացումը, այլ պետությունների, միջազգային տնտեսական և ֆինանսական կառույցների հետ համագործակցության ընդլայնումը, հայրենական արտադրանքի իրացման շուկաների ընդլայնումը, հայրենական արտադրողների շահերի պաշտպանության ապահովումը, երկրի արտաքին պարտավորությունների կրճատմանն ուղղված հաշվեկշռված տնտեսական քաղաքականության իրականացումը, հեռահաղորդակցային տրանսպորտային և ապրանքափոխադրման ցանցերի շահագործման գործում տարբերակված մոտեցումների կիրառումը, արժույթային կարգավորման և դրա վերահսկողության ոլորտում ներքին շուկայում արտասահմանյան արժույթային հաշիվների կրճատման և կապիտալի անվերահսկելի արտահանման զսպմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը, սպառողների շահերի պաշտպանությունը:

14. Ներքին տնտեսական ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներն են.

- տնտեսական անվտանգության հայեցակարգի մշակումը,
- գիտատեխնիկական, տեխնոլոգիական և արտադրական ներուժի պահպանումը և զարգացումը, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացումը, տնտեսական աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման ապահովումը,
- արտադրության կազմակերպման գործուն կառուցակարգերի ձևավորման և ապրանքների իրացման ու ծառայությունների մատուցման ճանապարհով հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցության առավելագույն

մակարդակի ապահովման նպատակով արդյունավետ և սոցիալական ուղղվածություն ունեցող շուկայական տնտեսության ձևավորումը,

- տնտեսության կառուցվածքի կատարելագործումը, գիտատար և վերամշակման բարձր մակարդակ ունեցող արտադրությունների զարգացումը, ընդլայնված վերարտադրության հիմք հանդիսացող ճյուղերին աջակցությունը, բնակչության զբաղվածության ապահովումը,
- ներդրումային ակտիվության բարձրացումը, դրա պետական պաշտպանության ուժեղացումը, տնտեսության շահերին համապատասխանող բանկային համակարգի ստեղծումը, արդյունաբերության կառուցվածքային բարեփոխումների և կապիտալ ներդրումների ֆինանսավորման նպատակով պետական ծրագրային քաղաքականության իրականացումը,
- մրցունակ ճյուղերի և արտադրությունների առաջանցիկ զարգացումը, գիտատար արտադրանքի շուկայի ընդլայնումը, առաջադեմ տեխնոլոգիաների զարգացումը, հայրենական ձեռնարկությունների մրցունակության բարձրացումը, հայրենական արտադրության հովանավորչությունը,
- գիտության և տեխնիկայի զարգացման առաջնահերթ ուղղությունների ֆինանսական և նյութական ռեսուրսների կենտրոնացումը, գիտատեխնիկական ներուժի զարգացումը, գիտահետազոտական մշակումների արդյունքների օգտագործումն ու հեղինակային իրավունքի պաշտպանությունն ապահովող պետական աջակցության ենթակառուցվածքների ձևավորումը,
- պետության կողմից ձեռնարկությունների զարգացման և մրցունակության բարձրացման համար հավասար պայմանների ստեղծումը, բնակչության բարեկեցության բարձրացմանը, գիտության և կրթության առաջընթացի, հասարակության հոգևոր և բարոյական զարգացմանը, սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված գործունեություն իրականացնող ձեռնարկությունների պետական աջակցությունը,
- մարդու և քաղաքացու սոցիալական պաշտպանվածության համակարգերի ստեղծումը, սոցիալական իրական երաշխիքների պետական ապահովումը, կոլեկտիվ պատասխանատվության և որոշումների ժողովրդավարական ձևով

ընդունման կառուցակարգերի զարգացումը, սոցիալական գործընկերության արմատավորումը:

15. Երկրի տնտեսական անվտանգության ապահովումը պահանջում է անվտանգության սպառնալիքների գնահատման և ազգային շահերի պաշտպանության համար արդյունավետ համակարգի ձևավորում: Վերջինիս հիմքում պետք է դրված լինի տնտեսական քաղաքականության բոլոր տարրերի փոխկապակցվածության և հավասարակշռության ապահովման սկզբունքը: *Տնտեսական անվտանգության* համակարգի գլխավոր նպատակը պետք է լինի տնտեսական սպառնալիքների կանխումը: Այն իր մեջ պետք է ներառի.

- օբյեկտիվ և համակողմանի մոնիտորինգի և կանխատեսման միջոցներ, որոնք հնարավորություն կտան որոշել տնտեսական անվտանգության սպառնալիքները,
- անվտանգության մակարդակը բնութագրող ցուցանիշների սահմանային թույլատրելի նորմաներ, որոնց խախտումը հանգեցնում է անկայունության և բացասական զարգացումների:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀ օրենքներ, նորմատիվային այլ ակտեր

1. Գլոբալ մրցունակության 2016-2017 թվականի ինդեքսում Հայաստանի դիրքի մասին: Տեղեկանք, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն: http://www.mineconomy.am
2. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց: 2013-2014: Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն: Երևան: 2014թ. 114էջ:
3. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն:
4. Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջե:
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016:
6. Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի հաշվետվություն:
7. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջե:
8. Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն:
9. <<Պետական պարտքի մասին>> ՀՀ օրենք:
10. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:
11. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐՔԵՐ և ՀՈԴՎԱԾՆԵՐ

12. Աթոյան Վ. Ազգային անվտանգության հիմնախնդիրներ: «Տնտեսագետ», Երևան, 2014թ. 152 էջ:
13. Աղայան Ա. Ազգային անվտանգություն. հասկացությունները, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2003թ.

14. Ավետիսյան Կ. Տնտեսական անվտանգության համակարգի հիմնական գործառույթները, Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Գիտական հոդվածների ժողովածու, «Անանիա Շիրակացի» Միջազգային հարաբերությունների համալսարան, Երևան, 2017, 1 (24), էջ 192-203:
15. Ավետիսյան Կ. Տնտեսական անվտանգության վրա ազդող գործոնները և հիմնական սպառնալիքները, Ֆինանսներ և էկոնոմիկա 1-2 (197-198), Երևան, 2017թ. էջ 114-116:
16. Ավետիսյան Կ. Տնտեսական անվտանգության ինստիտուցիոնալ ապահովվածությունը, «Այլընտրանք» Գիտական հանդես, Երևան, 2017թ. #1, էջ 85-90:
17. Ավետիսյան Կ. Տնտեսական անվտանգությունը ազգային անվտանգության համակարգում, Լրաբեր ՀՀ ԳԱԱ, Երևան, 2017թ. հ. 1, էջ 165-173:
18. Բոստանջյան Վ., Ավետիսյան Կ. Տնտեսական անվտանգության ապահովումը որպես ազգային անվտանգության գլխավոր երաշխիք, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Երևան, 2017թ., № 2 (46), էջ 9 - 19:
19. Բոստանջյան Վ. Պետության դերը տնտեսական անվտանգության ապահովման գործում: ՀՀ սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները. Գիտական հոդվածների ժողովածու - 8, Երևան, 2006, էջ 323-327:
20. Բոստանջյան Վ. Ազգային անվտանգության ապահովման հիմնական ուղղությունները: Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում: Գիտական հոդվածների ժողովածու, Երևան. 2007թ. էջ 131-140:
21. Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ. Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում: Տիգրան Մեծ, Երևան: 2003թ. 653 էջ:
22. Դարբինյան Ա. Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում, Պետական ծառայություն, Երևան, 2000թ, 302 էջ:

23. Թադևոսյան Զ., Գալոյան Դ. Միջազգային տնտեսական ինտեգրացիա, Տնտ., Երևան, 2006թ. 180 էջ:
24. Թորոսյան Թ. Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի զարգացման հեռանկարները, «Էկոնոմիկա», N 5-6, 7-8, 9-10, Երևան, 1992, 36 էջ:
25. Խաչիկյան Գ., Մանասերյան Թ. Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման տեսագործնական մոտեցումներ, 'Рынок капитала в Армении', N 7, 8 (65-66), 2001թ. Երևան, էջ 21-26:
26. Կարապետյան Կ. Էներգետիկ անվտանգության մակարգակի գնահատման ամփոփ (ինտեգրալային) ցուցանիշը և կանխատեսումները, 2009թ. 21-րդ ԴԱՐ, թիվ 4 (26);
27. Կարապետյան Կ. Հայաստանի դերը հարավացին Կովկասի տարածաշրջանի էներգետիկ անվտանգության ապահովման գործում, 2008թ. 21-րդ ԴԱՐ, թիվ 4 (22):
28. Կարապետյան Կ. Հայաստանը եվ տարածաշրջանային էներգետիկ գործընթացները տեղեկատվական ապահովման համատեքստում, 2009, 21-րդ ԴԱՐ, թիվ 1:
29. Հարությունյան Գ., Սարգսյան Հ., Գևորգյան Ռ., Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, «Զանգակ-97» ՍՊԸ, Երևան, 2017, 139 էջ:
30. Ղանթարջյան Ս., Նորարարությունների կառավարում և մտավոր սեփականության օբյեկտների •նահատում, ԵՊՀ հր., Երևան, 2004, 102 էջ:
31. Ղուշչյան Հ. ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը, Բանբեր Երևանի համալսարանի, 2000թ. **3** (102), էջ 16-26:
32. Մանասերյան Թ. Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր: Երևան, 2014թ. 836 էջ:

33. Մանասերյան Թ., Ավետիսյան Կ. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ներքին և արտաքին մարտահրավերները, «Այլընտրանք» Գիտական հանդես, Երևան, 2016թ. #4, էջ 334-344:
34. Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ. Միջազգային տնտեսական հարաբերություններ: Մաս 2: Երևան 2012թ. 639 էջ:
35. Մարկոսյան Ա. Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ: «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2005թ. 250 էջ
36. Մարկոսյան Ա. Հայաստանը XXI դարի մարտահրավերների առջև, Երևան, 2004թ. 458 էջ:
37. Շահգելդյան Մ. Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2003թ.
38. Սարգսյան Հ., Մարկոսյան Ա. Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները: Երևան 2014թ. 550 էջ:
39. Սաֆարյան Ս. Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2003թ.
40. Սուվարյան Յու. Ռազմավարական կառավարում: Մեթոդաբանությունը և արդի հիմնահարցերը: Տնտեսագետ, Երևան, 1996թ. 150 էջ:
41. Քոթանջյան Հ. Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվ. Ազգ.ռազմավարական հետազոտ.ինստիտուտ, 2008, 180 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

42. Էդուարդ Գագիկի Հարությունյան, *Տնտեսական անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգում,* Ը.00.02- «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և

կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության (140 էջ) սեղմագիր, Երևան, 2008, 26 էջ:

43. Սյունիք Ռուբենի Թադևոսյան, *Քաղաքական համակարգի ինստիտուտները և ազգային անվտանգության կառավարման հիմնախնդիրները /ՀՀ նյութերով/,* Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության (149 էջ) սեղմագիր, Երևան, 2008, 28 էջ:
44. Էդուարդ Գրիգորի Պետրոսյան, *Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության համակարգի կառավարման հիմնահարցերը,* Ը.00.02- «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության (150 էջ) սեղմագիր, Երևան, 2009, 27 էջ:
45. Հրանտ Սերյոժայի Ավետիսյան, *Ազգային տնտեսության անվտանգության խնդիրները համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում (ՀՀ օրինակով),* Ը.00.06 - «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության (133 էջ) սեղմագիր, Երևան, 2009, 22 էջ:
46. Կարապետյան Կարեն Վիլհելմի, *Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները. տարածաշրջանային ռազմավարությունը և անվտանգության հեռանկարները,* Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության (280 էջ) սեղմագիր, Երևան, 2010, 49 էջ:

ՌՈՒՍԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

47. Абалкин Л. Избранные труды: В 4-х томах, т.4, В поисках новой стратегии, М. ОАО “НПО Экономика”, 2000г. 799 стр.
48. Абалкин Л. Экономическая безопасность России: угрозы и их отражение. Вопросы экономики. № 12. 1994г.
49. Аболенцев Ю. Экономическая безопасность России: проблемы, методология и организационно-правовое обеспечение. М.: 2001г. 328 стр.
50. Агапова Т. Методика и инструментарий для мониторинга экономической безопасности региона. Вопросы статистики. 2001г. № 2.
51. Алтухов А. Продовольственная безопасность важный фактор стабильности России. Экономика сельского хозяйства России. 2008г. № 12.
52. Аристотель. Политика. С. А. Жебелева. Азбука-Аттикус. СПб.: 2015г. 352 стр.
53. Атаманов Г. Азбука безопасности. Исходные понятия теории безопасности и их определения. Защита информации. Инсайд. 2012г. № 4.
54. Архипов А., Городецкий А., Михайлов Б. Экономическая безопасность: оценки, проблемы, способы обеспечения. Вопросы экономики N 12, 1994г.
55. Богданов И. Экономическая безопасность России: теория и практика. М.: ИСПИРАН, 2001г. 288 стр.
56. Бухвальд Е., Головацкая К., Лазуренко С., Макроаспекты экономической безопасности: факторы, критерии, показатели. Вопросы экономики, 1999г. N 12.
57. Вечканов Г. Экономическая безопасность. СПб.: Питер, 2007г. 384 стр.
58. Глазьев С. Основа обеспечения экономической безопасности России– альтернативный реформационный курс, Российский экономический журнал 1997г. N 1-2.
59. Глазьев С. Безопасность экономическая. Политическая энциклопедия. М. 1999г. Т. 1. 334 стр.

60. Гончаренко Л. Экономическая и национальная безопасность. М.: Экономика, 2009г. 543 стр.

61. Гордиенко Д. Основы экономической безопасности государства. М.: Финансы и статистика; ИНФРА-М, 2009г. 224 стр.

62. Дзлиев М. Основы обеспечения безопасности России. Изд. Экономика. М. 2003г. 423 стр.

63. Дзлиев М., Романович А., Урсул А. Проблемы безопасности: теоретико-метод. аспекты, ДРУГ, М., 2001.

64. Илларионов А. Критерии экономической безопасности. Вопросы экономики. 1998г. № 10.

65. Козлова А. Экономическая безопасность как явление и понятие. Власть. 2009г. № 1.

66. Казиахмедов Г. Экономика: государственное регулирование и безопасность. М. 2000г. 220 стр.

67. Кваша Ю. Экономическая безопасность Российской Федерации: М. Изд. «Лань», 2001г. 608 стр.

68. Конфуций. Суждения и беседы. Азбука-Аттикус. СПб.: 2015г. 224 стр.

69. Корнилов М. Экономическая безопасность России: основы теории и методологии исследования. М.: Изд-во РАГС, 2010г. 152 стр.

70. Коржов Г. Экономическая безопасность России: внешние связи. М.: Информдинамо, 1996г. 94стр.

71. Колосов А. Экономическая безопасность хозяйственных систем. М. Изд. РАГС. 2006г. 287 стр.

72. Кузнецова Е. Экономическая безопасность и конкурентоспособность. Формирование экономической стратегии государства: монография. ЮНИТИ - ДАНА, 2012г 239 стр.

73. Кулагин В. Современная международная безопасность: учебное пособие, М.: КНОРУС, 2012. С. 17.

74. Логунов А. Региональная и национальная безопасность: уч. пос., ИНФРА, М, 2011, с 89.

75. Макиавелли Н. Государь. Азбука-Аттикус. СПб.: 2015г. 512 стр.

76. Метелев С. Национальная безопасность и приоретиты развития России: социально-экономические и правовые аспекты. Монография. М: 2006г. 296 стр.

77. Михайлов Л. Основы национальной безопасности: Изд. «Академия», М. 2008г. 175 стр.

78. Микрюков В. Обеспечение безопасности жизнедеятельности: В 2 кн., Кн 1: Личная безопасность: М., Высшая школа. 2004 г. 479 стр.

79. Мушкаев И. Государственная стратегия обеспечения безопасности в сфере экономики. М., 2000г. 240 стр.

80. Мышко Ф. Экологическая безопасность: Монография: М., ЮНИТИ-ДАНА. 2003 г. 175 стр.

81. Национальная безопасность. Опалев А. В., Перумов В. С. ЗАО Изд. “Оружие и технологии”, М.: 2010г. 232 стр.

82. Никитина Ю. Международные отношения и мировая политика: Введение в специальность: Учеб. Пособие, Аспект Пресс, 2009. С. 95.

83. Нургалиев Р. Система обеспечения экономической безопасности государства. М.: Российская Академия предпринимательства, 2005г. 165 стр.

84. Лесков М.А. Гомеостатические процессы и теория безопасности, Безопасность N 4, М. 1994г.

85. Татаркин и др. Экономическая безопасность региона: единство теории, методологии исследования и практики. Екатеринбург. 1997г. 240 стр.

86. Олейников Е. Экономическая и национальная безопасность. М.: Экзамен, 2005г. 768 стр.

87. Основы национальной безопасности: уч. пос. [Л.А. Михайлов], М., Изд. центр «Академия», 2008. с. 45.

88. Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, М. ЗАО, 1997, 288 с.

89. Саяпин А. Инвестиционный климат как проявление экономической безопасности региона. Социально-экономические явления и процессы. Тамбов. 2011г. № 3-4.

90. Сенчагов В. К. Как обеспечить экономическую безопасность. Российская Федерация сегодня. № 6. 2007г.

91. Сенчагов В. Экономическая безопасность: геополитика, глобализация, самосохранение и развитие (книга 4-ая), Институт экономики РАН, М. , ЗАО “Финстат информ”, 2002.

92. Сенчагов В. Экономическая безопасность. Производство. Финансы. Банки. Москва, 1998, стр.36.

93. Сизов Ю. Экономическая безопасность региона: регионализация, устойчивость бизнеса, стратегия. М.: Наука, 2004г. 154 стр.

94. Степашин С., Исмагилов Р., Сальников В. Экономическая безопасность России: концепция правовые основы-политика. СПб.: Фонд Университет, 2001г. 282 стр.

95. Прохожев А. Общая теория национальной безопасности. М.: Изд-во, РАГС, 2005г. 344 стр.

96. Райзберг Б. Современный экономический словарь М.: ИНФРА-М, 2005г. 480 стр.

97. Ромащенко Т. Экономическая безопасность национального хозяйства: Теория, методология, формирование в России. Воронеж. 2003г. 213 стр.

98. Экономическая безопасность России: Общий курс. Под ред. В.К. Сенчагова. М.: 2005г. 896 стр.

99. Экономическая безопасность России. Общий курс. Под ред. В.К. Сенчагова. 4-е изд. М.: БИНОМ. 2012г. 815 стр.

100. Экономическая безопасность. Под общ. ред. Л.П. Гончаренко, Ф.В. Акулинина. М.: Изд. Юрайт, 2016г. 478 стр.

101. Урсул А. Переход России к устойчивому развитию. Ноосферная стратегия. М., 1998г. 500 стр.

102. Ярочкин В. Секьюритология: наука о безопасности жизнедеятельности. ,,Ось 89,, М.: 2000 г. 286 стр.

103. Ярочкин В. Основы теории и методологии безопасности- человек, общество, государсво. МАКБП, М. 1998 г. 165 стр.
104. Фирсов В. Меры по устранению угроз экономической безопасности Российской Федерации. Вестник РАГС при Президенте РФ. 2008г. № 2.

ԱՆԳԼԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

105. F. Trager, F. Simone, An Introduction to the Study of National Security and American Society, Teory, Process and Policy. Ed. By Trager F., Kronenberg P., Lawrence, University of Kansas Press, 1973
106. R. Ingleheart, Culture shift in advanced industrial society, Princeton (N, J), Princeton University Press, 1990.
107. Jiang Yong. Economic Security: Redressing Imbalance. China Sacurity, Vol. 3, No 2.
108. Losman D. Economic Security. A National Security Folly? Policy Analysis. No. 409. August 1, 2001.
109. Luciani J. The Economic Content of Security. Journal of Public Policy, Vol. 8 No. 2 (Apr. Jun., 1988).
110. Cable V. What is International Economic Security? International Affairs. Vol. 71. No. 2 (Apr. 1995).
111. Kirshner J. Political Economy in Security Studies aftter the Cold War. Review of International Political Economy. Vol. 5 No 1. Spring 1998.

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

http://www.gov.am/files/docs/1950.pdf:
www.armstat.am
http://www.osf.am/wp-content/uploads/2016/10/Debt_ARM_10102016.pdf
http://consteconom.ysu.am/en/